

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Գ. ՏՄ.ՐԻ ԶՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ 1901 ԹԻԻ 10-11

ԲԱՐԻԶ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն քառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտնազան խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եմէ հոգին չձարգամանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս սխալի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ՆՈՐ ՇԵՆՔ ՄԷ
L'EUROPEEN

ԵՒՐՈՊԱՅԻՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՍ.ԲԱՐՍԻՍԻԱՆ ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

Քաղաքականութիւն, միջազգային իրաւունք, ընկերական խնդիրներ, գրականութիւն,
գեղարուեստ:

Տնօրէն. — Վան Տէր Ֆլուխթ (Լէյա), Շարլ Սենտոպոս (Բարիզ):
Խմբագրապետ. — Ա. Ֆերտինան Էրոլտ:

Այս թերթը որուն առաջին թիւը լոյս պիտի տեսնէ ղեկտեմբերին, պիտի ըլլայ առաջին թերթը որ իբր խմբագրող եւ իբր ընթերցող պիտի ունենայ ոչ թէ միակ ազգ մը, այլ ամբողջ Եւրոպան. ան պիտի ձգտի պատրաստել Եւրոպայի Միացեալ-Նահանգներու կազմուած թեան ղեղեցիկ գաղափարին իրականացումը. պիտի պաշտպանէ Սաղաղութեան դատը եւ հարըստարեալ ազգերու իրաւունքները. մասնաւոր տեղ մը պիտի տայ հայկական խնդրոյն: Խմբագրութիւնը հաճած է մեզի հաղորդել իր յայտագիր-յօդուածին պատճէնը, որուն թարգմանութիւնը կը հրատարակենք այստեղ:

Ամենօրեայ մամուլն այլեւս անցած դարձածին մասին տեղեկութիւն չի տար ընթերցողներուն: Անոնք որ լրագիրները կը վարեն, հետամուտ չեն ճիշդ լուրեր հրատարակելու. չեն իսկ այլայլեր այն լուրերը որ իրենց կը հաղորդուին. չեն ստեր, կը շատանան ճշմարտութիւնը ծածկելով: Այլեւս նպատակներն ամէն բանի վրայ տեղեկութիւն տուող լրագիր մը հրատարակել չէ, այլ ընթերցողին այնպէս կարծեցնել թէ իրեն տեղեկութիւն կը տրուի:

Պատճառն այն է որ լրագրի տնօրէնները գաղափարի մը կամ նոյնիսկ կուսակցութեան մը ծառայողներ չեն. առեւտրական ձեռնարկի մը վարիչներն են: Միայն դրամական շահերն են որ իրենց ընթացքը կը ղեկավարեն:

Կը պատահի երբեմն որ յեղափոխական թերթ մը ճշգրիտ տեղեկութիւն մը հրատարակէ: Այսպէսով է որ հասարակութիւնը մերթ ընդ մերթ ճշմարտութեան բառ մը իմացաւ Հայաստանի ջարդերուն, Ռուսիոյ համալսարանական խռովութեանց, Հարաւային Ափրիկէի պատերազմին, Ֆինլանտական խնդրոյն, Չինաստան զրկուած եւրոպական բանակներուն վրայ: Որովհետեւ այդ լրագիրները զրամի մարդոց ձեռքը չեն միշտ, բայց անոնք ալ գրամագլուխ չունենալով, կանոնաւորապէս տեղեկութիւններ ստանալու եւ բանագէտ խմբագիրներ վճարելու միջոցներէն զուրկ են: Չանոնք խմբագրողները յաճախ աւելի քաջասրտութիւն ունին քան դարգացում. իրենց քով կը պակսին պատմական ու քննադատական այն ծանօթութիւնները որոնցմով միայն կարելի է իրողութեան մը կարեւորութիւնը, տեղեկութեան մը արժէքը դատել: Եւ իրենց մեկնաբանութեանց բուռն ոճը զանոնք անվարկ կը դարձնէ ծանրախոհ մքտերու մօտ:

Այսպէս, հասարակութիւնը, տեղեկատուութեան ամէն կանոնաւոր միջոցներէ զրկուած, իր երկրին մէջ անցածը շատ գէշ կ'իմանայ ու իր սահմանագլխէն անդին կատարուած բաներուն կատարելապէս անգիտակ կը մնայ:

Եւ սակայն, ազգերու միջեւ մտաւորական, վաճառականական, արհեստագիտական յարաբերութիւնները, գրքերու եւ արտադրութեանց փոխանակութիւնը իրենց հետեւանք կ'ունենան տեսակ մը եւրոպական կարծիքի ստեղծումը: Ամէն երկիրներու մէջ, կան մարդիկ որ հասկցած են թէ ազգերը, ինչպէս եւ անհատները, համերաշխ են իրարու հետ, քանի որ քաղաքակրթութեան համալսարանի գործը կը կատարեն, քանի որ ամենքն ալ չան ունին գիտութեան եւ ազատութեան յառաջիմելուն մէջ: Պէտք է որ փոխադարձ համակրութիւն մը զգան իրարու համար: Ամէն տեղ կան մարդիկ որ, այս վերջին տարիներուն մէջ, տառապած ու զայրացած են միանգամայն ժողովուրդներու եւ քաղքենիներու իրաւունքներուն

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅՆԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 10-11

ԳԷՄԻԵՐ

— 0 0 —

Մ Խ Ի Թ Ա Ր

Կեանքը զոր վարեց Մխիթար, նկարագրի ուժը զոր ցոյց տուաւ իր նպատակին հասնելու համար, այնքան մեծ են ու գեղեցիկ որքան Գործը որ, իրմէ հիմնուած, ի կատար հանուեցաւ իր հանձարեղ յաջորդներուն ձեռքովը: Այդ կեանքը մին է մարդկութիւնը պատուող այն հոյակապ դիւցազներգութիւններէն ուր կը տեսնենք մարդ մը, որ միտ-միտակ, իր հոգեկան կտրովէն ուրիշ ուրիշ միջոց ու ղէնք չունենալով, ընկերական, քաղաքական, բնական բոլոր ուժերուն ընդդիմադրութիւնը կը նուաճէ եւ կը յաջողի ոչխնչին աշխարհ մը ստեղծել:

Վհատութեան օրերու մէջ, այնպիսի պահու մը ուր մեր նորագոյն սերունդէն իսկ կը լսենք ձայներ որ մեր ժողովուրդը կ'ուզեն իր ծայրայեղօրէն «տկար» տարր մը ըլլալուն համոզել, որ չեն վարանիր Հայը ներկայացնել իբրեւ թոյլ ու լիկած տիպար մը, «գործի մը սկսելէն առաջ իսկ վհատած», «անվնաս սահմանաւորութեան մը մէջ կծկտած», «անձեռնարէց», «խանութպան», «ստրուկ», «նախապաշարեալ», «տիրացու», եւն, օգտակար է որ մեր

ժողովրդին աչքին առջեւ ղենք պատկերը իրմէ բղխած այն հզօր դէմքերէն մէկուն որոնց գոյութիւնը ինքնին կը բաւէ ապացուցանելու թէ Հայը՝ մեր նորածիլ յոռետեսնե, բուն կարծածին ճիշդ հակառակը՝ մեր երկրագունտին ամենէն ուժեղ ցեղերէն մէկն է, քանի որ ուժերուն ամենէն թանկագինը, բարոյական ուժը ունեցած է:

Չեմ սիրեր անշուշտ այն վնասակար ինքնախաբէութիւնը որով կարգ մը անհատներ կամ ժողովուրդներ իրենց կը վերագրեն յատկութիւններ զոր չունին ու չեն տեսներ թերութիւնները որոնցմով բեռնաւոր են. բայց նոյնչափ անսիրտ կը թուի ինձի, եւ աւելի վնասակար, ինքզինքը միշտ եւ ամէն բանի մէջ գէշ տեսնելու ունակութիւնը. մենք Հայերս սովոր ենք մէկ ծայրայեղութենէն միւսը ցատքելու, — կա՛մ տղայական միամտութեամբ մը մեր ժողովուրդը աշխարհիս աւմենէն հին, ամենէն խելացի, ամենէն ազնիւ, ամենէն փառաւոր ժողովուրդը կը կարծենք, եւ կա՛մ թեթեւ ինքնատեցութեամբ մը մեզ մարդկութեան մրուրն ու ազբը կը փութանք նրկատել: Այս մասին քիչ մը կը նմանինք Յըրանսացիներուն, որոնք նմանօրինակ ձգտումն ունին կա՛մ իրենց աղբը երկինք բարձրացնելու, կա՛մ դետնէ գետին զարնելու: Լաւագոյն էր որ հետեւէինք Անգլիացուց որոնք իրենց

Թերութիւններէն եւ ոչ մէկը կ'անտեսեն, զանոնք անխնայօրէն կը նշանակեն եւ կը ջանան սրբագրել, բայց եւ երբեք իրենց չեն ներեր իրենց ազգին ամբողջութեանը նկատմամբ արհամարհական կամ անարգական ընդհանուր որակում մը տալ եւ ուրիշ առիթ չեն փախցներ անոր իրական մեծութիւնները պարծանքով ծանօթացնելու իրենց նոր սերունդին :

Ճշմարտ է որ ազգերու կեանքին մէջ կան վայրկեաններ ընդհանուր անկումի, մեծ ճգնաժամերու, եզերական յեղաշրջութեանց, վիթխարի աղէտքներու հետեւանքով յառաջ եկած անբարոյացումի պահեր, ուր ազնիւ անհատականութիւններ, դառնացած զիրենք պաշարող վատութենէն, իրենց զայրոյթին ու զզուանքին ձողկը կը ճօճեն իրենց ազգին գլխուն վերեւ, եւ իրաւունք կ'ունենան այդպէս ընելու : Հրէայ մարգարէները արհամարհանքի եւ ցասումի ամենէն անգութ բառերը նետած են իրենց ազգին երեսին նոյն սրտմտութիւնն է որ կ'ունեցնէ անանուն հայ բանաստեղծին տողերը, զոր կը հրատարակենք «Անահիտ»ի այս թիւով : Ու նոյն դառնութիւնն է որ մեր Խորենացիին ներշնչեց այն ահարկու էջն ուր իր առանին ինկած Հայութիւնը յաւիտենական բառերով կը խարանէ : Բայց այդ դառնացածները երբեք իրենց ամբողջ ցեղը չեն պարուրեր համասարած արհամարհանքի մը մէջ, անոր վայրկեանի մը անկումը կ'ողբան՝ միեւնոյն ատեն անցեալին մէջ անոր ունեցած մեծութիւնը յիշեցնելով իրեն, ու զայն այդ անցեալ գեղեցկութեանը վերագարձնելու բաղձանքէն միայն մղուած : Երբայեցի բանաստեղծները պաշտելի քնարերգութիւններ ունին իրենց Սիոնին հինաւուրց փառքը տարփողելու համար, եւ իրենց ժամանակակից «պոռնկացած» երուսաղէմին վերայ թափած անէծքներնուն մէջէն միշտ կ'ընդունըջմարեն ապագայ Սիոնը՝ վերակենդանացած ու աւելի գեղեցկացած : Խորենացիին իր այդ էջը կը դրէ, ոչ թէ «Հայր մատնիչներու ժողովուրդ մը եղած է միշտ եւ պիտի ըլլայ միշտ» ըսելու համար, ինչպէս ըրաւ ատենով Արփիարեան իր Պոլսոյ «Մասիս»ին ամենէն թե-

թեւ ու ամբարիշտ յօրուածներէն մէկուն մէջ, ոչ ալ Հայր ներկայացնելու համար իրբեւ ի ծնէ եւ յաւիտենապէս «վախկոտ, գոհիկ, սահմանափակ, անպատկառ, ցածողի», ինչպէս ըրած էր վերջերս Պ. Վարսամեան «Ժողովրդին համար»ին մէջ՝ տարօրինակ գաղափարն ունենալով հազար արրիէ ի վեր գերութեան մէջ փոտած խեղճ Հայէն աշխարհիս ամենէն ուժեղ ու առողջ ցեղին՝ Անգլիացւոյն արժանիքները պահանջելու : Խորենացիին իր զգուանքը կը «ժայթքէ» իր ժամանակի խտարրալուծուած Հայութեան վրայ, եւ իր ցեղը խորապէս սիրելուն եւ յարգելուն համար է որ այդ ցեղին անկման փուլի մը մէջ մտնելը կսկիծով ու ցասումով կը նկատէ : Այդ էջը արդէն միակն է՝ ամբողջ գրքի մը մէջ, որ դրուած է Հայուն մեծ ազգ մը եղած ըլլալը ապացուցանելու համար, — «Սակայն բազում գործք արութեան ցտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի» : Ու այդ էջն իսկ կը սկսի սա ազնիւ տողերով, «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, հանուրց հիւսիսականացող վեհագոյն» :

Այո՛, մեր ազգին մէջ ալ «գրոց յիշատակութեանց արժանի արութեան գործեր» կատարուած են, եւ այսօր իսկ, հակադակ վիթխարի քայքայումներէ անխուսափելի կերպով յառաջ եկած անբարոյացումի մը որով մեր ժողովրդին մէկ ստուար մասը վարակուած է, մեր ժողովուրդը ցոյց կուտայ հաւաքական եւ անհատական զօրութեան ու ազնութեան նըշաններ, զոր աններելի է անտեսել : Մանաւանդ այսպիսի շրջանի մը, ուր մեր ժողովրդին վրայ ծանրացած գծազդութիւնը շատ աւելի մեծ է եւ անգութ քան իր բարոյական տկարացումներուն գումարը, ոչ միայն սխալ այլ եւ շատ անազնիւ կը նկատեմ ամբողջ Հայութիւնն անարգող բառեր նետել այս խեղճ ժողովրդին երեսին, որուն քով Թերութիւններ գտնուելը չէ որ զարմանալի է, ինչպէս կը դրէ Լինչ, այլ հակառակ այդքան երկարատեւ ծանր գերութեան մը, ազնիւ ու առողջ յատկութիւններու իր մէջ մնացած ըլլալն է որ զարմանքի արժանի է :

Հայ ժողովուրդը «տկար տարր մը» չէ եղած

երբեք, ոչ ալ «գոեհիկ ու աղեղ տարր մը», երբ զայն նկատենք իր ամբողջ գոյութեանը մէջ : Աշխարհակալ ազգի մը մեծազօր աննակա- նութիւնը չէ ունեցած, ինչպէս Հոսոսյեցին, Պարսիկը, Արաբը կամ Թուրքը : գեղեցկագի- տութիւն մը չէ յղացած ու աշխարհիս մէջ տարածած, ինչպէս Յոյնը, կրօնք մը, փիլի- սոփայութիւն մը չէ ստեղծած ու մարդկու- թեան փոխանցած, ինչպէս Հրէան : բայց, թէպէտ դժնդակ ու ցաւագին ճակատագրի մը սահմանուած, Հայը ցոյց տուած է քառոյս- կան կորով ինչպէս քիչ ազգ ցոյց է տուած : պահպանած է իր լեզուն, յամառած է մնալ իր հողին վրայ, իր վանքերուն շուրջը, իր մածին կամ դազկահին կպած, — մինչդեռ Հը- րէան կորսնցուցած է հայրենի լեզուն ու հողը : պահպանած է իր ազգայնութիւնը, մինչդեռ իրմէ շատ աւելի խոշոր ու հզօր ազ- գեր, ինչպէս Ասորեստանցիները կամ Պար- թեաները, ի սպառ ջնջուած անհետացած են : Ասիոյ ու Եւրոպայի յաւիտենական ու անեղ պայքարին մէջ, ան՝ իր նիւթական շահերն արձամարտելով, իր հոգեկան ճգառումներուն հը- պատակելու համար՝ Եւրոպայի կողմը հակած է միշտ եւ ատով միշտ չարչարուած : Հակառակ իր անընդհատական կռիւով ու աղէտքով մը- րըրկայոյզ կեանքին, ան կրցած է ցոյց տալ ստեղծագործ եւ գեղեցկածին ոգի մը, իր հոյա- կապ լեզուին, իր Եկեղեցւոյն սիրուն ինքնա- սըպութեանը, իր մէկ քանի գրական ու ճար- տարապետական հրաշակերտներուն ու իր կը- րօնական վսեմ երաժշտութեանը մէջ, որոնք Հայուն պիտի տան շատ աւելի բարձր դիրք մը մարդկութեան մէջ քան այն որ ունի՝ երբ դուրս ելլեն այն անիրաւ ստուերէն ուր մնա- ցած են մինչեւ հիմա, եւ որոնք կը նախա- հաստատեն այն շատ աւելի կարեւոր գերը զոր Հայը պիտի կարենայ կատարել մարդկային քաղաքակրթութեան մէջ երբ իր ազատ զար- գացմանը հարկաւոր եղող պայմաններուն տի- րանայ : Բայց վերջապէս՝ արտագրած է շարք մը վարդեր, որոնք իրենց մէջ խտացուցած են ցեղին ամենէն ազնիւ ու ամուր յատկութիւն- ները, եւ որոնք, թէեւ մարդկային պատմու- թեան մէջ շատ քիչ ծանօթ կամ բոլորովին

անծանօթ, իրենց ցոյց տուած հոգեկան ու- ժովն աւելի շահեկան են եւ աւելի գեղեցիկ քան կարճ մը ուրիշ ազգերու մեծահոգակ հե- րոսներ որոնք միջավայրի ու ժամանակի ան- հուն առաւելութիւններով նպաստաւորուած, շատ նուազ զոհարերութեան, ճարտարութեան ու մաքառումի պէտք են ունեցած իրենց գործն իրականացնելու համար : Արշակի, Վահան Մա- միկոնեան, Աշոտ Ուորմամ, Աշոտ Երկաթ, Լե- ւոն Ա., Դաւիթ պէկ, եղած են այնպիսի տի- պարներ որ փառքը պիտի կազմէին ո եւ է ազ- գի պատմութեան : Անոնք ի վեր կը հանեն բուն գեղեցկութիւնը հայ նկարագրին, որ կը կայանայ վիթխարի թշնամիներու դէմ իր ինքնութիւնը պահպանելու նուիրուած վիթ- խարի ճիղի մը մէջ : Տաճիկները, որ աշխար- հիս ամենէն հզօր պատերազմական ցեղերէն մէկն եղած են եւ անեղ աշխարհակալներ ար- տագրած են, մէկ մարդ մը չեն տուած որ հա- ւասարի մեր Իսրայէլ Օրիին, որուն ամբողջ կեանքը հրաշալիք մըն է սրատեսութեան, համբերութեան, ճարպկութեան, յարատեւու- թեան, եւ որ միայնակ, խլուրդի թաքուն ու անընդհատական աշխատութեամբ մը, առաջին հիմնադիրը եղաւ ոչ միայն հայկական խնդրոյն, այլ կարելի է ըսել ամբողջ արեւելեան խնդ- րոյն, քանի որ ան բացատրեց Մեծն Պետրո- սին՝ Պարսկաստանի ներքին տկարութիւնը, քանի որ ան մղեց Ռուսերը մահմետական Ա- րեւելքը նուաճելու ու Եւրոպացիներու : Ու չեմ գիտեր թէ ո՞ր արեւելցի աշխարհակալը կրնայ աւելի մեծ նկատուիլ քան մեր Մխիթարը, այդ հոգեկան քաջութեան ու մտաւոր կորովի հերոսը :

* *

Մխիթար(*) կը ծնի 1676ին Սեբաստիոյ մէջ : Տաճիկն ու Պարսկին ապականող, ապուշցնող, փտտեցնող լուծին տակ, Հայը, այդ միջոցին, համատարած տգիտութեան մէջ թաղուած է, ուր մէկ քանի վանքեր հազիւ պղտոր լոյս մը կը պահեն : Նիւթական գերութեան վրայ կ'աւելնայ, Հայուն մէջ, բարոյական գերու- թիւնը, արգիւնք տգիտութեան : Մխիթար

(*) Այս կենսագրական տեղեկութիւնները քաղուած են Յորելեանին առիթով վենետիկ Մխիթարեանց հրատարակած գրքէն :

տղայ հասակէն կը զգայ պէտքը այդ անկուսին զէմ մարտնչելու . կ'ըմբռնէ որ ազգ մը այն ատեն միայն վերնջապէս կը զատապարտուի ջնջուելու՝ երբ քաղաքական կենդանութենէն յետոյ մտաւորական կենսականութիւնն ալ կը կորսնցնէ : Կ'ուզէ վերանորոգել իր ազգը՝ մշտաւոր կեանքը վերարժարժելով անոր մէջ : Բայց դժուարութիւնները շատ խոշոր են . եւ ոչ միայն արտաքին այլ եւ ներքին են անոնք . ստրկացած Հայը, պերսութեան ու տղիտութեան բերած բոլոր թերութիւններովը բեռնաւոր , ինքն իսկ է մեծագոյն արգելքներէն մին իր ուրոյն զարգացման : Ոչ միայն ուսուցանելը դժուար է այդ պայմաններու մէջ , այլ եւ նախ՝ լրջօրէն ուսանիլը : Եւ Մխիթար անոնցմէ չէ որ պիտի ուզէին ուսուցանել՝ ուսանելէ առաջ : Իր ազգը կրթելէ առաջ , կ'ըզձայ ինքն իսկ գիտակից , ամուր , ամբողջական կրթութիւն մը ստանալ : Բայց չ'ուշանար նշմարելու որ իր ազգը , իր տեղական միջավայրը անկարող են տալու իրեն պէս մաքի մը այն ամբողջ սնունդը որուն պէտք ունի : Կը մտնէ Սեբաստիոյ Ս . Նշան վանքը , ուր սարկաւազութեան աստիճանը կ'ընդունի եւ ինքզինքը կը նուիրէ կրօնական ու բանասիրական ուսումնասիրութեանց : Բայց չուտով այդ վանքը իրեն նեղ կուգայ . կ'ուզէ գիտութեան աւելի մեծ վառարանի մը դիմել . կը բաղձայ երթալ Էջմիածին . Էջմիածնայ նուիրակ Միքայէլ արքեպիսկոպոսը Սեբաստիա հասնելով , կ'ընդունի Մխիթարի խնդրանքը եւ կը հաճի զայն հետը տանիլ Էջմիածին . բայց Էջմիածնայ վանքին մէջ փոխանակ զարգացման միջոցներ գտնելու , Մխիթար հոն կը տեսնէ ծառայի մը կեանքը իրեն վիճակուած , ու տգէտ , բռնակալ կղերականներ որ զինքը կը պաշարեն . Միքայէլ արքեպիսկոպոսը , նշմարելով Մխիթարի արտասովոր ուշիմութիւնն ու աշխատասիրութիւնը , վտխնալով որ ան չափազանց զարգանալով՝ զինքը կը գերազանցէ , անոր կ'արգիլէ կարգալ բարձր գաղափարներ պարունակող գրքեր , զայն կը բռնադատէ ցորեկն իբրեւ մշակ արտը աշխատելու եւ գիշերն իբրեւ սպասաւոր իր քովը ամուլ եւ ապուշ տքնութիւններով անցընելու :

Մխիթար , զգուած ու յուսահատ , Էջմիածնէն կը փախչի , ու կ'երթայ Սեւանայ վանքը , յուսալով այնտեղ ձեռք ձգել ինչ որ կը փրկուողէր : Սեւանայ վանքին միաբանութեան մէջ

ալ ուրիշ բան չի նշմարեր բայց եթէ նոյն տղիտութիւնը , նոյն նախանձոտ ու չար ոգին :

Այդտեղ , սակայն , ըստ սիրուն ու յուզիչ աւանդութեան մը Մխիթար կը գտնէ կազդուրիչ ձայն մը , որ կուգայ ոչ թէ իր հայրենակիցներէն , այլ երկնաւոր , մտացածին էակէ մը , Աստուածածնէն . օր մը որ Մխիթար , վհատ հոգւով , կ'երթայ իր ցաւը թափել Սեւանայ Տիրամօր պատկերին սոջեւ , կը կարծէ լսել Աստուածածնին ձայնը որ իրեն կ'ըսէ՝ «Ուզածդ թող ըլլայ» : Այսօրինակ աւանդութիւնները պէտք չէ իմաստակ ժպիտով մը նկատել . անտարակուսելի է որ անոնց մէջ ճշմարտութեան խորունկ բաժին մը կը գտնուի . Մխիթարի պէս արտասովոր ջղայնութեամբ խառնուածք մը , յուսահատութեան գերազգրտուած վայրկեանի մէջ , շատ բնական է որ իրօք կարծած ըլլայ «Լսել» Աստուածածինը , ինչպէս Նարեկացին կարծեց «տեսնել» Աղթամարայ կղզոյն վերեւ՝ Յիսուան իր մօրը գրկին մէջ , եւ այնպիսի պահու մը ուր երկրի բոլոր ձայները զինքը կը ջախջախէին , ապաստանած ըլլայ կազդուրումին մէջ գերեզկրաւոր գաղափարական ձայնի մը , որ , իր հոգիէն իսկ բղխած , եթերին մէջ՝ իր ցնորազգաց ջիղերուն համար՝ վայրկեան մը նիւթականացեր է :

Այս վեհ տեսիլքին ցնցումէն ոգեւորուած , Մխիթար կ'որոշէ Սեւանն ալ թողուլ , ու երթալ դէպ ի անձանօթը , չգիտնալով ո՞ւր եւ ի՞նչպէս պիտի իրագործէ իր իտէալը , շայն վստահ թէ պիտի զայն իրագործէ : Կը մեկնի՝ Սեբաստիա վերադառնալու համար : Ծամբան , Բասենի վանքը կը հանդիպի , ուր կը ջանայ կրթել արեղաները մաքով ու հոգւով , բայց տարրը որուն վրայ կ'աշխատի , ամուլ ու խեղ կը հանդիսանայ , միջավայրը թանձր է եւ թընափ . իր ցանած սերմերը պտուղ չեն տար : Կը ձգէ Բասենն ալ , ու կը դառնայ Սեբաստիա : Փիղիքապէս շատ վստուեցած է , Էջմիածնայ մէջ կրած իր գերիի կեանքը հիւժած է իր մարմինը եւ աչքերը մանաւանդ՝ իր երկայն տքնութիւններէն ալ մաշուած՝ վերջին ծայր տկարացուցած . գրեթէ կոյր է , եւ ահաւոր տանջանքն ունի ուսումնասիրութիւնները շարունակել չկարենալու . դարձեալ , սակայն , կը յամառի իր գործը յառաջ տանիլ . Ս . Նշան վանքը կը մտնէ իբրեւ ուսուցիչ . կը ջանայ իր աշակերաններուն փոխանցել իր հոգին եւ իր ու-

սուսմասիրութեանց արդիւնքը . կը յօրինէ կը-
 րօնական երգեր , զոր կ'արտասանէ անոնց եւ
 զոր անոնք ի դիր առնելով եկեղեցիին մէջ
 կ'երգեն իբրեւ ժամասացութեան երգեր :
 Բայց Մխիթար գոհ չէ ատով . աւելի մեծ ար-
 ցիւնք մըն է որ կ'երազէ ձեռք բերել . ամիսնե-
 րով տառապելէ յետոյ իր կուրութենէն ,
 կը յաջողի վերջապէս բուժուիլ , եւ կ'ու-
 րոչէ հեռանալ Սեբաստիայէն , բարձրագոյն
 միջավայրի մը մէջ ցանկալով կատարելագոր-
 ծել իր զարգացումն , ու կարող դառնալ իր գործը
 կատարելու այնպէս ինչպէս կը բաղձար :

Կ'երթայ Բերիա , ուր կը գտնէ լատին կրօ-
 նաւորներ , որոնցմէ մէկուն , Յիսուսեան Անտոն
 քահանային հետ կը մտերմանայ : Այդ Եւրո-
 պացիները Մխիթարին արժանիքներն ու բաղ-
 ձանքները կը գնահատեն , իրեն կ'ընծայեն այն
 բոլոր օգնութիւնները որոնց պէտքունի զար-
 ցանալու համար , Մխիթար , դառնացած իր ազ-
 գակիցներուն կողմէ գաած բոլոր արգելքնե-
 րէն ու չարութիւններէն , եւ իր ուսումնա-
 սիրութեանց մէջ արդէն ըմբռնած այն մեծ
 նշանակութիւնը զոր ունի Հոռոմ իջրեւ եկե-
 ղեցական ու մտաւորական կեդրոն , փափաք կը
 զգայ Հոռոմ երթալու , որպէս զի կարենայ ըս-
 տանալ այն բարձր զարգացումը որուն ծաբաւ
 է եւ որպէս զի իր երազած գործը կարենայ
 ի գլուխ հանել՝ եւրոպական մեծ ուժի մը վրայ
 կրթընած : Լատին կրօնաւորները կը հակառա-
 կին , խորհելով որ Մխիթար իր երկրին մէջ
 մնալով աւելի մեծ ծառայութիւններ կրնար
 մատուցանել իր ազգին . բայց Մխիթար ան-
 դրդուելիէ որոշմանը մէջ , որովհետեւ համո-
 զուած է որ իր ազգը վերանորոգելու համար
 պէտք է շատ հզօր կուտան մը հիմնել , եւ թէ
 իր երկրին մէջ՝ այդ գոյութիւն ունեցող պայ-
 մաններով՝ ասի անկարելի է . կը ստանայ յի-
 սուսեան Անտոնէն . երկու վկայագիր , մին
 Հոռոմ Յիսուսեանց ընդհանուր արբանջօր ցոյց
 տալու եւ միւսն իր քով պահելու եւ հարկ
 եղած ատեն Կործածելու համար , ու կը հեռա-
 նայ Բերիայէն , Աղեքսանդրիոյ նաւահանգստէն
 նաւ նստելով կը մեկնի զէպ ի Հոռոմ : Ծամ-
 բան կը հանդիպի Կիպրոս , ուր կը ստիպուի
 մնալ , ջերմէ բոնուած : Այս բնական խոչընդո-
 ւոր զինքը կը բռնապատէ յապաղելու իր ծրա-
 գրին իրականացումը : Կը մանէ Սաղամիսի
 հայ վանատունը . խնամուելու համար : Իմանա-
 լով որ Մխիթար կաթողիկէ եկեղեցւոյն համակիր

է , վանականները շատ պաղ , նոյն իսկ անգուլթ
 կերպով կը վարուին իրեն հետ . խարխուլ սե-
 նեակ մը կուտան իրեն առանց կարասիի .
 առանց անկողնի . ոչ մէկ դարման չեն տանիր
 իրեն , քովն այցելութեան իսկ չեն դար . կա-
 թիլ մը ջուր անդամ չեն տար՝ ջերմէն պապա-
 կած խեղճին , որ կը ստիպուի՝ հազիւ քալե-
 լու կարող պարտէլ իջնել ջուր իմելու հա-
 մար . ու ինքզինքը դարմանելու համար ուրիշ
 բան չի գտներ ընելու բայց եթէ պարտէղին ա-
 ւագանին մէջ լողանալ : Վանականները չոր
 հաց մը եւ քանի մը ձիթապտուղ միայն կու-
 տան իրեն իբրեւ ամէն ուտեստ : Եւ սակայն
 հակառակ այդ վայրենիներուն ամբողջ ջան-
 քին , Մխիթար կը յաջողի չմեռնիլ :

Ուժը քիչ մը վրան դալուն , Մխիթար , զուրկ
 ու է միջոցէ՝ կարենալու համար Հոռոմ ուղե-
 ւորութիւնը շարունակել , կ'որոշէ հայրենիք
 դառնալ՝ որպէս զի նորէն միջոցներ հայթայթէ
 իր նպատակն իրագործելու : Շատ մը նեղու-
 թիւններէ յետոյ , ճամբու ծախք մը կը ճա-
 րէ , նաւ կը նստի , ու կը հասնի Սելեւկիա ,
 ուր կը մնայ քիչ մը ատեն , դրամի պակասէն
 անշարժացած . այդտեղ , իր միւս հիւանդու-
 թեանց վրայ որոնք դեռ բոլորովին չեն բու-
 ժուած , կերցաւ ալ կ'աւելնայ , որ , խանդարե-
 լով իր ստամոքսը եւ ո եւ է սնունդի մարտումն
 անհնար դարձնելով , իր արդէն ուժասպառ ա-
 ողջութիւնը ա՛յ աւելի կը քայքայէ : Այդ
 ողորմելի վիճակին մէջ գտնուելով հանդերձ ,
 Մխիթար զէպ ի Բերիա ճամբայ կ'ելլէ , քալե-
 լով , որովհետեւ գրաստ մը վարձելու համար
 պէտք եղած չըրամը կը պակսի իրեն : Հոն , կեր-
 ցաւ կը բուժուի , բայց տենղը կը մնայ վրան :
 Բերիայէն մինչեւ Սեբաստիա ճամբորդութիւնը
 շատ երկար է , եւ վայրկեան մը կը վարանի
 զայն ոտքով կատարելու . բայց ուրիշ ճար
 չկայ . կը շալկէ ճերմակեղէնները , եւ Սեբաս-
 տիա պացող հեծեալ ուղեւորներու հետ ճամ-
 բայ կ'իջնայ : Հեծեալ ուղեւորները կը ձգեն
 զինքը ու կ'երթան : Այլազգի մը , որ նոյն ճամ-
 բէն կ'անցնի բեռնաթափ գրաստներով , կը
 մեղքնայ Մխիթարին վրայ , եւ զայն իր զը-
 րաստներէն մէկուն վրայ հեծցնելով կը տանի
 կը հասցնէ իր նախկին ուղեկիցներուն , որոնց
 հետ՝ հետիոտն՝ կը շարունակէ ճամբորդու-
 թիւնը մինչեւ Սեբաստիա :

Մտղական տան մէջ խնամուելով քիչ մը
 իր առողջութիւնը կազդուրուելուն պէս , Մը-

խիթար կը վերսկսի գործել . հայրենի երկրին տեսքը , ազգակիցներու հետ կենակցութիւնը զինքը կը մղէ Հոսմ երթալու ծրագիրը մէկզի գնելու եւ նորէն իր հողին վրայ , իրեններուն հետ եւ անոնց մէջ աշխատելու փորձութիւնը կ'ուենայ : Ս. Նշան վանքը կը մտնէ դարձեալ , եւ ինքզինքը կը նուիրէ գրական ու կրօնական աշխատութեանց : Բայց իր մտաւորական գերազանցութիւնը վանքին միաբաններն իրեն թշնամի կը դարձնէ , եւ անոնցմէ մին , Մառուկ անունով , ոչ միայն կը հալածէ ու կը նախատէ զայն ամէն առիթով , այլ եւ օր մը անոր սենեակը կը մտնէ եւ բոլոր ձեռագիր աշխատութիւնները կ'այրէ :

Մխիթարի հմտութեան եւ առաքինի վարքին համբաւը քաղաքին մէջ կը տարածուի՝ հակառակ իր թշնամիներուն չարախօսութեանց . ժողովուրդը կ'ուզէ որ Մխիթարը վարդապետական պաշտօնն ընդունի եւ իրեն հոգեւոր առաջնորդն ըլլայ : Մխիթար , որ ինքզինքը դեռ անարժան կը նկատէր այդ պաշտօնին զոր ամենարարձրը եւ ամենալուսաբեր կը համարէր , երկայն ատեն դիմադրելէ յետոյ՝ կը հաւանի վերջապէս , եւ վարդապետ կը ձեռնադրուի քսան տարեկան հասակին մէջ (1696) :

Այդ վայրկեանէն Մխիթար կուզէ սկսիլ իր ըմբռնած հզանակով միաբանութիւն մը հիմնելու ծրագիրը գործադրելու : Կ'ուզէ հասցնել լրջօրէն վարդացած , բարձր իտէալի մը նուիրուած եկեղեցականներ , եւ անոնցմէ կազմել խումբ մը , որ քաղաքի տեղի , մոլեոստիտութեան եւ անոնցմէ ծագած տղեղ , անճոռնի բարքերուն դէմ պայքարի ու միանգամայն ջանայ հայ եկեղեցին մօտեցնել ու միացնել Հոռոմայ աթոռին (ինչ որ Մխիթար հայ ժողովրդին բարոյական ու նիւթական բարօրութեանը համար օգտակար կը նկատէր) : Իր դասերուն հետեւողներէն մին , Յովհաննէս անուն պատանի մը , փոփաք կը զգայ գործակցիլ իր վարդապետին , եւ կ'որոշէ հոգեւորական վիճակն ընդգրկել : Բայց Յովհաննէսի ծնողքը կը հակառակին իրենց որդւոյն որոշմանը , եւ կատարել հալածանք մը կը սկսին Մխիթարի դէմ , իրենց աջակից ունենալով Մխիթարի բոլոր միւս թըշնամիներն ալ : Մխիթար կը զգայ որ իր գործը ամուր հիմերու վրայ դնելու համար , պէտք է որ հանրածանօթ ու հեղինակաւոր անձնաւորութիւն մը զայն իր հովանաւորութեան

տակ աննէ , կը մտածէ որ լուսագոյն պիտի ըլլար Սերաստիայէն աւելի յարմար ու նըպաստաւոր կեդրոնի մը մէջ հաստատել իր միաբանութիւնը : Կ'երթայ Պոլիս , եւ այնտեղ գտնուող Սաչատուր անուանի վարդապետին կ'առաջարկէ գլուխն անցնիլ իր գործին : Սաչատուր չի հաւանիր : Միեւնոյն ատեն , Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ , Մխիթար իր արտասանած իմաստալից ու ճարտասան քարոզներով կը բազմապատկէ իր անունին շուրջ արդէն կազմուել սկսող հոշակը : Սերաստիայէն Յովհաննէս աշակերտը կը փախչի ծնողքին քովէն ու կուգայ միանալ Մխիթարին . Պոլսէն Յովհաննէս անունով պատանի մը յանձն կ'առնէ նմանապէս ինքզինքը Մխիթարի գործին նուիրել : Բայց Պոլսոյ մէջ ալ իր ծրագիրը մեծ արգելքներու կը բաղխի . Մխիթար իր երկու աշակերտները կ'առնէ եւ կը մեկնի դէպ ի Տրապիզոն , ձամբան անաւոր ալիկոծութեան մը կը հանդիպին , եւ քիչ կը մնայ որ ծովամոյն ըլլան . հազիւ կրնան զիրենք Սինոպ նեաել . անկից Տրապիզոն երթալու դժուարութիւնը տեսնելով , Մխիթար դէպ ի Կարին կ'ուղեւորի ուր քիչ մը ատեն կը մնայ , կը քարոզէ , կը գործէ , բայց այնտեղ ալ չյաջողելով հասնիլ իր նպատակին , նորէն Պոլիս կը դառնայ :

Այդ միջոցին կաթողիկոսներու եւ լուսաւորչականներու միջեւ մուկեցի ատելութիւն մը սկսած է բռնկիլ . կաթողիկոսները կը նախատեն ու կ'արհամարհեն լուսաւորչականները . իսկ լուսաւորչականները կ'ուզեն զանոնք իրրեւ խոտարար ու դաւաճան սաճիկ կատալարութեան պատիժներուն ենթարկել : Մխիթար , կաթողիկոսականներին յարած , բայց սրտով միշտ Հայ , ամէն ճիգ կը թափէ խաղաղարարի , հաշտարարի դեր մը կատարելու համար , այն զեղեցիկ զերը զոր իր յաջորդներուն աշակերտներէն մին՝ պաշտելի Պեշիքթաշլիանը ա'յնքան փայլուն կերպով պիտի կատարէր իրմէ դար ու կէս յետոյ : Իմանալով որ լուսաւորչականները որոշած են կաթողիկոսները կատալարութեան մատնել , Մխիթար Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն խորանէն խաչը կ'առնէ ու եկեղեցւոյն մէջ հաստատած լուսաւորչականներուն մէջ կը նետուի . «Եթէ մտադիր էք կը դոչէ՝ կաթողիկոսները մատնելու , նախ զիս մատնեցէք , ես ալ անոնցմէ եմ» : Մխիթար , ծանօթ իր հմտութեամբը , աշխատասիրութեամբը , ազգասիրութեամբը եւ սգնիւ հոգեով ,

յարգանք կը վայելէ թէ՛ լուսաւորչականաց եւ թէ՛ կաթողիկէներու քով : Կառավարութեան դիմել ուզող լուսաւորչականները իրեն կը պատասխանեն . «Մենք քեզի հետ գործ չունինք . մեր խնդիրը անոնց հետ է որոնք մեր վարդապետները խախտմ կանուանեն եւ մեզ կը նախատեն . դուն ի՞նչ գործ ունիս անոնց հետ» : Մխիթար կը շարունակէ զանոնք համողել որ եղբայրասպան կռիւր դադրեցնեն , մէկ քանի կոպիտ ու անազնիւ կաթողիկէներու համար ամբողջ հայ-կաթողիկ հասարակութիւնը չկործանեն , եւ վէճին մէջ Տաճիկը չմտցունեն . կը յայտնէ որ եթէ յամառին Տաճիկին դիմել , ինքն ալ խաչը ձեռքը կառավարութեան ատեանը պիտի երթայ եւ անմեղները պիտի պաշտպանէ , ու եթէ հարկ ըլլայ՝ յանձն պիտի աւանէ որ իր զլուխն ալ սուրի սակ դրուի . կ'առաջարկէ որ զայրացած լուսաւորչականները խնդիրը Հայոց պատրիարքարանին ներկայացնեն՝ փոխանակ Տաճիկին ձեռքը յանձնելու : Մխիթարի անկեղծ ու արի միջամտութիւնը ապարդիւն չի մնար : Լուսաւորչականները խնդիրը կը ներկայացնեն Պատրիարքին , որ կը յաջողի հաշտեցնել իրարու դէմ գրգռուած երկու տարրերը :

Մխիթարի համբաւը կը մեծնայ հետզհետէ : Իր քարոզներուն ունկնդիրներուն թիւը օրէ օր կը բազմանայ . իր աշակերտները կը շատնան եւ միաբանութեան մը կազմութիւնը օրէ օր աւելի անհրաժեշտ կը թուի իրեն եւ աւելի ալ իրագործելի կը սկսի դառնալ : Այդ մասին իր մտածումները կը յայտնէ իր մտերիմներուն , իր գործին նուիրուած հաւատարիմ աշակերտներուն , վախճալով որ իր ծրագիրը՝ սարաձայնուելով՝ մոլեռանդ ընդդիմութիւններու եւ զայն արմատէն քանդող թշնամութիւններու չընդհարի : Բերայի մէջ կը վարձէ վերջապէս 1701ին տուն մը , եւ հոն կը հաստատէ իր միաբանութիւնը : Բայց , այնքան ճարպիկ մարդ որքան խանդավառ , — ինչպէս ո եւ է մեծ գործիչ , — վարպետ միջոցներ ձեռք կ'առնէ իր նորահաստատ վանատունը վտանգէ զերծ պահելու համար : Մենաստանին կազմատունի մը արտաքին երևոյթը կուտայ եւ իր աշակերտներուն կազմել կուտայ կրօնական զրգեր զոր ինքն իսկ տպագրած է : Երբ այցելու մը գայ , աշակերտները միմայն կազմարարական աշխատութիւններով զբաղած կը գտնէ . եւ ամէն իրիկուն անոնք իրենց տունը կը դառնան ,

իբրեւ գործաւորներ որ օրուան աշխատութենէն յետոյ տուներնին կ'երթան . մինակ մնացած ատեննին , Մխիթար եւ իր աշակերտները իրենց բուն գործովը կը պարապին , — եւ հոտ , այդ խոնարհ անկիւնին մէջ է որ առաջին քարը կը գրուի Շէնքին որ . յետոյ պիտի կանգնուի , ընդարձակուի , ճիւղաւորուի վենետիկ ու վիեննայի վանքերուն մէջ :

Քիչ ատենէն , կաթողիկ Հայերու դէմ հալածանքը կը վերսկսի , այս անգամ աւելի կատաղի քան երբեք : Հիմա Պատրիարքն իսկ է որ հալածանքին գլուխը կ'անցնի : Եփրեմ , նոր Պատրիարքը , թուրք կառավարութեան դիմելով , բանտ դնել , թիարանները զրկել , կախաղան բարձրացնել կուտայ շատ մը կաթողիկ Հայեր . ի վերջոյ , հրաման հանել կուտայ որ Մխիթարն ալ ձերբակալուի : Մխիթար կ'իմանայ վտանգը որ իրեն կը սպառնայ , աշակերտներն իրենք տուները կը ճամբէ , սանը կարասիներն ու գործիքները դրացիներուն կը յանձնէ . կը փակէ ուսումնարանը , եւ Ղալաթիա՝ Յիսուսեանց վանատունը կ'ապաստանի , ու անկից , վանականներուն խորհրդով , կ'անցնի Բերայի Բարուչիներուն վանքը որ Փրանսական զեսպանին ուղղակի հովանաւորութեան տակ կը գտնուի . հոն բաւական ատեն կը մնայ , գաղտնի շարունակելով իր գործը՝ իր անձնուէր աշակերտներուն հետ :

Եփրեմին կը յաջորդէ Աւետիք , որ աւելի կը սաստկացնէ կաթողիկէներու դէմ հալածանքը . Պոլսոյ ինչպէս գաւառներու մէջ , կաթողիկէները հարիւններով բանտ կը նետուին , իրենց ինչքերէն կը զրկուին , կը զլխատուին : Մխիթար կ'ըմբռնէ որ Տաճիկատանի մէջ իրեն անհնար պիտի ըլլայ իր գործն ի զլուխ հանել . կը գառնայ նորէն Եւրոպա երթալու իր առաջին գաղափարին , այժմ ոչ թէ ինչպէս առաջ՝ իր անձնական դարգացման գլխաւորը պատակովը , այլ իր միաբանութիւնը եւրոպական ազատ միջավայրի մը մէջ հաստատելու եւ իր ծրագիրն անկաշկանդօրէն իրականացնելու համար : Պոլիս կը կանչէ իր այն աշակերտները զոր գաւառները զրկած էր՝ քարոզելու , ուսուցանելու , աշակերտներ հասցունելու , եւ՝ որոնք այդ հալածանքի օրերուն՝ չէին կրցած ո եւ է նշանակալից արդիւնքի հասնիլ կը ժողովէ ամենքը Բարուչիներու վանատան մէջ , եւ կը յայտարարէ անոնց թէ որոշած է Եւրոպա փոխադրել իրենց մի-

արանութիւնը որ իրեն նպատակ պիտի ունենար, հայ ժողովրդին մտաւոր զարգացմանը նպաստելու եւ հայ եկեղեցին մօտեցնելու Հոռոմէական եկեղեցւոյն . ու բոլոր իրողութիւնները կը մղեն մտածելու թէ Մխիթար իր ծրագրին երկրորդ կէտին մէջ յաջողութեան սատարէ մը, գիւտանագիտական միջոցէ մը աւելին կը տեսնէր, եւ թէ անկեղծօրէն համոզուած էր որ հայ եկեղեցւոյն Հոռոմայ աթոռին միացումը Հայոց համար օգտակար բան մը պիտի ըլլար: Անշուշտ վէճի կարելի է ենթարկել սա խնդիրը թէ Մխիթար ճիշդ տեսած ու աղէկ ըրած է՝ կաթողիկոսութիւնը նախընտրելով ազգային եկեղեցւոյն եւ նախամեծար համարելով Եւրոպայի մէջ հիմնել իր միարանութիւնը քան իր երկրին մէջ . սակայն բնաւ վէճի կարելի չէ ենթարկել Մխիթարի աղնուութիւնն ու անկեղծութիւնը այդ որոշման մէջ . շատ բնական կը գտնեմ որ Մխիթար, հատուտիւ միտք մը՝ բարձր զարգացման ձգտող, ազգային եկեղեցական շրջանակին մէջ տգիտութիւն ու գոհակութիւն միայն գտած, բարձրագոյն քաղաքակրթութիւն մը ներկայացնող Յիսուսեաններուն հետ շփման մէջ մտնելովը՝ այդ անձերուն զարգացած մտաւորականութեան համար զգացած իր հիացումէն մղուած ըլլայ բնազդական համակրութիւն մը ունենալու այն եկեղեցիին որուն անոնք կը վերաբերէին, եւ այդ համակրութիւնը հետզհետէ իր մէջ համոզում մը դարձած ըլլայ հոռոմէական եկեղեցւոյն իրական գերազանցութեանը: Հաւանական է որ իր այդ համոզմանը մէջ զինքն ամրացուցած ըլլայ նաեւ քաղաքական այն տեսութիւնն ալ թէ հոռոմէական եկեղեցւոյն յարումը Հայոց դատը սերտօրէն պիտի կապէ կաթողիկոս Եւրոպային հետ (որ այն միջոցին ամենահզօր մասն էր Արեւմուտքի) եւ Հայոց քաղաքական վերակենդանացումն ալ պիտի դիւրացնէ: Այս բոլոր տեսակէտներուն ճիշդ կամ անճիշդ ըլլալուն մասին կարելի է կարծիքի տարբերութիւններ ունենալ, բայց այդ բոլորը ոչ մէկ կերպով իրաւունք չի տար որ Մխիթարին այդ որոշումը «ազգադաւ» արարք մը համարուի (ինչպէս ընել չվարանեցան ու մասնք) . իր ազգին բարձրացման այդպէսով աւելի օգտակար ըլլալու համոզումն է որ Մխիթարը մղած է կաթողիկոսութիւնն ընդունելու, ինչպէս որ այժմ իսկ կը ճանչնամ կաթողիկոս

Հայեր որոնք նոյնչափ ազգասէր գիտեմ որչափ ամենէն ազգասէր լուսաւորչական Հայերը եւ որոնք խորապէս համոզուած են թէ հայ ժողովուրդը մինչեւ հիմա ազատած կ'ըլլար իր գերութենէն եթէ ամբողջութեամբ կաթողիկոս եկեղեցւոյն յարած ըլլար: Այդ գաղափարին դէմ շատ բան կայ ըսելու, եւ սա մասնական թէ իր եկեղեցին իր հայրենիքին մէջ անխախտ պահած ըլլալը Հայուն ազգային ինքնութեան պահպանումին զլիսաւոր ստորը եղած է, եւ թէ անխելք բան մը ըրած պիտի ըլլար Հայը եթէ Եւրոպայի ենթադրական օգնութեանը յոյսին համար ինքնապահպանութեան զրական ուժ մը կորսնցնել յանձնառու եղած ըլլար: Միայն՝ աններելի է այդ գաղափարին յարած Հայերը ազգադաւ համարել, երբ այդ Հայերը, օտար եկեղեցիի մը յարելով հանդերձ — զոր արդէն իրենք օտար չեն համարիր, այլ՝ ըստ իրենց՝ բուն հայկականը, Լուսաւորչինը, — իրենց ազգին լեզուն, աւանդութիւններուն, պատմութեանը եւ ապագայի երազներուն հարազատ պաշտպաններ կը մնան: Եւ Մխիթար, թէպէտ կաթողիկոս, ամենէն Հայը եղաւ Հայերուն՝ իր ազգին լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը, ողին ոչ միայն պահպանելու, այլ զարգացնելու, ընդարձակելու, գեղեցկացնելու գործին մէջ իր ցոյց տուած եռանդովն եւ արտադրած արդիւնքովը: Եւ ինչ ալ մտածէ մարդ կաթողիկոս Հայերու այդ կրօնական-քաղաքական տեսութեան հիմունքին մասին, սա անվիճելի է դարձեալ որ Մխիթարի հիմնած միաբանութեան բարոյական ու նիւթական յաջողութեանը տեսակէտով, կաթողիկոսութիւնը ոչ միայն վնասակար չէ եղած, այլ ընդհակառակն անոր բարգաւաճմանն ու տեսականութեանը էական պայմանը կազմած է: Եթէ Մխիթար, լուսաւորչական մտաւորով, փորձէր՝ երկրին ներքին ուժերուն ու պայմաններուն վրայ կրթնելով միայն, հաստատել միաբանութիւնը զոր կ'երազէր, այդ միաբանութիւնը շատ միջակ դեր մը պիտի կարենար կատարել ու երբեք պիտի չունենար այն տեսականութիւնն, արդիւնաւորութիւնն ու փայլը զոր ունեցաւ Մխիթարի ներքին բնազդական մղումին ու արտաքին տիրական պարագաներու ճնշումին հետեւանքով «Եւրոպայի մէջ հաստատուած» ու «կաթողիկոս» միաբանութիւնը:

Այսպէս 1701ին Բերայի Քարուչիներու վանա-
տան մէջ Մխիթար կը «կազմակերպէ» իր
միաբանութիւնը : Առաջին միաբաններն են Հ.
Նղիս Կ. Պոլսեցի , Հ. Յովհաննէս Սերաստացի ,
Հ. Գրիգոր Անթապցի , Հ. Մանուէլ Կ. Պոլսեցի ,
եղբայր Ղազարոս Ակնցի , եղբայր Յովհաննէս
Սերաստացի , եղբայր Ազարիա Կ. Պոլսեցի ,
եղբայր Գարրիէլ Կարնեցի , եղբայր Միքայէլ
Սերաստացի, բոլորն ալ աշակերտ Մխիթարի :
Խորհրդակցութեամբ կ'որոշեն իրենց միաբա-
նութիւնը հաստատել Մորէայի կողմերը : Մխի-
թար իր աշակերտները կը զրկէ այնտեղ , եւ
ինքը զեռ կը մնայ աստե՛ն մը Պոլիս , իր միա-
բանութեան նիւթական զերքն ամրացնելու
համար միջոցներ ճարելու :

Աւետիք պատրիարքը ջանք կը թափէ այդ
միջոցին Մխիթարն իր ճանկն անցնելու . կը
յաջողի Քարուչիներու վանքին վանահայրը
համոզել թէ ինքը կ'ուզէ Հայոց եկեղեցին
Հոռոմայ յիշուին հպատակ դարձնել , բայց ա-
տոր համար անհրաժեշտ է որ Մխիթար գայ
իրեն հետ տեսակցութիւն մը ունենայ : Մխի-
թար, դարանը նշմարելով , կը մերժէ երթալ
Աւետիքին մօտ : Վանահայրը կը պնդէ եւ կը
սպառնայ վանքէն դուրս նետել զինքը եթէ
չերթայ : Մխիթար կը ստիպուի գիշերանց
փախչիլ եւ Ֆրանսացիի մը տունը ապաստա-
նիլ , անկից ալ իր մտերիներէն մէկուն տունը
կը պահուըտի տասնուհինգ օրի չափ ու վեր-
ջապէս , վաճառականի զգեստ հագած, իր երեք
աշակերտներուն հետ՝ որոնք նմանապէս ծըպ-
տուած են՝ կը մեկնի Իզմիր եւ անկից Մորէա,
զրպանը ունենալով չորս հարիւր դահեկան
միայն՝ իբրեւ ամբողջ դրամագլուխ իր միա-
բանութիւնն ապրեցնելու համար :

Մխիթար կը գրիմէ Մորէայի իշխաններուն եւ
ապաստանարան մը կը խնդրէ իր միաբանու-
թեան համար : Իշխանները Մեթոնի մէջ իրեն
հոյ կը շնորհին եւ թոյլտուութիւն եկեղեցի
եւ մենաստան մը կանգնելու . արքունի տու-
ներէն մին ալ իբրեւ առժամանակեայ մե-
նաստան իր արամագրութեանը տակ կը դնեն :
Այսպէս, Մխիթար, որ մինչեւ այդ վայրկեանը
արդէլք ու հալածանք միայն ընդունած էր իր
ազգակիցներէն , աջակցութիւն ու խրախոյս
կը գտնէ Եւրոպացիներէն , առաջին անգամն
իսկ որ անոնց կը գրիմէ : Գործը այլեւս պիտի
կարենայ ուրեմն արմատ կապել եւ ուճանալ ,
քանի որ դժամ է իր նպաստաւոր միջավայրը :

Մխիթար Ս. Անտոն անապատականին հետեւո-
ղութեամբ՝ վանական սահմանագրութիւն մը
կը հաստատէ . եւ իր միաբանութեան անդամ-
ները կը հրաւիրէ զայն կէտ առ կէտ գործա-
դրելու : Կը ջանայ եղբայրական ողին ան-
խախտ հիմերու վրայ գնել անոնց մէջ , բա-
ցարձակ կարգապահութեան մը կը վարձեցնէ
զանոնք , նիւթական , ուսումնական ու առա-
քելական գործերու համար զատ զատ անձեր
կ'որոշէ : Յետոյ , իր այդ հաստատած կանոնա-
գրութեանը բարձր հեղինակութիւն մը տալու
եւ միանգամայն իր միաբանութիւնը Եւրոպայի
կրօնական բարձրագոյն իշխանութեան հովան-
ւոյն տակ գնելու համար , այդ կանոնագրու-
թիւնը կը յանձնէ իր աշակերտներէն Հ. Նղի-
սային : Եւ Հ. Յովհաննէսին որ Հոռոմ տանին եւ
Կղեմէս ԺԱ. պապէն զայն վաւերացնել տան :
Երկու միաբանները կը ներկայանան պապին ,
չատ սնրալիւր ընդունելութիւն կը գտնեն , եւ
կանոնագրութիւնը կը յանձնուի կարտինալ-
ներու քննութեան , թէպէտ անոր վաւերացումը
յուսացուածէն աւելի ուշ ու դժուար ձեռք կը
ձգուի՝ «հայկական» էնթրիկներու պատճառով
որոնք զեռ չեն դադրած Մխիթարը պաշարելէ :

Դժուարութիւններն արգէն զեռ բաղձաղիմի
են Մխիթարի շուրջը : Մխիթար պարտաւոր
է առանց դրամի ամբողջ միաբանութիւն մը
ապրեցնելու հրաջքը գործել : Իրեն նուիրուած
հողը մշակելով ու բերքերը ծախելով տարեկան
փոքր եկամուտ մը կը գոյացնէ . Պոլսոյ եւ գա-
ւառներու Հայերէն օգնութիւն կը խնդրէ , եւ
ոչինչ կ'ընդունի . լուսաւորչականները զինքը
հերձուածող մը կը նկատեն , եւ կաթո-
լիկները՝ հալածանքի ենթարկուած՝ Մխի-
թարի վանքին օգնելու վիճակին մէջ չեն . Մը-
խիթար կը յաջողի գործակալներ գտնել մէկ
քանի գաւառներու եւ մանաւանդ Եւզոկիոյ
մէջ , որոնք ամեն ջանք կ'ընեն դրամ հաւա-
քելու եւ Մխիթարին հասցնելու համար , բայց
չատ քիչ կը յաջողին : Մխիթար կը ստիպուի
տեկոսով դրամ փոխ առնել օտարներէ , եւ
պարտքերու տակ կը ճզմուի , ու այս բոլոր նե-
ղութիւններէն իր առողջութիւնը դարձեալ
քայքայուելով , քիչ կը մնայ նորէն որ կեան-
քը վրայ աայ : Կը բուժուի , եւ կը վերսկսի
գործել : Հակառակ այդ բոլոր տանջանքնա-
րուն ու զրկանքներուն , կը յաջողի մենաստան
մը կառուցանել , իր գծած մէկ յատակագծին
համեմատ : Փափաքելով եկեղեցի մըն ալ շի-

նել, կը դիմէ վերջապէս տեղւոյն իշխան Ան-
 ճելօ Էմոյնի, որ իմանալով այն ազնիւ նպա-
 տակը որուն համար այդ հետաւոր երկրէ եկած
 այդտեղ ինկած օտարականները կ'որորին եւ
 թէ յաճախ օրերով անօթի մնալու ու ցընցու-
 տիներով պարտելու չափ խորունկ աղքատու-
 թեան մը մէջ կը գալարուին, անոնց ցորեն,
 պաքսիմաս կը զրկէ, դրամական օգնութիւն
 կը հասցնէ, եւ կ'աջակցի եկեղեցիին կառուց-
 ման. նոյն իսկ կ'որոշէ որ եկեղեցիին հիմնա-
 դրութիւնը զինուորական հանգէսով կատա-
 րուի. խուռն բազմութեան առջեւ, Մխիթար
 ու իշխանը միասին կը յետեղեն եկեղեցւոյն
 հիմնաքարը, ու նոյն միջոցին զդեակէն զին-
 ւորական փողեր կը հընչեն եւ թնդանօթի
 հարուածներ կ'արձակուին: Քիչ ատենէն շի-
 նուութիւնը կ'աւարտի եկեղեցւոյն, որ նոյնպէս
 Մխիթարի յօրինած յատակադիւն համեմատ
 կը կառուցուի:

Բայց մինչդեռ օտարները թեւ թիկունք
 կ'ըլլան Մխիթարին, իր հայրենակիցները կը
 շարունակեն զինքը եւ իր գործը կատաղա-
 բար հալածել: Եւ նոյն իսկ կաթողիկէ Հայերն
 են հիմա որ զինքը կը հալածեն, նախանձոտ
 գարշելի հոգիներ որ չեն հանդուրժեր որ ի-
 րենցմէ մէկը արտասովոր հոշակ մը ստանայ,
 եզակի գործի մը գլուխն անցնի, եւ կը ցան-
 կան անոր անունը մրտաել ու գործը կործա-
 նել: Եւ զոկիրոյ մէջ խուժք մը հայ կաթողիկ-
 ներ Մխիթարի գործին դէմ փրփականտ
 կ'ընեն, Մխիթարը ներկայացնելով իբրեւ
 բաղդախնդիր մը, կը հալածեն անոր գործա-
 կալը, կ'արգիլեն որ ոչ ոք չօգնէ Մխիթարին,
 սուտ լուրեր հանելով թէ Մխիթարի միաբա-
 նութիւնն արդէն լուծուած է եւ ինքն ալ ան-
 յայտացած: Եւ այդ հրէշներուն պարագլուխ
 կ'ըլլայ նոյն իսկ Մխիթարի նախկին աշա-
 կերտներէն մին... Զոռմի մէջ զտնուող կա-
 թողիկէ Հայերը, այն զգուելի տիպարներէն
 որոնք «կաթողիկէ» ըլլալու էական պայմանը
 կը նկատեն «Հայ ըլլալէ դադրել», Մխիթարի
 մասին այլանդակ զրպարտութիւններ կը հա-
 զորդեն կարտինալներու ժողովին, Մխիթարի
 աղղասիրութիւնը կը ներկայացնեն իբրեւ
 ըմբոստացում մը հռովմէական իշխանութեան
 դէմ, զայն ցոյց կուտան իբրեւ վտանգ մը
 Հայոց մէջ կաթողիկէութեան տարածման հա-
 մար, եւ կը յաջողին միաքը պղտորել կար-

տինալներուն որ չեն վաւերացներ կանոնա-
 գրութիւնը: Բարեբաղդաբար, ազնիւ օտար
 մը կը գտնուի որ կը պաշտպանէ Մխիթարը.
 Կորնթոսի Քարլին արքեպիսկոպոսը որ Մը-
 խիթարի միաբանութիւնը մօտէն ճանչցած էր
 եւ կը գնահատէր անոր արժանիքն ու օգտա-
 կարու թիւնը, կը հերքէ Մխիթարի թշնամի-
 ներունգրպարտութիւնը, եւ կը համոզէ կարտի-
 նալները որ Մխիթարի միաբանութիւնն ի-
 րենց հովանաւորութեան տակ առնեն: Կար-
 տինալները կ'առաջարկեն Մխիթարի որ հոռ-
 մէական եկեղեցւոյ կողմէ ճանչցուած միա-
 բանական կանոնագրութիւններէն մէկն ըն-
 դունի, Մխիթար կ'ընտրէ Ս. Բենեդիկտոսի կա-
 նոնագրութիւնը, որովհետեւ աւ մեր նախ-
 նեաց ձեռքով մասամբ թարգմանուած եւ Հա-
 յոց ծանօթ էր եւ կը պարունակէր աղոյզաւ
 տիրակալութեան պարտքը՝ որ Մխիթարի ա-
 մենէն սիրած գործերէն մէկն էր: 1712ին Մխի-
 թարեան միաբանութեան կանոնագրութիւնը
 վաւերացուած կը զրկուի Հոռմէն Մխիթա-
 րին:

Հազիւ այս յաջողութիւնը ձեռք ձգուած,
 շատ աւելի մեծ դժբաղդութիւն մը կը հասնի
 միաբաններուն զլխուն: Տաճիկները Միթոնը
 կը պաշարեն. Իտալացիք, անկարող դի-
 մադրելու, անձնատուր կ'ըլլան. Մխիթար
 կը ստիպուի այնչափ ճիգով ու տանջանքով
 կանգնած վանատունն ու եկեղեցին ձգել: Եւ
 տաւուածէկ միաբանի հետ վախչիլ, Միթոն
 թողնով միւս եօթը միաբանները՝ որպէս զի
 իրբեւ քահանայ ծառային պաշարուած Իտա-
 լացիներուն:

Մխիթար, ամեն միջոցէ զուրկ, բայց ան-
 վըհաւ, կը վերսկսի ճգնիլ՝ կործանած շէնքը
 վերականգնելու համար: Քիչ մը ատեն Սան-
 Մարթմո թաղին եկեղեցւոյն մօտ տուն մը
 կը վարձէ, եւ հոն կը պատսպարէ իր միա-
 բանները. կը դիմէ Յովհաննէս, Էմօ, Սեպաս-
 թիանօ Մոչենիկօ վենետիկեան սեպուհներուն
 որոնք իրենց աջակցութիւնը կը խոստանան,
 թէպէտ ժամանակն աննպաստ էր. Մերակոյ-
 տին հաստատած օրէնքը չէր թոյլատրեր որ
 վենետիկ մէջ այլեւս կրօնական նոր միաբա-
 նութիւն մը հաստատուի. ատով հանդերձ, Մը-
 խիթարի խնդիրքը չի մերժուիր, միայն իրեն
 կ'առաջարկեն կա'մ քաղաքէն դուրս տեղ մը
 շնորհել վանքը հաստատելու համար, կա'մ նոյն
 իսկ քաղաքին մէջ՝ պայմանով որ Մխիթարի

մահուանէն հետքը տրուած տեղը նորէն տե-
րութեան դառնար: Մխիթար կ'ուզէր մշտա-
տեւ տուն մը հիմնել, եւ որչափ ալ ան-
պատեհ ըլլար քաղաքէն հեռու բնակիլը, ու-
րով եւ պատարագցուներով քիչ մը զը-
րամ պտնելու միջոցէն զուրկ մնալը, կը նախ-
ընտրէ որ նուիրուելիք հողը քաղաքէն գուրս
ըլլայ. կ'որոշէ Ս. Ղազար կղզին, որ լը-
քուած վայրենի տեղ մըն էր ուր բորոտները
կը քաշուէին, եւ կ'առաջարկէ որ զայն իրեն
չնորհեն: Ծերակոյտը Մխիթարի կանոնադը-
րութիւնը երկու աստուածաբաններու քննու-
թեան կը յանձնէ, որոշում մը տալէ առաջ.
զարձեալ Մխիթարի հակառակորդները ջանք
կը թափեն որ անոր խնդրանքը մերժուի,
բայց չեն յաջողիր, Ծերակոյտը կ'որոշէ Մը-
խիթարին շնորհել Ս. Ղազար կղզին, 1717ին
հրովարտակ մը կը հանէ որով այդ կղզին Մը-
խիթարեանց մշտնջենական մենաստանը կը
նշանակուի: Մխիթար եւ իրենները կը փու-
թան կանգնել իրենց վանատունը, որ այլեւս
իրենց յաւերժական բոյնը պիտի ըլլայ եւ ի-
րենց յաջորդներուն ձեռքով պիտի ընդարձա-
կուի մեծապէս:

Անգամ մըն ալ, հակառակորդները Հոռոմայ
մէջ կ'ամբաստանեն Մխիթարը, եւ պապը զայն
Հոռոմ կը կանչէ՝ բացատրութիւն տալու, Մխի-
թար կ'երթայ, խիստ քննութեանէ մը կ'անց-
նի, ամէն հարցմանց կուռայ դոհացուցիչ ու
ճարպիկ պատասխաններ, եւ մեծ համա-
կրութիւն կը շահի պապին ու կարտինաներուն
քով:

Այդ շատ փափուկ կացութիւնը ուր կը
դանուի իր ազգասիրական անխախտ զգաց-
մանց եւ Հոռոմի առջեւ կասկածելի երեւալու
վտանգին միջեւ, չ'արդիւլեր Մխիթարը իր
միաբանութեանը տալու գրոշմ մը, ողի մը, եւ
մէկ քանի էական կանոններ — ինչպէս միա-
բանութեան մէջ ու եւ է օտարազգի չընդու-
նելու կանոնը, — որոնք զայն կը պահեն խո-
րապէս ու յաւիտենապէս «Հայ»:

Այլ եւս արգելքները, զժուարութիւնները,
նեղութիւնները հարթուած են մեծ մասամբ,
հակառակորդները ջախջախուած են, եւրոպա-
կան բարձր համակրութիւններ ամրապէս ա-
պահովուած են, չէնքը վերջնապէս հիմնուած է.
Մխիթար եւ իրենները, թէպէտ եւ դեռ ան-
ձուկ միջոցներով որոնք անհասկնալի մատակար
են կատարուելիք գործին բազմամամբ, ուրիշ

բան չեն ունենար այլ եւս ընելու բայց եթէ
բարձրացումը շարունակել մտաւորական Շէն-
քին զոր կը բաղձային կանգնել:

Հոս ալ, Մխիթար ամէն բան իր ձեռքովն
ըրած է: Այնքան հզօր ու բարձր միտք որքան
ամուր ու ազնիւ նկարագիր, Մխիթար ինքն
խիչ իր անձնական աշխատութիւններովը գե-
տեղած է առաջին քարերը մտաւոր յիշատա-
կարանին զոր Չամչեանները, Բագրատունի-
ները, Ալիշաններն աւարտեցին: Մխիթար
չարագրած է հայերէն լեզուի բառարան մը
(նախատիպը Հայկազեան բառարանին), հայե-
րէնի քերականութիւն մը, Աստուածաշունչի
սպագրութիւն մը (ամենէն կատարեալը, կոկի-
կը մինչեւ այն աստեւ երեւցածներէն), մեկ-
նաբանական աշխատութիւններ՝ եւ հմտու-
թեամբ լեցուն, պարզ, զեղեցիկ ոճով, —
մեկնութիւն ժողովողի, մեկնութիւն Մատ-
թէի, — թարգմանութիւններ եւրոպական
գրքերու (դեռ միայն կրօնական), Ալպերտ մե-
ծի համոտտ Աստուածաբանութիւն, Ռոարիկ-
վեցի Յաղապս հրից ուխտից) եւն — եւ կրօ-
նական բանաստեղծութիւններ, մարտըր, շնոր-
հալի եւ ազնիւ ներշնչումով:

Ըսել չեմ ուզեր անշուշտ թէ Մխիթար իր
մաքին մէջ «ամբողջութեամբ» նախածրագրած
էր ինչ որ երկու դարու մէջ իր վանքը պիտի
արտագրէր, եւ թէ ինքն իսկ կալմաւորած էր
այն «բոլոր» սարքերը որ պիտի յօրինէին իր
յաջորդներուն բովանդակ գործունէութիւնը:
Մխիթարի մտահոգութիւններուն մէջ կրօնա-
կան տարրը շատ մեծ տեղ կը բռնէր, տիրա-
պետող տարրն էր. «կրօնական մտահոգութիւն»
ըսելով կաթոլիկութիւնը Հայոց մէջ տարա-
ծելու տարածութ ձգտում մը չեմ հասկնար,
այլ գուտ կրօնական, «միտոքական» մղումը.
Մխիթար «վանական» մըն էր ամէն բանէ ա-
ռաջ, «Աստուծոյ նուիրուած մը», «ճգնաւոր
մը», իր յաջորդները «արուեստագէտ-հայրե-
նասէրներ» եղան ամէն բանէ առաջ կամ զուտ
գիտուններ: Մխիթարեան միաբանութիւնը
այդ բանը կը պարտի, ոչ այնչափ Մխի-
թարին որչափ միջավայրին ուր զիպուածը
զիրենք նետեց, Վենետիկի գեղարուեստական
ու հայրենասիրական միջնորդան է որ հաս-
ցուց Չամչեանները, Բագրատունիները, Հիւր-
միզները, Ալիշանները, Նարպէյները, Վիէնայի
գիտական միջնորդան է որ կազմեց Գաթրը-
ճեանները, Այտնեանները, Գարաքաչեանները:

եթէ Մխիթարի վանքը Պոլիս տեւէր կամ Մեթոն մնար, անհաւանական է որ ինքնին այդ դեղարուեստական մեծ դարգացմանը հասնէր: Բայց եթէ Մխիթարի կարելի չէ վերագրել ինքն իսկ Վենետիկն իր միաբանութեան իբր յարմարագոյն կեդրոնավայր ընտրելու եւ ատով իր յաջորդներուն կատարելիք գործն ամբողջապէս նախատեսած ըլլալու արժանիքը, կարելի է սակայն հաստատել թէ այն հոգին որ ի յայտ պիտի գար իր յաջորդներուն գործին մէջ՝ իտալական միջավայրին ազդեցութեամբ, արդէն իր սաղմն ունէր սակայն Մխիթարի մտքին մէջ՝ բնայդաբար կազմաւորուած: Մխիթար «ամէն բանէ առաջ վանական մըն էր», բայց կրօնքի ստորուկ մը չէր, քանի որ «ոչ ազդս կրօնքիս կը գոհեմ, ոչ կրօնքս ազդիս» խօսքը գրած է, խօսք մը որ կ'ապացուցանէ թէ իր բոլոր միտքիքականութիւնը զինքը չէր արգիլեր ազգին եւ կրօնքին «տարբեր բաներ» ըլլալն ըմբռնելէ, եւ թէ ինքն արդէն ունէր խորապէս այն «ազգի սէրը» որ իր վանքին նշանաբանը պիտի ըլլար. ատկից զատ, իր այդ կրօնասիրութիւնը, հեռու զինքը ո եւ է գեղեցկատեցութեան առաջնորդելէ, իրեն արգելք չէր եղած որ գեղեցկին, ճաշակաւորին, վայելուչին զգրութիւնն ըմբռնէր Գաղափարի մը տարածման իբրեւ միջոց, — Աստուածաշունչը հրատարակած է մաքուր, կոկիկ տպագրութեամբ, ու «պատկերալարդ» (առաջին պատկերազարդ Աստուածաշունչը զոր Հայերը կ'ունենային), վերջապէս, իր «վանականութիւնը» զինքը չէ արգիլած աշխատութեան եղանակին մէջ գիտական լրջութիւն մտցնելու, եւ այն «մեթոտի սէրը» որուն վրայ կը խօսէի նախորդ յօդուածիս մէջ. հասկըցած է որ ո եւ է գաղափար տարածելու համար, նախ պատրաստելու, յղկելու է արտայայտութեան գործիքը, եւ յօրինած է հայերէն լեզուի բառարան մը եւ քերականութիւն մը: Արուեստագէտ ալ է եղած, քանի որ յօրինած է տաղեր, որոնց մէջ «չունչ» կայ: Իր յաջորդները ուրիշ բան չեն ըրած բայց եթէ «ընդարձակել» իր գործը, արտադրելով տաղեր, քերթուածներ, դիւցազներգութիւններ, ողբերգութիւններ, որոնք այլեւս չեն սահմանափակուի կրօնական զգացումներու արտայայտութեան մէջ (ինչպէս ըրած էր Մխիթար, այլ կը հնչեցնեն մարդկային զգացմանց ամբողջ ստեղծանշարը, եւ թարգմանելով եւրո-

պական գրականութենէն՝ ոչ թէ աստուածաբանական գրքեր այլ բոլոր այն հրաշակերտները որոնք սրբազան են քանի որ գեղեցիկ են:

Ընթերցողը պիտի նկատէ, — եւ քիչ մը իրաւունք պիտի ունենայ, — որ տեսակ մը ջանք կը դնեմ Մխիթարը ամէն տեսակ ձիրքերով եւ գեղեցկութիւններով բեռնաւորելու, եւ թէ պէտք եղածին չափ չեմ նկատի առնել որ Մխիթարի կեանքին վրայ մեր ունեցած բոլոր տեղեկութիւնները միմիայն Մխիթարեան աղբիւրէ են, եւ կրնան քիչ մը «սրբազրուած», «աղւորցած» ըլլալ: Այդ առարկութիւնը զիս չի վրդովեր, եւ սիրով կ'ընդունիմ որ ինծի մեղադրեն այս «կողմնակալութիւնը». մարդկային պատմութեան մէջ կան տեսակ մը մեծ ու լայն դէմքեր որոնց մէջ յետադայ սերունդները կը տեսնեն, եւ իրաւունք ունին տեսնելու, շատ աւելի բաներ քան ինչ որ իրօք կային անոնց մէջ. մեծ հոգի մը բեղուն է, թելադրիչ, եւ իր մէջ ենթադրել կուտայ՝ տիրաբար՝ շատ մը գեղեցկութիւններ, որոնք թերեւս ամենքն ալ պոյութիւն չունէին իր մէջ: Գործը զոր Մխիթարի հիմնած տունը կատարած է, հոյակապօրէն գեղեցիկ է, տողջ եւ ազնիւ գեղեցկութեամբ մը, եւ անզուգականօրէն բարերար է եղած մեր ազգին. գձուձ, ու անիմաստ, եւ սխալ ալ պիտի ըլլար զայն հիմնողին հոգին մանրացոյցի տակ զնեւ հիմա, ի վեր հանելու համար բիծերը՝ եթէ երբեք կային, կամ ցոյց տալու համար «աղւորցնելու ջանքերը» զոր իր երկիւղած յաջորդները փորձած կրնան ըլլալ իրենց Հայրը աստուածացնելու համար: Գիտնանք հիանալ առանց ճշմամբ վերապահումներու, զիտնանք երախտագէտ ըլլալ առանց ազտոտ ու փոքրոգի խուլարկումներու: Առաքինութիւններուն ամենէն մեծը, ամենէն կազդուրիչն ու վերանորոգիչն է սքանչանալու կարողութիւնը:

Ազգ մը որ Մխիթարի պէս «նկարագիր» մը արտադրած է, իրաւունք չունի ինքիմէ յուսահատելու:

Մխիթար, միայնակ, կատարեց հսկայ գործ մը որ իր ժամանակին համար ամենէն անհրաժեշտը, անմիջականօրէն կարեւորն էր: Հայ ժողովուրդը, որ այսօր կը մաքառի իր ամբողջական ազատագրումը ձեռք ձգելու համար եւ ատով ուրիշ բան չընէր բայց եթէ Մխիթարի գործը յրացնել (ինչպէս այս դարուն Իտալացիները լրացուցին Բեթրարքաներուն, Ալֆրեդիներուն, տոնթիններուն գործը), պէտք չէ որ վնասի իր սկսած պայքարին անաւոր դժուարութիւններէն եւ անոր մէջ իր մինչեւ ցարդ կրած աղետաւոր անյաջողութիւններէն: Պէտք է որ ան ամէն վայրկեան իր աչքին առջեւ ունենայ իր մեծ Մխիթարին օրինակը. պէտք է որ համոզուի թէ ամենէն անիրականալի կարծուած ծրագրերն իսկ կ'իրականանան երբ մարդ գիտէ ինչ էր վրայ հաւատք ունենալ, զոհողութիւն յանձն առնել ու մաքառի: Պէտք է որ հայ ժողովուրդը ամբողջութեամբ ցոյց տայ այն կամքը, ինքնավստահութիւնն ու անվկանդ յարատեւութիւնը զոր Մխիթար ի յայտ բերաւ իր գործունէութեան մէկ ծայրէն միւսը, եւ հայ ժողովուրդն ալ պիտի հասնի իր ծրագիրն իրականացնելու ինչպէս Մխիթար յաջողեցաւ իր երազը սարմնաւորել:

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



ԱՐԵՒՈՒ ՄՈՒՏԲ

Մարգագետին մը մեծ, գունատ
Ծաղկըներով կը գողգոջէր,
Եւ արեգակն արիւնակաթ
Նը թաւալէր ու կը փախչէր:

Հըրաբորբոք գընտին միջեւ
Կը տեսնէի, աղջիկ, ըզքեզ,
Կանգուն կեցած եւ խաչածեւ
Բըռնած ձեռքերը սըբբապէս:

Հոգին էիք այս ոսկեվէր
Օրհասական վերջալուսին:

Պաւարը զայն կը խողխողէր,
Կ'ուզէր քաղել չըքնաղ հոգին:

Դանդաղ դանդաղ կարմիր գունտը
Կ'երթար գետնին տակ, կը տանէր
Ըզքեզ ալ, սէ'ր իմ, անդունդը,
Մէջքէդ բըռնած կը տատանէր:

Ես աղաղակ մ'արձակեցի,
Հրեզէ'ն տեսիլք, ո՞ւր կը փախչիս.
Դու տըրտում սէրդ տըւիր ինձի,
Ինչո՞ւ հիմա կը լըքես զիս:

Բայց կը փախչէր գունտը, կ'երթար,
Խոչոր, տըրտում եւ բոցեղէն.
Ծաղկըներէն աղօռ բարբառ՝
Ողբ բարձրացաւ մարգագետնէն:

Ես կուլայի. ըսի սըբտիս՝
Ալ ի՞նչ ցաւ կայ ասոր նըման,
Խորհըրդաւոր ուժ մը եւ զիս
Կը քաշէր դէպ ի գերեզման:

ԵՐԵՔ ՃՐԱԳ

Երեք ճըրագ կը պըլպըլան
Իմ սեղանիս վըրայ,
Ու կը սպասէ զըրկեալ հոգիս—
Ըսէք՝ ո՞վ պիտի գայ:

Երեք ճըրագ կը պըլպըլան —
Ու ձեռնամած դէմքով
Նըստած դատարկ խուցըս՝ կուլամ.
Ա՛խ, ո՞վ պիտի գայ, ո՞վ:

Երեք ճըրագ կը պըլպըլան —
Ալ ոչ ոք պիտի գայ.
Մեռան յոյսերս, մեռան իղձերս,
Առանձին եմ ահա:

ՈՄՓԱԼԷ

Երազ մըն է: Ոսկի ոտքով
Հին աթոռիդ մէջ նըստած ես,

Կ'երգես ինձի, երբ արցունքով
Մըտիկ կ'ընեմ, կը նայիմ քեզ :

Բարակ դերձան մը կը փաթթես
Դաստակիդ շուրջը՝ ջրհեղուած .
Կ'ելլէ դերձանն իմ հոգիէս—
Ձայն կը քաշես կամաց կամաց :

Փափուկ շապիկ մը շինեցիր
Ու զայն՝ զգեցար, եւ ժրպտեցար՝
Շընորհաշուք, անկարեկիր :

Ես տըժգոյն եմ, տըժգոյն, տըժգոյն,
Կը դանդաչեմ— ոյժըս ի սպառ
Քաղեցիր, ո՛վ անագորոյն :

ԱԳՌԱԻ

Ագռաւ մը, ժանտ բաղդիս նըման,
Գըլխուս բոլոր կը թըրթըռայ,
Մեռելոտի կը բուրէ ան,
Բօթի ձայնով կը կըրկըռայ :

Վըշտին նըման սեւ է, դաժան,
Ու խենթութեան պէս մենաւոր .
Բըբըբը չար կը շողշողան .
Կը թըրթըռայ գլխուս բոլոր :

Քար կը նեւեմ, բայց չի փախչիր,
Կորի՛ր, կ'ըսեմ, սակայն չ'երթար .
Կըրկըռալով անկարեկիր

Կը ծանակէ զիս անդադար :
Ըսի անոր՝ ա՛յ անիծած,
Ի՛նչ կ'ուզես, ի՞նչ կ'ուզես՝ գընա՛,
Գընա՛ ձորն ուր գետնատարած
Նեխած միս կայ, կերակուր կայ :

Քամանանքով թօթվեց վիզը,
Խընդաց, պոռաց՝ Ձերմ միս կ'ուզեմ,
Ինքնասպանի մը թարմ միսը
Կը փափաքիմ եւ կը սպասեմ :

ԱՆՁՐԵՒՈՏ ՕՐ

Անձրեւի թելեր,
Երկայն, երկայն,
Կը պաշարեն զիս .
Ձանձրութիւնն ամբաւ ոստայն
Կը հիւսէ,
Կ'ըմբռնէ հոգիս :

Աշխարհ ալ ունայն՝
Լոկ սեւ մըշուշ կը փըչէ .
Ի զուր, ի վուր կը ջանամ
Փըրկել, ազատել զիս անկէ :
Կը ծիւրէ, կը ծընգէ
Կախարդական ուժ մը զիս .
Ի զուր խըրոխտեմ եւ երիտասարդ
Ձանձրութեան ուտիչը
Կը կըրծէ հոգիս :

ՎԱՂՐԵՄ ՍՎԱՃԵՍՆ



ԿՈՎԿԱՍԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅ-ՎՐԱՑՍԿԱՆ ՀԱՐՅԸ

Ահա տասը տարի է որ գոյութիւն ունի Կովկասում մի հարց, որին անուանում են «հայ-վրացական հարց» : Այդ հարցը բարձրացրել են Վրացիք, որոնք զանգաւում են որ Հայերը տիրապետել են բոլոր Կովկասեան հարստութիւններին եւ շնորհիւ այդ հարստութեանց ոչ միայն հայկական այլ վրացական նահանգներում իշխում են ամբողջ ազգաբնակչութեան, ուրեմն եւ Վրաստանի վրայ : Առանց հեռու գնալու, նրանք մատնանիչ են անում Տփղիսը, որը անցեալում Վրաստանի մայրաքաղաք է եղած, եւ դեռ այժմ գլխաւոր քաղաքն է մի նահանգի որի ազգաբնակչութիւնը գլխաւորապէս կազմում են Վրացիք, եւ այդ Տփղիս քաղաքում Հայերը ոչ միայն ամենաուժեղ տարրն են հանդիսանում, այլ եւ թուով նոքա բնում են քաղաքիս ամենամեծ մասը : Բաց ի դրանից հարկաւոր չէ մոռնալ որ Տփղիսը Կովկասի մայրաքաղաքն է, վարչական եւ գրականական-կուլտուրական կեդրոնը : Այս իրողութիւնը ի նկատի առնելով վրաց գրագէտները, ինչպէս Իլիա Զաւլաւադէ եւ Ակակի Չերետելի աշխատում են համոզել իրանց հայրենակիցներին որ սրանք պիտի «հաւաքական» ոյժերով անխնայ կուրս մղեն Հայերի դէմ, որպէս զի սոցա տիրապետութեան մի հարուած տրուի, որովհետեւ այդ տիրապետութիւնը կարող է վերջ ի վերջոյ բոլորովին կլանել Վրաց ազգութիւնը եւ զրկել նրանց ապրուստի միջոցներից . — հաւաքական ոյժերով, որովհետեւ անհատական կուրս անգոր է այնպիսի մարդկանց դէմ, ինչպէս են Հայերը :

Իրաւացի՞ են արդեօք Վրացիք թէ ոչ :

Որպէս փաստ, ճիշդ է, որ Հայերը տնտեսական կողմից ամենաուժեղ ազգն են Կովկասում, եւ շնորհիւ այդ նիւթական հարստութեանը ամենանշանաւոր դերն են խաղում տեղական հասարակական հարցերում : Եթէ ինչ ինչ պայմաններ չաշխատէին ընդդիմադրել Հայերուն՝ դեր խաղալու, այդ ժամանակ Հայերի նշանակութիւնը՝ շնորհիւ իրանց եռանդի եւ ընդունակութիւնների՝ աւելի մեծ կը լինէր անշուշտ : Աւելացրենք սրան եւ այն հանգամանքը որ Հայերի թիւը հասցրած է պետական ծառայութեան մէջ մինիմումի, եւ այն ժամանակ բոլորովին պարզ է դառնում, որ արդէն բաւականին արգելքներ կան Հայերի համար Կովկասում դեր խաղալու, եւ որ այժմ միայն նիւթական հարստութիւնն է, որ նրանց միջոց է սալիս իրանց գիրքը պահպանելու :

Ուրեմն վարչական տեսակէտից Վրացիները վրայ ոչ մի հայկական ճնշման մասին խօսք չէ կարող լինիլ, քանի որ Վրացիների թիւը պետական ծառայութեան մէջ տասնապատիկ աւելի մեծ է քան Հայերի . այդ ծառայութեան բարձր պաշտօններում ոչ միայն ներկայումս չէ կարելի գտնել, մինչդեռ Վրացիք ունին ներկայացուցիչներ տեղական ու զինուորական բարձր պաշտօններում : Բաց ի սրանից—եւ զա շատ բնորոշ երեւոյթ է, — հայկական գաւառներում դաւաճապետներից շատերը Վրացիք են, իսկ վրացական գաւառներում չի կարելի հայ դաւաճապետ գտնել : Մի խօսքով՝ սրանից կարելի է եզրակացնել որ վարչական տեսակէտից Հայերը ոչ մի կերպով չեն կարող ազգել Կովկասեան գործերի վթայ ի վնաս Վրացիների, եւ թէ ընդհակառակը այդպիսի միջոց վայելում են աւելի Վրացիք :

Մնում է տնտեսական կուրսը :

Բայց ո՞վ է լսել որ ո եւ է մի համանյք ճնշէ մի ուրիշ համայնքը «գիտակցաբար» : Այդ կարող է գուցէ պատահել, սակայն դրա համար անհրաժեշտ է, որ այդ համայնքների կամ ազգութիւնների մէջ մի կատարի թշնամութիւն լինի, եւ այդ «գիտակցական» ճնշումը կամ հալածումն էլ կարող է տեսել ոչ երկար ժամանակ, որովհետեւ կարճատե անբնական ժամանակամիջոցից յետոյ, տնտեսական յարաբերութիւնները նորից կը սկսեն ընթանալ բնական ճանապարհով : Տընտեսական յարաբերութիւնների ամենահիմնական տարրը շահն է, շահն ինքը, եւ ոչ թէ շահը

տուողը: Շահն ստացողի համար բոլորովին միեւնոյն է ու է տալիս նրան այդ արդիւնքը, Հայը, Վրացին, Ռուսը, Չինացին, եւ ուրեմն երբ՝ օրինակ՝ Բաքուցի մի նաւթատէր ծախում է իր գործը, եւ գնել ցանկացողներից նա չէ ծախում Վրացուն (եթէ այդպիսինը պատահում է), դա նշանակում է անտեսական լեզուով, որ գտնուեցաւ մի ուրիշը, որը գնեց գործը աւելի բարձր գնով: Քան այդ Վրացին: Որ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, կ'ապացուցանեն նոյն իսկ Վրացիք, ահա թէ ինչպէս: Յայտնի է որ Վրաց ազնուականների մեծամասնութեան կալուածները գրաւ են զրուած, գլխաւորապէս բանքերում, իսկ մասամբ՝ եւ մասնաւոր մարդկանց մօտ: Երբ ազնուականներից մէկը, խրուելով պարտքերի մէջ, ցանկանում է վերջ ի վերջոյ գրաւ զընել իր կալուածը, այն ժամանակ գիտենք թէ ինչ է անում. — նա փնտռում է Հայերին, որովհետեւ սոքա են փողի տէրերը եւ կարող են յամենայն դէպս աւելի շատ տալ: Ուրեմն Վրացին, աւտելով Հայուն, այնու ամենայնիւ սրան է տալիս իր կալուածքը. էլ ո՞ր մնաց Հայը, որը ոչինչ գրեթէ չէ զգում Վրացոց դէմ: Բայց ամենածածաղելին հետեւեալն է. Վրացիք դանդատում են Հայու վրայ. եւ այն ժամանակ, երբ նա այս կամ այն պատճառով չէ ուզում գրաւով ընդունիլ կամ գնել այս կամ այն կալուածքը, եւ այն ժամանակ, երբ նա ընդունում է Վրացու առաջարկութիւնը: Առաջին դէպքում նրանք ասում են որ Հայերը գիտմամբ Վրացուն փոխ չեն տալիս, կալուածքը չեն գնում. երկրորդ դէպքում նրանք գանդատում են, որ Հայերը փոքր առ փոքր գցում են իրանց ձեռքը, ինչ որ կայ-չկայ Վրացոց մօտ: Սորա համար մօտակայ անցեալից կարող ենք օրինակ բերել հետեւեալը. յայտնի Վրաց ազնուական Մուխրանսկին ծախում է իր մեծ տունը Պ. Մանթաշեանին, որը սկզբից չցանկանալով, վերջը գնեց: Եւ ի՞նչ էք կարծում, ասում են որ նամակով ու բերանացի վրացիք խնդրում էին եւ մինչեւ անգամ սպառնում այդ տունը չգնել, փոխանակ (ինչպէս տրամաբանութիւնը կը ստիպէ) խնդրել է միայն տանտիրոջը որ իր տունը չծախէ (ասում են թէ Պ. Մանթաշեանը համաձայնում էր այդ Վրացոց խնդիրը կատարել, միայն թէ նրանք էլ իրանց կողմից ծախէին նրան հանգուցեալ Գրիգոր Արծրունու տունը, որը վերջինը ծախել էր Վրաց ազնուականութեանը եւ որտեղ գտնուում է այժմ «Վրաց ազնուականութեան թատրոնը»: Վրացիք չհամաձայնուեցին):

Ինչ վերաբերում է Վրացիներին մի այլ գանդատին, այսինքն թէ Հայերը վրայ են թափում մի ո եւ է շահաւէտ տեղ եւ կարճ միջոցում բոլոր ազգութիւններն ու ջուրերը իրանց ձեռքն են վերցընում — այդ գանդատն էլ վերին աստիճանի տղայական է: Նա կարող էր տեղի ունենալ, երբ յայտնի լինէր որ Հայերին առանձին արօժոնութիւններ են տրուում պետական օրէնսդրութեան մէջ, որոնցմով նրանք հեշտութեամբ յաղթում են ուրիշ ազգութիւններին, բայց քանի որ Հայերը այդպիսի արօժոնութիւններ չեն վայելում, այլ ընդհակառակը, ուրեմն այդպիսի մի գանդատը բոլորովին անտեղի է դառնում: Եթէ Բաքուայ նաւթային արդիւնաբերութեան գործում Հայերը նշանաւոր տեղ են բռնում, դա շնորհիւ իրանց որոշ յատկութիւններին է, որոնք են առեւտրական հեռատեսութիւն, աշխատասիրութիւն եւ վարչական ընդունակութիւններ: Եւ թէ Վրաց գանդատը արդար է, այն ժամանակ նոյն չափով կարող կը լինեն գանդատել Բաքուայ Հայերի վրայ Տփղիսցի կամ Ալեքսանդրապոլցի Հայերը, որովհետեւ Բաքուայ հարուստ Հայերը գրեթէ առանց բացառութեան Ղարաբաղցիք են: Եթէ Տփղիսցին չկարողացաւ ժամանակին ըմբռնել Բաքուայ նաւթի նշանակութիւնը եւ չդուռ իր մէջ ձեռնարկութեան բաւականաչափ եռանդ նաւթը շահագործելու, ինքն է մեղաւոր, այլ ոչ թէ Ղարաբաղցին, եւ ինչ ազգութեան էլ պատկանում լինի այդ Տփղիսցին, բոլորովին միեւնոյնն է:

Վրացոց անբաւականութեան երրորդ կէտը սա է մօտաւորապէս, որ Հայերը, իրանց գործերում մաքուր չլինելով, եւ անխտիր լինելով միջոցների մէջ, արագութեամբ կեղբոնացնում են գրամը իրանց մօտ, եւ այդպէս Վրացին յետ է մնում. բաց ի գրանից եթէ Վրացին Հայու հետ մի գործի մէջ է, նա շնորհիւ իր միամտութեան ու մաքրութեան անկաբող է մըցել իր հայ ընկերակցի հետ, որը փոքր առ փոքր գործի միակ տէրն է դառնում:

Այս կէտը միակ կէտն է, մեր կարծիքով, որի մասին հնարաւոր է որ եւ է վիճաբանութիւն: Իսկապէս, անկարելի չէ, որ մի ազգը աւելի անխտիր լինի միջոցների մէջ գոյութեան կուում, քան մի ուրիշը, եւ կարելի է մինչեւ անգամ ընդունիլ, որ Հայերը աւելի անխտիր են քան Վրացիք, սակայն միայն դորանով անհնարին է արդարացնել Վրացիներին յառաջդիմու-


Թեան դանդաղ ընթացքը : Հարցը հէնց նրանուսն է կայանում , որ Վրացոց անյաջողութեան գլխաւոր պատճառը փնտոելու է իրանց ծուլութեան , հեշտասիրութեան եւ համեմատաբար մըտաւոր թոյլ ընդունակութիւնների մէջ : Դրա փոխարէն ամբողջ մեղքը գցել Հայերի անխրաբութեան վրայ , կը նշանակէ չկարենալ գտնել պատճառները :

Եւ իսկպէս ասած , կասկածելի է թէ ո՛ր աստիճանի ճիշտ է դանդաւոր Հայոց անխտրութեան մասին : Դրամական մրցման մէջ նոյն ոգին է տիրում ինչ որ քաղաքականութեան : Ա.մէն մի ուժ ձգտում է արտայայտութիւն ստանալ . ուժերի մրցման մէջ աւելի ուժեղը յառաջ է գնում , եւ յետ մնացողը սկսում է գտնաւորուել ուժեղից , ամբողջ մեղքը պցելով սրա մըրցման անգութ միջոցների վրայ : Կան գէպքեր , երբ յաղթուածը իրաւացի է մասամբ , եւ կամ մինչեւ անգամ ամբողջութեամբ : Բայց ո՛րքան յաճախ է պատահում երբ յաղթուողը ինքն է մեղաւոր եղել : Այստեղ «մեղաւոր» գաղափարը անհրաժեշտ է ընդունել ոչ բարոյական մտքով , այլ լոկ կենսական կոուրի մղման տեսակէտից : Մէկը մեղաւոր է որովհետեւ եռանդ ու լրջութիւն չունի , միւսը՝ որովհետեւ զուրկ է համապատասխան ընդունակութիւններից , իսկ երրորդը , որովհետեւ չէ իմանում պաշտպանել իր իրաւունքները , չէ հասկանում , որ տնտեսական կոուրի մէջ , ոչ մի ժամանակ ուժեղը չէ յարմարում թոյլին . այլ լինում է (եւ անհրաժեշտ պիտի լինի) , որ թոյլը ձգտում է յարմարել ուժեղին : Առողջ դատող մարդը կը համաձայնուի , որ անկարելի է պահանջել մի որ եւ է մարդուց , որ նա ցաւակցելով թոյլին՝ վարձի սրան , օրինակ՝ ինչպէս գործակառար , քանի որ նա համոզուած է , որ մի ուրիշը , նոյն վարձատրութեամբ աւելի լաւ կը կատարէր այդ գործը , եւ աւելի արդիւնք կը տար : Կան անշուշտ բացառութիւններ , բայց նոքա հատ-հատ են պատահում անձնական յարաբերութիւնների ազդեցութեան շնորհիւ , իսկ ընդհանուր սկզբունքը , սովորութիւնը , իսկական իրողութիւնը ամենաարտայայտիչ հակազդեցութիւնն է հանդիսանում այդ տեսակ պահանջներին : Լիովին միանալով Վրացիներին , երբ այս կամ այն Հայը որ եւ է կեղտոտ միջոցներով զբաղակցիւններ է գլխում , մենք ոչ մի ժամանակ չենք կարող համամիտ լինել նրանց հետ , երբ նրանք այդ տեսակ գէպքերով ուղում են արդարանալ իրենց այդ յետամնացութեան մէջ , նամանաւանդ երբ այդպիսի գէպքեր ընդունում են որպէս Հայերի յաջողութեան գլխաւոր պատճառներից մէկը : Հարկաւոր է եւ այն աւելացնել , որ դեռ հարց է թէ ի՞նչպէս կը լինէին Վրացիք , եթէ նրանք օժտուած լինելով Հայերի առեւտրական ընդունակութիւններով ու եռանդով , նոյնչափ մեծ ծաւալով զբաղէին առուտուրով ու արհեստագիտութեամբ : Յաճախ մարդս մաքուր է երևում որովհետեւ ոչնչով չէ զբաղում , եւ այդպիսիների թիւը վրացոց մէջ շատ մեծ է : Ես արդէն չեմ կամենում յիշել այստեղ այն կարծիքները , որոնք տարածուած են Վրացոց մասին : Մէկը կը յիշեմ միայն , որ՝ այն ինչ որ հեշտութեամբ ձեռք է բերւում , հեշտութեամբ է եւ մտխուրդ : Վրաց ազնուականները առանց մեծ աշխատանք դնելու՝ արդիւնք ստանալով իրանց կիսաքանդ կալուածքներից , կամ գրաւ դնելով կալուածքը , միաժամանակ եւ առատօրէն մսխում են ստացած փողը , բայց այն էլ դեռ նարց է թէ ինչի՞ վրայ են մսխում , անձնական պիտոյքների իհարկէ եւ ամենակերպական պիտոյքների — հաղուստի , կառքերի , զուարճութիւնների , եւ այլն : Իսկ արդեօք կենսական լուրջ պահանջները , անձնական , ընդհանրական եւ թէ հասարակական , ստանձում են այնպիսի բաւարարութիւն ինչպէս Հայերի մօտ : Արդէն չենք խօսում բարեգործութեան մասին , որտեղ Վրացոց տեղը հաւասար է գերօրի : Դա խոստովանում են նոյն իսկ Վրացիք :

Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՕՋԵԱՆ

(Շարունակելի)

Տ փ դ ի ս , 1901



ԱԶԳԱՔԻՆ ՔՐՈՆԻԿ

Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ. — Անսահման ցաւով իմացանք Հ. Ղեւոնդ Ալիշանի մահը: Անընդհատական ու բազմաբարձր աշխատութեան, ազնիւ ու փայլուն գործունէութեան արտասոււոր կեանք մըն է որ կը շիջանի: Հայազգը կը կորսնցնէ զեղեցկազոյն հոգիներէն մին զոր արտադրած է:

ԱՆՃԻՇԴ ԼՈՒՐ ՄԸ. — Արտասահմանի թերթերը ծանուցին թէ Մանչեսթրի մեծահարուստ վաճառականներէն մին, պ. Մ. Թոքաթեան, որոշած է 20000 անգլիական ոսկի կտակել՝ Անգլիոյ կամ Գերմանիոյ մէջ հայկական քոլէժ մը հաստատելու համար: Այս սիրուն լուրը անձիչք է դժբաղդարար: Մեր քաղաք ստոյգ աղբիւրէ տեղեկութեանց համեմատ, ահա ինչ է եղելութիւնը. Մանչեսթրի «Օուընս Գոլէճ»-ին հոգաբարձութիւնը դիմած է պ. Թոքաթեանին, խնդրելով որ նուիրատուութիւն մը ընէ այդ անգլիական բարձր քոլէժին. պ. Թոքաթեան խոստացած է 2000 ոսկի նուիրել, պայմանով որ այդ քոլէժը երկու հայ որը յանձն առնէ սնուցանել եւ կրթել: Հոգաբարձութիւնը, մտածելով որ այդ դումարին տարեկան տուկոսը բաւական իսկ չէ այդ երկու հայ աշակերտներուն ծախքերը վճարելու, վաղ անցած է պ. Թոքաթեանին նուիրատուութենէն:

«ԱՐՏԵՄԻՍ». — Յառաջիկայ յունուարէն սկսեալ, Գահիրէի մէջ պիտի հրատարակուի ամսաթերթ մը, «Արտեմիս» անունով, գլխաւորապէս կնոջական խնդիրներու նուիրուած, սնորհնութեամբ Օր. Մարի Պէյլէրեանի, որ ծանօթ է եւ յարգանքի արժանի ազգային գործունէութեան մէջ իր անձնուէր մասնակցութեամբը եւ գրական ջանքերովը: Կը յուսանք որ մեր հասարակութիւնը պիտի խրախուսէ Օր. Պէյլէրեանի համակրելի ձեռնարկը: Տարեկան բաժանորդադրին է, Եգիպտոսի հասար՝ 40 դուրուշ, արտասահմանի համար՝ 12 ֆրանք:

Հասցէ. Mlle Marie Beylerian
Poste restante
(Egypte) Le Caire

Պ. ԱՐՄԵՆԵԱՆԻ ԵՐԵՎՈՅԹԸ. — պ. Արմենեան, որ ասկից 9—10 տարի առաջ թիֆլիսի թաարոնին մէջ շարք մը ներկայացմանց մասնակցելէ յետոյ, երկու տարիէ ի վեր Բոլ Մունէի եւ Լոսթիէի կ'աշակերտէր իր արուեստը կատարելագործելու համար, հրաւիրուած ըլլալով թիֆլիսի Հայոց թատերական մասնախումբէն եւ դերասանական ընկերութենէն՝ մասնակցել այս եղանակին ներկայացումներուն, իր բարեկամներէն ոմանք թատերական եւ երաժշտական երեկոյթ մը կազմակերպած են որպէսզի իր մեկնումէն առաջ Բարիզի հայ գաղթականութիւնը առիթ ունենայ տեսնել զինքը իր զերերէն մէկուն մէջ:

Երեկոյթին յայտագիրը կը պարունակէ Ֆրանսոսա Գորէի «Վնագործ»ը, զոր պիտի ներկայացնեն պ. պ. Արմենեան, Պուլայէ, Մոնվիլ եւ Օր. Լըմոն, Բուրթլիինի «պարոն Պատէն»ը, զոր պիտի խաղան պ. պ. Բուվլէր, Պրիւնո եւ Ժիւլիէն, ու բանաստեղծութեանց ու մենախօսութեանց արտասանութիւններ զոր պիտի կատարեն պ. պ. Բոլ Մունէ, Լոսթիէ եւ Օր. Տելվեր՝ Գոմէտի Ֆրանսէզէն, պ. Լոֆ՝ Անթուանի թատրոնէն, Բոլ Վերիք, Ռամել եւ Արմենեան: Օր. Ֆորթ եւ Օր. Վերիք պիտի երգեն եւ պ. Ստեփան Էլմաս, ծանօթ հայ դաշնակահարը, մէկ քանի կտոր պիտի նուագէ:

Այս երեկոյթը տեղի պիտի ունենայ զեկտ. 6ի իրիկունը, Սալլըմուանի մէջ, 17 ուր Բիկալ:

ՎՏԱԿ. — Մոսկուայի հայ ուսանողութիւնը հրատարակած է, պ. Վ. Փափազեանի խմբագրութեամբ, գրական հաւաքածոյ մը, ՎՏԱԿ անունով, նուիրուած Գրիգոր Ջանչեանի յիշատակին: Այդ հրատարակութիւնը, որուն վաճառման արդիւնքին 2/3 մասը պիտի յատկացուի հայ որբերուն, ունի հետեւեալ բովանդակութիւնը.

Ա. մաս. — Հ. Ղ. Ալիշան, նամակ մը (ֆաբրիմիլէ), — Յ. Յովհաննէսեան, Մենք գնում էինք (բանաստեղծութիւն). — Ա. Իսահակեան, Միրոյ երգը (արձ. բանաստ.), — Ա. Մատուրեան, Բանաստեղծութիւններ, — Վ. Փափազեան, Աւետեաց երկրում, — Ա. Իսահակեան, Ախ մեր սիրտը (բանաստ.) Յ. Թումանեան, Պօէտն ու Մուզան (երգիծ. պօէմա). — Գ. Բաշինջաղեան, Բարեբարներ, — Ա. Մատուրեան, կալանաւորի օրագրից (բան.), — Ա. Հախումեան, Ընդհատուող հեկեկանքներ, — Սրինգ, Ի՞նչ երգեմ (բանաստ.): — Լ. Նազարեան, Բեւ

կորներ , — Ե. Պոռչեանց , Հինգերորդ գինա-
գիծը . — Յովհաննէս Տէր-Միրաքեան , Անցած
վնացած օրերից , — Արշակ Չօպանեան ,
Արուեստի էջիւր , — Գ. Չօբար , Երագ , — Ռ.
Պատկանեան , Փոստուխին Աւազը , — Մ . Նալ-
բանդեանց , Մի նամակ , — Վ . Փափազեան ,
Հմբոստ երգեր :

Բ . մաս . — Հ Աճառեան , Հայոց ծագումը եւ
նախապատմական շրջանը . — Վարդգէս Սու-
րէնեանց , Հայ ճարտարագետութեան սեղը
գեղարուեստի պատմութեան մէջ , — Ե. Շահա-
զիլ , Հայոց վանքերը եւ նրանց դերը հայ
կեանքում , — Կ . Բամաջեան , Չօարթնոց եւ
կեղեցւոյ պեղումները , — Գ Սատիսեան ,
Հայոց լեզուն եւ նրա բարբառները , — Լ . Նա-
զարեան , Հայոց սովորութեան-իրաւունքի ,
ուսումնասիրութեան նշանակութիւնը եւ մե-
թոտը , — Մ . Բիրբերեան , Ս . Շահազիլ (էտիւղ) ,
Ի . Վեսելով կի , Արեւմտեան Եւրոպայի ազդե-
ցութիւնը սոսակայ գրականութեան վրայ ,
— Գ . Վանցեան , Մեր ստիւիստներն եւ լեզուն .
— Ռ . Խանազատեան , Փոքր-Ասիան եւ շինու-
ելիք երկաթուղիները :

ԸՆԹԱՅԱԻՍՐՏՆԵՐ . — Հաճոյքով կ'իմանանք
որ պ . Միհրան Թեւեան Պրիւսէլի իրաւագիւ-
տութեան ազատ Համալսարանէն տորթորի
վկայագիր ստացած է փայլուն քննութիւն մը
անցընելով , եւ թէ պ . Հ . Համամճեան Բարիկի
ատամնարուժական վարժարանէն վկայագիր ,
մրցանակ եւ պրոնզէ մեաայլ ընդունած է :

ՀԱՅ ԷԶԵՐ

ՈՂԲ

Կողկողաղին դիմօք զազդն իմ աւաղեմ ,
Եւ փղձկեալ ի սրտէս լալով արտասուեմ .
Չաղնու տկանութիւնս զազդիս իմ յիշեմ ,
Ոչ հանդուրժեալ սրտէս լալով արտասուեմ :

Արդ ո՞ւր են մեր իշխանք եւ ո՞ւր երեւին
Նոցա պետութիւնք որք ոչ երեւին ,
Քանզի թողին զմեզ որքս եւ յոյժ լալազին ,
Վասն այն ողբալով եւ յորդ արտասուեմ :

Աւա՛ղ աշխատանաց մեր Լուսաւորչին ,
Ձի զղաչինս նորա քակտեալ քանդեցին ,
Եւ ամենայն աղբայ ատելի ցուցին :

Քանզի եղաք ծանակ մերոց ատելեաց ,
Ծաղր եւ արհամարհանք մերոց դրացեաց ,
Ամօթ եւ նախատինք մեր քարեկամաց :

.....
Ձգինի յիմարութեան համայն մեք արբաք ,
Ձպտուիրան սիրոյն բնաւ մոռացաք ,
Եւ ռխակալութեամբ զիրեարս մատնեցաք :
Գոեհիկք եւ անպիտանք ազգին տիրեցին
Եւ զարս զազնուականս զգետնի հարին ,
Եւ այնու զօրէնս մեր աւերեցին :

Տղէտք եւ տմարդիք քահանայացան ,
Լիրբք եւ ամբարտաւանք զկարգս ստացան ,
Եւ բանք առաքելոց աստանօր լցան :

Չոմանս ի բանտ մատնեն , զոմանս տուգանեն ,
Չոմանս բրածե՛ծ սոննն , զոմանս կաշաւեն ,
Եւ զոմանս բռնութեամբ հաւատոյ հանեն :

Տէրն ասէ՛ յարիցէ ազգ ազգի վերայ .
Բայց ազգն մեր յարեան ի միմեանց վերայ .
Եղբայր զեղբայր մատնէ , զերէցն քահանայն :

Համանգամայն բարձաւ անս աստուածային ,
Ամօթ եւ պատկառանք երեսաց նոցին ,
Եւ եղեն հաւասար անասնոց սեռին :

Վիեննայի վանք ,
Չեռադիւր , Թիւ 136

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Գիշեր ու ցորեկ ի քո սարտէն
Հստաչեմ հատաչեմ ,
Կ'ուզեմ զանուէղ յայտնլ ,
Կ'ամաչեմ կ'ամաչեմ :
Ա՛յ անօրէն , միս եմ ու ոսկոր եմ ,
Գէ՛մ քար չեմ , գէ՛մ քար չեմ :

Յայլ չեմ կրնար դադտուկ ապրիլ ,
Կու կանչեմ . կու կանչեմ :
Գիշեր ու ցորեկ քո սէրն արեր
Ձիս վարամ , գիս վարամ :
Ա՛յ անօրէն , գեմ քար չեմ ,
Չեմ զիմանար , չեմ զիմանար :

Գիշեր ցորեկ քունս է հատեր
Աչերուս , աչերուս
Քո արեւուզ ականջ արա
Քո գերուզ , քո գերուզ

Վիեննայի վանք
սուղարան . Թիւ 45

ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

«ՆՈՐ ԴԱՐ» ԵՒ ՄԽԻԹԱՐ : —
Պ . ՉԵՐԱԶ ԵՒ ԳԱՅԹԱԿՂՈՒ-
ԹԻՒՆԸ . —

ԲՍՈՒ ՄԸ «ՇԱՐԺՈՒՄ» ԻՆ . —
Պ . ՉԵՐ ԱԶ ԵՒ ՇԱՐԺՈՒՄ : — Լ . ՄԱՐԻՅԷ
«ՍՄՍՍԱԿԱՆԻ ԽՆԴԻՐԸ» .



«ՆՈՐ ԴԱՐ» ԵՒ ՄԽԻԹԱՐ

Մխիթարի յորելեանին առիթով բովանդակ հայ ժողովրդին ցոյց տուած անխառն խանդավառութեանը մէջ, միակ բիծը կազմեցին այն «միջնադարեան» յօդուածները որով «Նոր դար»ը հալածեց Մխիթարի յիշատակը: Ս.մրող Վազգը իր յարգանքն ու երախտագիտութիւնը կ'ուղղէր ոչ թէ կաթողիկէ միաբանութեան մը հիմնադրին, այլ Ս. Ղազարու գրական-ազգային տունը կառուցանողին, եւ Մխիթարեաններն իրենք իսկ յորելեանի բոլոր հանդիսութեանց մէջ, ինչպէս եւ այդ առիթի իրենց հրատարակած գրքին մէջ, ամէն ջանք ըրած էին այդ տօնախմբութեան տալ ոչ մէկ կրօնական գոյն, այլ լոկ գրական-ազգային գոյն մը. միայն «Նոր Դար»ն էր որ յամռոնցաւ այդ յորելեանին մէջ «ուրացողի» մը փառաբանումը տեսնել եւ Մխիթարի ու իր յաջորդներուն նկատմամբ բանադրողական բաներ գործածել: Այդ ընթացքը անձան էր, անիմաստ եւ ապերախտ:

Երբ մարդ մը, ըլլայ կաթողիկէ, լուսաւորչական, բողոքական կամ պուտտայական, իր ազգին կը մատուցանէ այնքան մեծ ծառայութիւն մը որքան Մխիթար մատոյց իր հիմնած վանքովը, ազգը որուն այդ մարդը կը պատկանի: անոր յիշատակը սօսելու ասեն՝ անոր քաւանանքովը չ'ըրազիր, անոր կատարած բուն գործը միայն կը տեսնէ: Եթէ Մխիթար Հայոց մէջ կաթողիկոսութիւնը մացնող առաջին Հայը եղած ըլլար, պիտի բմբունէի՝ մինչեւ աստիճան մը «Նոր Դար»ին հակակրօնութիւնը. արդ Մխիթար ուրիշ բան չըրաւ բաց եթէ յարել շարժման մը որ մեր մէջ գոյութիւն ունէր Ռուբինեանի շրջանէն ի վեր: անչուշտ իր ծրագրին մէջ, Մխիթար այնքան տեղ տուած էր կաթողիկոսութիւնը Հայոց մէջ տարածելու նպատակին որքան Հայոց լեզուն ու գրականութիւնը վերականգնանալու ձեռնարկին, եւ ուրիշ կերպ չէր կրնար ընելքանի որ համոզուած կաթողիկէ մըն էր: Բայց այդ կաթողիկէ Հայ երեսով, եւ Մխիթար մեր մէջ առաջին մարդը եղաւ որ ըմբռնեց թէ ազգ եւ կրօնք առ բեր բաներ են, թէ ինչ կրօնքի ալ պատկանի՝ Հայ մը Հայ է միշտ: Ինքն եւ իր յաջորդները ասով հակադրած եղան մեր ազգին երկու հաւասարա-

պէս մոլեռանդ տարբերուն զէմ (որոնց կատարի ատելութիւնն իրարու նկատմամբ զըխաւոր պատճառներէն մէկն եղած էր Ռուբինեանից թագաւորութեան կործանման), հակադրած եղան թէ՛ այն թանձրամիտ լուսաւորչական Հայերուն զէմ որոնք բոլոր կաթողիկէ Հայերն «օտարացած» ու «զաւաճան» կը նկատէին, եւ թէ՛ այն նողկալի կաթողիկէ Հայերուն որոնք կաթողիկէ ըլլալուն համար զիրենք պարտաւոր կը կարծէին Հայ անունն արհամարհել: Անչուշտ, իր երկու դարու կեանքին մէջ Մխիթարեան միաբանութիւնն ունեցած է արարքներ, հրատարակութիւններ որոնք աւելի կաթողիկէ են քան թէ հայ, որոնք երբեմն նոյնիսկ այնքան կաթողիկէ են որ հակահայկական կրնան համարուիլ: «Նոր դար»ը իրաւունք պիտի ունենար եթէ միայն այդ որոշ արարքներուն զէմ ուղղէր իր քննադատութիւնը: Բայց երբ կը տօնուի Մխիթարի տան երկդարեան գործը, պէտք է անոր ամբողջութեան գոյնն ու նշանակութիւնը ի նկատի առնել, եւ այդ ամբողջութեանը մէջ «հայ» տարրը կը տիրապետէ՝ «կաթողիկէ» տարրը աննշմարելի դարձնելու աստիճան, եւ այսպէս վարուելու պարտականութիւնը աւելի անհրաժեշտ կը դառնայ երբ մտածենք որ այս միջոցիս հայ ժողովրդին հոգեբանութիւնը այնպիսի փուլի մը մէջ է մտած ուր այլեւս կաթողիկէ, բողոքականի, լուսաւորչականի խորութիւնները բացարձակապէս գաղթած են ազգին միութեան վնասելէ:

Կէտք չէ մոռնալ որ Մխիթարեանները, — մանաւանդ Վետեակիները. — ոչ միայն իրենց սկզբունք բրած են «այնքան հայ ըլլալ որքան կաթողիկէ», այլ եւ իրականութեան մէջ «աւելի Հայ եղած են քան կաթողիկէ», եւ ատոր համար հաշտուած են, պապամոլ Հայերէն Ս. Ղազարու վանքն այդ հալածանքին նկատմամբ է նոյնիսկ Մխիթարէն սկսեալ: Եւ պէտք եղած է Ս. Ղազարու վանահայրերուն ամբողջ ճարտիկութիւնը՝ առաջին առնելու համար իրենց միաբանութեան Հոռոմէն խորտակուելու վտանգին, եւ իրենց ամբողջ պրոթիւնը՝ Մխիթարի տան «հայ» նկարագիրը հակառակ Հասունեաններուն զգուշիկ էթիքիներուն անեղծ պահպանել յաջողելու համար: Մենք յաճախ իրենց մեղադրած ենք իրենց ինամոց յանձնուած Մուրատ Ռափայելեան վարժարանը կաթողիկոսեան տարածման գործիք մը դարձուցած ըլլալին: Բայց պէտք եղածին չափ չենք դիտած որ այդ վարժարանէն ելլող բոլոր աշակերտները «պապաէր Հայեր եղած են» հակառակ իրենց կաթողիկոսութեանը, եւ թէ անոնցմէ ոմանք, եւ ամենէն չահեկաններէն, Մերենց, Թղեան, Աճէմեան, եւն, մինչեւ իսկ կաթողիկոսութիւնը թողած եւ հայ եկեղեցու գերիկ վերադարձած են, իսկ մէկ մասն ալ, Պէշիքթաշլեան, Հեքիմեան, թէպէտ այդ դարձը չեն կատարած:

բայց այնքան Հայ են եղած, եթէ ոչ աւելի, որքան ամենէն ազգաւոր լուսաւո չականը: Տեսէք ինչ կը գրէին Հոռոմի ստրուկները դարձած պապամոլ Հայերը «Մխիթարեան միաբանութիւնն Ս. Ղազարայ վանուց Վենետիոյ» տխրոտով իտալերէն գրքոյկի մը մէջ որ հրատարակուած է 1852ին:

«Ս. Ղազարու Մխիթարեան վարդապետները, ազգայնութեան սկզբունքով ցնորեալ, եւ հերձուածող եկեղեցւոյն հետ երեւակայական միաբանութեան մը ետեւէ վազելով, կը ցանկան միացնել այս երկու ժողովուրդը եւ մի միայն ազգ կազմել. եւ այս պատճառաւ գացին երկրին տակէն բրեցիտ խառնակոյտ դէպ մը Հայոց հնութեանց, թէ՛ ճշմարիտ է եղեր եւ թէ՛ սուտ, որպէս զի յիշեցնելով արգեան Հայոց իրենց նախնեաց քաջագործութիւնները, արթնցնեն զանոնք եւ հետամուտ ըլլան իրենց թագաւորութիւնը ստանալու, որուն միայն յիշատայը, անունը մնացած է այսօրուանս օրս: Ասոնք Ս. Ղազարու վարդապետաց երազներն են որոնց հաւատացողը եւ հետեւողը պիտի իմանայ վերջապէս թէ զուր տեղը ինքզինքը յոգնեցուցեր է: Այս նպատակին կը վերաբերին բոլոր ճգունքը Չամչեան Հ. Միքայելին Ս. Ղազարու: Սակայն որքան Չամչեանք կան նէ աշխարհիս վրայ կրնան գրել, գործակից ունենալով Վենետիոյ Մխիթարեան միաբանութեան ներկայ եւ ապագայ վարդապետները, ի վերայ այսր ամենայնի բան մ'ալ ըլլալիք չունի:» (*)

Մխիթարեաններուն «ազգասիրութեանը» կարելի չէ աւելի նշանակալից ապացոյց մը գտնել քան իրենց «կաթոլիկ» թշնամիներուն այս տխուր էջը:

Եւ չեմ կրնար ինքզինքս արդիւիւ այստեղ օրինակելէ նամակ մը (գարձեալ «Արշալոյս Արարատեան») ի մէջ հրատարակուած, զոր Վենետիկի Մխիթարեան մը, Հ. Յովհաննէս Չօբապեան, կը գրէր Բարիդին իր Պոլիս գրտնուող եղբորորդոյն՝ այնպիսի օրերու մէջ որ կաթոլիկի ու լուսաւորչականի կռիւը գրեթէ այնքան մոլեգին ու ազգակործան գարձած էր որքան կիլիկեան շրջանին պայքարը:

«Բայց այնուհանդիսէ կաթոլիկաց հալածումին բանը քեզմէ կը լսեմ. գանք որ բանիս մէջ որդի՛ք, աշուրիւ աղէկ բացէք, որ պօշտեւը դուք ալ բարարան չերթաք. դուք ձեր ուղիղ քրիստոնէական հաւատքը պահելով առանց խղճմտանաց ձեր ազգին ժամէն եւ

մի՛ կենաք երթալու. ան նաւի չէ, սինոյա չէ. ինչ որ Գրիգորի Գրիգորիստան ու Աստուածածինն է, որն որ Թրէնկին ժամը. այրը սեյի չկայ, եւ ասանկ կ'ըսեն նաեւ Թրէնկիստանի Թրէնկները. ու երբ կը լսեն թէ Հայու ազգը երկու փրկայ եղած մէկ զմէկը կը հալածէ, հոսիս բուն Հայերուն կուտան, կաթոլիկները եղեկ են կ'ըսեն, որ այս պատճառով սասկէ կ'ելլեն, բանտը կը մանեն, եւ այլն: Ասանկ ըսելը լսուած է նաեւ նոյն փափին քարաինայներէն եւ փառլամէնդներէն, որ մեր խեղճ միամիտ կաթոլիկները սգիտութեամբ անոնց ուղղորին թեղի՛ք ու զո՛հ կ'ըլլան, ուստի դուք՝ ինչպէս ըսի՛ խելքերնիս զլուխնիդ ժողովեցէք. դուք ազգաւ Հայ էք, պէտք է որ ձեր պատրիարքին հնազանդ ըլլաք, որ յայտնի ճշմարիտ հաւատոյ դէմ բան ձեզի թեխի՛ք չ'ընեն, հապա շատ շատ ձեզի պիտի ըսէ թէ Քաղկեդոնի ժողովքը մի՛ ընդունիք. դուք ալ ըսէք թէ՛ մենք աստուածաբան չենք, անոր ուղիղ պատմութիւնը հաստատ չենք գէտեր, թէ որ ան Ս. Աւետարանին ներհակ է նէ՛ չենք ընդունիր, եւ նորովիւ կը նորովենք: Ըսածներուս վրայ չպզոտրիք. զերե փորձով զիտեմ ըսածս. երեսուն տարիէն աւելի է որ Թրէնկիստանի մէջ ուղղափառ ըսածներուն հետը կը վարուիմ, միշտ հետերնին կը մտնեմ կ'ելլեմ, եւ այս կ'ըսեմ որ ճշմարիտ քրիստոնէութիւնը Հայու ազգին մէջ կը պահուի, իմացիք այնուհանդիսէ բոլոր ազգը, (կաթոլիկ ըլլայ չըլլայ). եւ Թրէնկներուն խելացին եւ բարեպաշտն ալ ասանկ դատաստան կ'ընէ տեսնելով իրենց քրիստոնէութիւնը:

«Իսկ ընդհանրապէս Թրէնկները այս հալածանաց բանին վրայ մասխաւալ ընելով՝ մեր բոլոր ազգը ետողուն լեռնցի տեղ կը գնեն, եւ Հոռոմայի քոթէն ալ կը մեղադրեն, եւ անողորմ, անգութ է կ'ըսեն, որ իրենց կեղծաւոր սօփիստութեամբը պատճառ կ'ըլլան այն միամիտներու վնասուցը... Այս կաթոլիկութեան մատուէն ալ մասնաւորապէս մեր հայ ազգին մէջ ինկած է, ան նիւստով ազգերնիս ամէն տեղ իր հանգրտութիւնը կորսնցուցած պերսիսք եղեր է, եւ ասով մասխաւալ է բոլոր ազգաց աօջուր, Տաճկին, Հոռոմին, Չրֆիթին, նաեւ Թրէնկին. Թրէնկին կ'ըսեմ, որ անոնց հաւատքին զլխաւորները Հոռոմայ բոլոր ցեփին մէջը խղղուած են: Տանա շատ բաներ կան ըսելու այս մասսէիս վրայ, բայց տեղս չտանիր պիտեմ որ այս բանս մեր անմիտ ազգին հասկցնելու եւ ըզեզնին խօթելու շատ դժուար է, որ մէյ մը արթննային եւ տեսնային թէ ինչ հալի մէջ են:

(1) Այս հատուածը հրատարակուած է «Ար. շալոյս Արարատեան» լրագրին 1852 յունիս 20ի թիւին մէջ:

Այս բնութանի, նոյն իսկ գոհիկ ոճով, բայց արարորինապէս անկեղծ, ազատ ու ազնիւ չեչ-

մով նամակը , որ կը խտացնէ՝ իր ամենէն մերկ , անարուեստ , բնական ձեւին մէջ՝ Ս. Ղազարու միաբանութեան ոգիին բուն խորքը պիտի բաւէր ինքնին , եթէ նոյն իսկ նկատի չառնէինք ինչ որ Մխիթարեաններն ըլլած են հայ լեզուին ու գրականութեան համար , ապացուցանելու թէ Մխիթարի հիմնարկութիւնը , հետո շարունակեալ «բաժնուած» տուն մը ըլլալէ , բաժնուած Հայերը հայրենի օճախին կապող հանգրուան մըն է եղած :

Պ. ՉԵՐԱՉ ԵՒ ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ

Պ. Չերազ իր թերթին վերջին թիւին մէջ կը հրատարակէ հետեւեալ տողերը .

«Անահիտ»ի տնօրէնը , որ իր պաշտօնակիցներուն կը քարոզէ մեր ազատ լաթը մեր մէջը լուալ , իրեւ անուանարկիչ դատի քաջած է Պ. Բրոֆեսոր(1) Բալբաքեան , «օֆիսիէ ա'Ա.քատէմի» , որ հայ գաղթականութեան հաւաքումներուն մէջ զինքը ամբաստանած էր : Իեկտեմբեր 6ին է որ այս խոչըր գայթակղութիւնը պիտի պարզուի ֆրանսական դատարանին առջեւ :»

Պ . Բալբաքեանի գէմ գատ բանալու ուրոյմանս համար կը սպասէի որ այս ապուշ մեղադրանքն ինծի ուղղողներ չպակսէին , բայց չէի երեւակայեր որ այդ մեղադրանքն առաջին անգամ ինծի գէմ ուղղողը Պ. Չերազը պիտի ըլլար , Պ. Չերազը որուն այս ամբողջ գործին մէջ բռնած լղրճուկ ընթացքը զիս այս ծայրագոյն միջոցին դիմելու մղող գլխաւոր պատճառներէն մէկը եղաւ : Աւելորդ չեմ նկատեր , քանի որ Պ . Չերազ ինքն իսկ առիթը կ'ընծայէ , երկու բառով բացատրել թէ՛ զիս գատ բանալու մղող շարժառիթներուն բնութիւնը եւ թէ՛ Պ. Չերազին դերը այս բոլոր ցած պատմութեան մէջ :

«Անահիտ»ի ընթերցողները գիտեն այն հըրէշային զրպարտութիւնները որոնցմով Պ. Պ. Բալբաքեան ու Գայանան զիս ուզեցին անուանարկել Հայկական Միութեան տնօրէն ժողովի երկու անդամներուն մօտ . այն վայրկեանէն իսկ ուր իմացայ այդ պարոններուն վարմունքն իմ մասիս , ես պատույատեան մը կազմել առաջարկեցի , կարծելով թէ այդ միջոցը

(1) պ. Բալբաքեան տաճկերէն լեզուի կրկնիչ է Բարիզաիբուեւեան կենդանի լեզուաց վարժարանին մէջ :

պիտի բաւէր հակառակորդներս խելքի բերելու : Պ. Պ. Բալբաքեան ու Գայանան գրաւոր խոստում տուած էին . ինչպէս եւ ես , առաջուց ընդունելու պատուոյ ատեանին վճիռը աբղ. փոխանակ խոնարհելու այդ վճիռն առջեւ (պատուոյ ատեանին մեծամասնութեան վճիռն է որ միակ հեղինակաւոր վճիռը կը կազմէ) Պ. Բալբաքեան շարունակեց սրճարաններու մէջ : բազմաթիւ Հայերու առջեւ , ինծի գէմ միւննոյն անուանարկիչ զրոյցները տարածել :

Պ . Չերազ , որուն Պ . Թամաշեան առաջարկած էր վճիռը նոյնութեամբ հրատարակել իր թերթին մէջ , մերժած էր , մինչդեռ նոյն ատեն կ'իմանայի որ Պ . Բալբաքեանի բարեկամները «Շարժում»ին եւ «Փիւնիկ»ին կը զրկէին զիս վարկաբեկ ընելու ձգտող յօդուածներ (որոնք հրատարակուեցան քիչ յետոյ) , եւ թէ ինքն իսկ կը պատրաստէր ամբողջ զիրք մը իմ վրաս , որ ընդհուպ պիտի հրատարակուէր . վերջուպէս յուլիս 31ի իրիկունը , կրանտ'Օրիանի սրահին մէջ , 100-150 Հայերու առջեւ Պ. Բալբաքեան կը կրկնէր ինծի գէմ այն միւննոյն ամբաստանութիւնները զոր բանաձեւած էր պատուոյ ատեանին առջեւ , եւ կը դատափետէր Պ Պ. Թամաշեանն ու Ղամբարեանը զոր իրեն դատաւոր ընդունած էր : Պ. Չերազ ոչ միայն ոչ մէկ ջանք չըրաւ այս խայտառակութիւններն արգիլելու , այլ իր բոլոր ուժովը քաջալերեց Պ . Բալբաքեանը (կարծելով , ողորմելի'ն , թէ ա'լ ես «կործանած» էի եւ թէ պէտք էր հզօրագոյնին կողմը բռնել) . «նախադահեց» այդ տարօրինակ երեկոյթին , եւ իր նախադահի դիրքն ի սպաս դրաւ պ. Բալբաքեանի յաջողութիւնը զիւրացնելու , յաջողութիւն մը որ արդէն անխուսափելի էր այդ «պատրաստուած» սրահին առջեւ ուր զիս չճանչցողներ կամ ինծի թշնամի եղող անձեր էին որ բացարձակ մեծամասնութիւնը կը կազմէին , եւ Պ . Չերազ որ մերժած էր պատուոյ ատեանին վճիռը հրատարակել , ստորագրեց վաղթականային ժողովին հետեւեալ օրը խմբագրուած յայտարարութիւն մը որ բոլոր բարիզաբնակ Հայերուն եւ թերթերուն ցրուեցաւ եւ ուր կ'ըսուէր թէ պ . Բալբաքեան այդ գումարման մէջ պարզեց պատուոյ ատեանին մանրամասնութիւնները եւ այն ծանր յայտարարութիւնները որ երեւան եկած էին պատուոյ ատեանին ի վեր (մինչդեռ պ. Բալբաքեան այդ գումարման մէջ ուրիշ

բան չէ ըրած բայց եթէ կրկնել միեւնոյն զրոյցները, ցոյց տալ միեւնոյն թղթերը զոր արդէն ներկայացուցած էր պատուոյ ատեանին վերջապէս պ. Չերազ իր թերթին մէջ հրատարակեց նօթ մը, ուր տեղեկութիւն կուտար այդ գումարման վրայ եւ իր ընդունած գատաւորները «քննագատող» Գալբաքճեանին ընթացքը բնական կը գտնէր : Պ. Չերազ ուրեմն իր բոլոր կրցածն ըրաւ որպէսզի պատուոյ ատեանը, այսինքն «մեր ալտոտ լաթը մեր մէջ լուալու» միակ միջոցը, կորսնցնէ իր ուժն ու նշանակութիւնը եւ չունենայ այն բարերար արդիւնքը զոր անշուշտ պիտի ունենար եթէ պ. Գալբաքճեան եւ իր արբանեակնորը պատուոյ ատեանի մը նշանակութիւնը ըմբռնելու կարող մարդիկ եղած ըլլային :

Ինծի համար անկարելի էր հանդուրժել որ նոյն իսկ պատուոյ ատեանէն յետոյ, իմ անունս շարունակուէր այդպէս քաշկրտուել գողթականային ժողովներու, շրջաբերականներու եւ լրագիրներու մէջ. աններելի պիտի ըլլար որ թոյլ աայի այս խաղաղութեան երկարաձգումը, որոշեցի ֆրանսական դատարանին դիմել : Եւ գատը որ տեղի պիտի ունենայ յիկտմբեր 6ին, ուր է կերպով չի կրնար գայթակղութիւն մը համարուել, ու բնաւ վընասակար չպիտի ըլլայ մեր ազգին. ամէն ժողովրդի մէջ կան անուանարկիչներ. հասարակ երեւոյթ մըն է ատի, եւ շատ բնական, քանի որ մարդկութեան բոլոր հատուածներուն մէջ կան, եւ միշտ պիտի ըլլան, ապիկար նախանձոտներ. դատարանը պիտի որոշէ ինչ որ օրէնքը սահմանած է այդ կարգի արարքներ գործող անհատներուն համար. պ. Գալբաքճեանին ազգավնաս ընթացքը հետեւող պիտի չունենայ այսուհետեւ. խնթ ու խելառ զրոյցներու վրայ հիմնուելով հանրային գործիչ մը անուանարկելու եւ ստող մեր հանրային բարոյականը քայքայելու աղետաբեր զրութիւնը, որ մեր մէջ սովորական դարձած է ատենէ մը ի վեր, պիտի խորտակուի. այս դատը ուրեմն «օգտակար» պիտի ըլլայ, նոյն իսկ «հայկական» տեսակէտով :

Գանք հիմա պ. Չերազին անձնական գերին այս գործին ամբողջութեանը մէջ : Պ. Չերազ ընդունեցաւ անդամակցել Հայկական Միութեան առժ. տնօրէն ժողովին եւ երկու ամիս գործակցեցաւ անոր : պ. Չերազ ոչ միայն մասնակցեցաւ տնօրէն ժողովին գործունէութեա-

նը, — հետեւաբար ճանչցաւ անոր օրինաւորութիւնը, — այլ եւ ժողովին կողմէ գնաց անդամակցութեան հրաւիրել ի միջի խուժք մը բարիզարնակ Հայերու պ. Գալբաքճեանը, որ ընդունեցաւ, գիտնալով հանդերձ որ այդ ժողովին նախագահը պ. Իսքէնտէրն էր եւ քարտուղարը ես էի : Բայց պ. Չերազ որ չէր կրցած միութարուել նախագահ կամ գոնէ քարտուղար ընտրուած չըլլալէն, առիթի մը կը սպասէր վրէժը լուծելու համար. առիթը չուշացաւ. ժողովին նիստերէն մէկուն մէջ, վէճ մը տեղի ունեցաւ սա խնդրոյն վրայ թէ շրջաբերականին ներքեւ նախագահին եւ քարտուղարին հասցէին հետ գանձապահին ալ զրուելու էր. գանձապահը, պ. Փրիտոնեան, Բարիզէն երկար ատենուան համար մեկնած ըլլալով՝ առանց ո եւ է հրահանգ թողլու, անկարելի էր անոր հասցէն գործածել. ժողովը միաձայնութեամբ որոշեց նախագահին եւ քարտուղարին հասցէն միայն դնել : Գանի մը օր յետոյ, պ. պ. Գալբաքճեան եւ Գայաննիստին մէջ անցած վէճը իր բոլոր մանրամասնութիւններով իմացած էին՝ շնորհիւ պ. Չերազին, ու միանգամայն ձեռք անցուցած էին օրինակ մը շրջաբերականին, որուն տպագրութիւնը յանձնուած էր Միութեան «ագնիւ» գրադարանապետ Բասմաջեան բեւեռագէտին : Այդ վայրկեանէն սկսեալ է որ պ. պ. Գալբաքճեան եւ Գայաննիստ յայտնութիւնն ունեցան այն բոլոր ոճիրներուն վեր պ. Իսքէնտէր եւ ես գործած էինք, եւ գացին պ. պ. Թամազեանին ու Ղամբարեանին մօտ կատարել իրենց զրպարտողական պաշտօնը, որ ծնունդ տուաւ պատուոյ ատեանին :

Պատուոյ ատեանին մէջ, պ. Չերազ եկաւ պ. պ. Գալբաքճեանին ու Գայաննիստին կողմէն վըկայել, հաստատելու համար անոնց մէկ ամբաստանութիւնը. պ. Չերազ իբր փաստ կը յիշէր զրոյց մը զոր իմացած էր անձէ մը՝ Հայկական Միութեան կազմութեանէն տարի ու կէս առաջ. եւ սակայն, ենթացելով որ իբրք համոզուած ըլլար թէ ես անագնիւ անձ մըն էի, պ. Չերազ առանց ո եւ է առարկութեան ընդունեցաւ երկու ամիս անդամակցել ինծի. չմոռնամ դիտել տալ որ պ. Չերազ, այդ անարգ ծառայութիւնը յանձն կ'առնէր մատուցանել այն պ. Գալբաքճեանին որ երկու տարի առաջ իր մէկ գրքոյկին մէջ, սա տողերը նուիրած էր իրեն .

Ըստ մեզ՝ երկու պարագաներու մէջ ալ մեծապէս հակադրուցին ու մեծապէս ոչստասխանատու ուղղութիւն մը՝ այդ Չերազին հետեւածը։ Չերազը նոյնն է երէկ, այսօր, յաւիտեան։ Այդ շիֆ ազգային մուրացկանը Պերլինի դուռը թողուց Լոնտոնի դուռը ձեռք առաւ, ստիկա ալ ձգեց ու հիմա Բեթերսպուրկի դրան շէմքին վրայ կայնած կողկողածայն «ոզորմութիւն» կը մրմնջէ։ Երբ անկից ալ ձեռնուենայն ճամբուի (ու պիտի ճամբուի...) իր շունչը պիտի առնէ Ուաշինկթօնի դրան առջեւ, յետոյ Պոչիս, վերջը կրկին Պերլին՝ ու այսպէս յաջորդաբար։

(Ի ԽԱՉ ՀԱՆ ԶԴԱ, էջ 22)

Պատուոյ ատենին վճռին արձակումէն յետոյ, երբ Միութեան առժ. տնօրէն ժողովը իր նիստերը վերսկսաւ, պ. Չերազ իր հրաժարականը դրկեց, առանց ո եւ է պատճառաբանութեան, ոչ թէ նախագահ պ. Իսքէնտէրին, ինչպէս պարտաւոր էր, այլ դեր-նախագահ պ. Թամաձեանին։ Տեսութեան մը մէջ, պ. Թամաձեանին բացատրած էր յետոյ՝ թէ հրաժարած էր որովհետեւ չէր ուզեր «ամբաստանութեան ենթարկուած» երկու անձերու անդամակից ըլլալ (օ՛, Արքայութեան արժանի հողին), եւ պ. Թամաձեանին ուղղած էր իր հրաժարականը որովհետեւ ան՝ դեռ «ամբաստանութեան ենթարկուած» չըլլալով՝ իր յարգանքը կը շարունակէր վայելել, մինչդեռ պ. Իսքէնտէր այլեւս զրկուած էր այդ պատիւէն, եւ երբ պ. Թամաձեան դիտել առած էր թէ ամբաստանութիւններն այլ եւս գոյութիւն չունէին քանի որ չէին ապացուցուած, պ. Չերազ պատասխանած էր թէ իր հրաժարականը, թէեւ պատուոյ ատենէն վերջը յանձնուած, անկից առաջ շարադրուած էր, եւ թէ կը բաւէր որ մարդ մը ամբաստանութեան մը «ենթարկուի» որպէս զի ինքը մերժէ անոր հետ անդամակցիլ (կը կարծէ՞ որ Հոովմէացւոց պատմութեան մէջ գտնուի հերոս մը որ նկարագրի այս գլուխ դարձնող բարձրութեան հասած ըլլայ երբեք)։ պ. Չերազ կը յուսար որ պ. պ. Թամաձեանն ու Ղամբարեանը, իր օրինակին պիտի հետեւէին եւ տնօրէն ժողովը կազմալուծուելով, նոր մը պիտի ընտրուէր՝ որուն ինքը պիտի ըլլար նախագահը։ պ. պ. Թամաձեան եւ Ղամբարեան չունեցան այդ ընթացքը, եւ գումարուեցաւ յուլիս 31ի ժողովը, որուն մէջ պ. Չերազ, նախագահ, թոյլ տուաւ որ ոչ միայն պ. Իսքէնտէր եւ ես դատափետուէինք, այլ եւ քննադատուէին ու նախատուէին պ. Ղամբարեանն ու մանաւանդ պ. Թամաձեանը, որուն դեռ երկու շաբաթ ա-

ռաջ այնքան ծայրայեղօրէն փողաբուռ յարգանք մը կ'ընծայէր. այդ նոյն գումարումին մէջ պ. Չերազ թոյլ կուտար միանգամայն որ ապօրինի հռչակուէր կազմութիւնն այն առժ. Տնօրէն ժողովին որուն անգամն ըլլալ ընդունած էր եւ որուն նիստերուն երկու ամիս մասնակցած էր՝ առանց ո եւ է առարկուութեան։

Եւ պ. Չերազ այս լիբը վարմունքը կ'ունենար այն պ. Իսքէնտէրին հանդէպ, որմէ եւ իր ընկերներէն տարիներով նիւթական օժանդակութիւն ընդունած է Լոնտոնի մէջ իր թերթը հրատարակած ատեն, եւ որուն քով պատկանելի խորձ մը կայ պ. Չերազի կողմէ գրուած նամակներու, որոնք «երախտագիտութիւն» բառին բոլոր հոժանիչներովն ու անոր կցուիլ կըցող բոլոր սողուն վերադիրներովը բեռնաւոր են։

Ահա այն մարդը որ հիմա կը համարձակի մեղադրել զիս դատ բանալու որոշում տուած ըլլալուս։ Թուած բոլոր իրողութիւններս պայմանօրէն կ'ապացուցանեն որ եթէ ես ըստիպուեցայ այդ ծայրայեղ որոշումը տալ, պ. Չերազն է ատոր գլխաւոր պատճառներէն մին։ Եւ դատը չէ որ կը կազմէ «գայթակղութիւնը», այլ դատին առաջնորդող դէպքերն են որ կը կազմեն մեծագոյն «գայթակղութիւններէն» մէկը որ պատահած ըլլան ո եւ է ազգի մէջ. դատը պիտի ըլլայ այն բժշկական գործողութիւնը որ այդպիսի «գայթակղութիւններու» վերանորոգումը պիտի արգիլէ այլ եւս մեր մէջ։

Արդէն, պ. Չերազ թող չկարծէ թէ իմ դատ բանալս կրնայ արգարացնել իր այն բոլոր յօդուածները որոնք հայ ժողովուրդը Ֆրանսասացւոց սիրելի եւ յարգելի դարձնելու, հայկական դատը Ֆրանսային համակրելի ընելու պաշտօնն ստանձնած թերթի մը մէջ՝ Հայոց ներքին անձնական վէճերը կը փոխն ֆրանսացի ընթերցողներուն առջեւ, եւ այն յօդուածները մանաւանդ որ նպատակ ունին մեր դատին համար աշխատող կարգ մը Ֆրանսացիներու գործը վարկաբեկ ընել։ Այդ անբացատրելի, աններելի ընթացքին եւ իմ դատ բանալուս միջեւ ո եւ է առնչութիւն չկայ. իմ բացած դատս օգտակար պիտի ըլլայ հայ ժողովուրդին. պ. Չերազին այդ կարգի յօդուածները ոչ մէկուն եւ ոչ մէկ բանի օգտակար ըլլալու բնութիւն չունին, եւ խորապէս վնասակար են Հայոց դատին։

ԱՄՔ ՄԸ ՇԱՐԺՈՒՄԻՆ

«Շարժում»ի մէջ կէՏ ստանունով յօդուածազիր մը, «Անահիտ»ի վերջին թիւին մէջ «Կոուողներուն համար» տիտղոսով գրածիս մասին խօսելով, մատնանիշ կ'ընէ իմ այն սողերս ուր կը խոստովանէի հայ յեղափոթեան մասին յայտնած գաղափարներէս ոմանց մէջ սխալած ըլլալս, եւ կ'ըսէ՝

«Չօպանեանի այս սողերը մեզի իրաւունք կուտան կարծելու թէ ան յամառ մարդ չէ, ընդունակ է իր սխալները ըմբռնել եւ աւրիութիւնը ունի հրապարակաւ խոստովանելու իր սխալած ըլլալը»:

Հստ իս՝ «արիութիւն»ը շատ խոշոր բառ մըն է սխալած ըլլալը խոստովանելու արարքին համար. ատի ամենապարզ պարտականութեան մը կատարումն է (որովհետեւ անորոշութիւն չեմ սիրեր այսպիսի ծանր խնդիրներու մէջ, առաջին առիթով պիտի ճշգրտեմ այն կէտերը որոնց վրայ սխալած ըլլալուս այսօր համոզուած եմ): Միայն պիտի հարցնեմ «Կէտ»ին՝ ինչո՞ւ գիտե՞լ չէ տուած իր այդ յօդուածին մէջ թէ այդ «արիութիւնը», գոր ինձի կը վերագրէ, բացարձակապէս պակասած է միշտ «Շարժում»ին: «Շարժում»ը հրատարակեց, ոչ թէ, ինչպէս կ'ըսէ «Կէտ»ը, յօդուածներ որ իմ գաղափարներս կը քննադատէին (այդպիսի յօդուածներ հազիւ մէկ երկու անգամ միայն երևցած են այնտեղ, եւ ատոնց մասին երբեք գանգատ չեմ յայտնած, որովհետեւ միշտ յարգած եմ կարծիքի տարբերութիւնը) այլ գծուծ յօդուածներ, անստորագիր սրիկաներու կողմէ խմբագրուած, իմ անձս անուանարկելու նպատակ ունեցող: Այդ յօդուածներուն մէջ յիշուած բոլոր զրպարտութիւնները յստակօրէն հերքած եմ «Անահիտ»ին մէջ. «Շարժում»ը ուրիշ բան չէ ըրած բայց եթէ իր բարիզեան թղթակցին ստանունը փոխել եւ զրպարտութեանց նոր շարքի մը հրատարակումն սկսիլ: Երբեք «Շարժում»ը բարեխղճութիւնը չէ ունեցած իր սխալը խոստովանելու, նոյն իսկ այնպիսի խնդիրներու մասին որոնց անհիմ ըլլալն իր խմբագրապետին անձնական բարեկամներն իսկ իրեն ապացուցած են: Եւ դեռ վերջերս, գիտնալով հանդերձ որ պ. Քալբաքճեանի ամբաստանութիւնները անհիմ էին, «Շարժում»ը հրատարակեց ամենազղուելի յաւելուած մը ուր

անստորագիր վեռուն մը պատուոյ ատեանը, դատաւորները եւ իմ անձս տիղմերու մէջ կը թաթխէր (առանց վճռին բնագիրը յիշելու), եւ կարծեց ինքզինքն արգարացուցած ըլլալ յայտարարելով թէ այդ յաւելուածին պատասխանատուութիւնը հեղինակին վրայ կը ձգէր: Հետաքրքիր եմ տեսնել թէ «Կէտ»ը «արիութիւն»ը պիտի ունենա՞յ հրապարակաւ խոստովանելու հասարակ պարտաճանաչութեան այդ վիթխարի պակասը որ միշտ յայտնուած է «Շարժում»ին ընթացքին մէջ(1):

(1) Շատ աւելի բացատրելի եւ ներելի է ընդհանուր գաղափարներու արտայայտումին մէջ սխալ մը գործած ըլլալը քան անձի մը նկարագրին, անհատական կեանքին վրայ անձիչք տեղեկութիւններ հրապարակելը. երկու շատ պատուաւոր մարդիկ կրնան՝ հաւասար անկեղծութեամբ՝ իրարու բացարձակապէս ներհակ կարծիքներ ունենալ՝ միեւնոյն գաղափարին վրայ: որովհետեւ ընդհանուր գաղափարը օգտին բան մըն է՝ իւրաքանչիւր անձի խառնուածքին եւ դիտողութեան եղանակին համեմատ գունափոխուող, մինչդեռ անձի մը նկարագրին ու անհատական կեանքը շօշափելի, դիւրաւ վերաքննելի բան մըն է. մարդու մը Բարիզի օսմանեան զեսպանատան հետ յարաբերութիւն ունենալը կամ չուենալը, Սուլթանին կենացը բաժակ առաջարկելը կամ չառաջարկելը, ո եւ է տարտամութիւն չեն վերցնէր, որոշ խնդիրներ են. անհրաժեշտ է միայն որ լրագրագետ մը այդպիսի խնդիրներու վրայ վճիռ մը արձակելէ առաջ՝ լրջօրէն քննէ իրողութիւնները եւ հրատարակէ միայն ինչ որ վստահ է թէ նիշդ ե: «Շարժում»ի խմբագրագետ «Վարդօ»ին առաւել կամ նուազ ազնիւ նկարագրին, առաւել կամ նուազ մաքուր բարքերուն վրայ ինձի դէզերով յօդուած զրկած են, բայց անոնցմէ ոչ մէկը չեմ հրատարակած, որովհետեւ ինձի երբեք չեմ կրնար ներել հրապարակել չստուգուած ամբաստանութիւններ ու եւ անձի նկատմամբ. իսկ «Վարդօ»ն՝ առանց խղճահարութեան՝ իր թերթին դուռը միշտ բացած է ո եւ է անցորդի որ հակառակորդի մը վրայ միտուութիւն մը ունէր թափելու, որպէս թէ իր թերթը Ենի-ձամիի հանրածանօթ հաստատութեան մէկ մասնաձիւղն ըլլար:

Պ. ՉԵՐԱՉ ԵՒ ՇԱՐԺՈՒՄ

«Շարժում»ի խմբագրապետ «Վարդո»ն շատ կծու յօդուածով մը ձաղկած էր Պ. Չերազի ազերապիրը Չարին ուղղուած, զայն կոչելով «արեւելեան սարկութեան նմուշ մը», եւն: «Շարժում»ի ուրիշ թիւով մը «Վարդո» նոր յօդուած մը կը նուիրէր Չերազի մէկ նորհրատարակութեանը որուն մէջ ուսու դիւանագետի մը յայտարարութիւնները կը յիշուէին Հայկական խնդրոյն մասին: «Վարդո» կը բողոքէր այդ կարծիքներուն դէմ ոճով մը որ Պ. Չերազին համար գգուական ըլլալէ հետո էր:

«պ. Չերազ, կը գրէր «Վարդո», այդ նշանաւոր դիւանագետի անունը չէ յայտարարում. եւ մնալ թու՛մ է որ այդ յօդուածը կարծես պատասխան լինի բոլոր այն իրաւացի քննադատութիւններին որոնք կատարուեցին Չերազի հայ ազգի կողմից Չարին ներկայացուած անհաւ եւ մեր ժողովուրդը ստորագնող ազերազրի առթիւ...: Ինչպէս երեւում է, Չերազ համակարծիք է ուսու դիւանագետին հետ եւ շուտով ուսական վայրենութիւնների պաշտպանի դերն եղ պիտի ստանձնէ:»

«Լ'Արմէն»ի դեկտեմբերի թիւին մէջ, պ. Չերազ գորովալից փայտով մը կ'ընդունի այս ապտակը. «պատասխանելով «Վարդո»ի այդ յօդուածին,

«պ. Վարդո», կ'ըսէ, այն նկարուն ոճով, որուն գաղտնիքը ինքը միայն ունի(?)...» եւն:

Մենք ժողովրդական առած մը ունինք որ շատ աւելի նկարուն է քան «Վարդո»ին ոճը: «Մարդիկ կան, կ'ըսէ այդ առածը, որոնք երբ երեսնուն թքնես, անձրեւ կուգայ» կ'ըսեն:

ԲՐՈՑ. Լ. ՄԱՐԻՅԵԷ

«Բրո Արմենիան» սապէս կը բացատրէ կորուստը զոր հայ ժողովուրդը կրեց Բրոֆէսոր Լէոն Մարիեյէի մահուամբը:

Խորին ցաւով է որ իմացանք մեր Լէոն Մարիեյէ աշխատակցին մահը: Այնքան անհրաժեշտ աշխատութեանց, այնքան օգտակար եւ ազնիւ գործերու նուիրուած իր կեանքին մէջ, լայն բաժին մը տուած էր կեղեքեալ Հայաստանին պաշտպանութեան: 1896ին, երբ ամէն մարդ կը լռէր Պրանսայի ու Եւրոպայի մէջ, ինքը առաջիններէն մին եղաւ որ հանրային բանախօսութեանց եւ ամսագրի յօդուածներու մէջ եւ

ըրեւան հանեց Սուլթանին ոճիրները, թէպէտեւ կառավարութեանց սովորական եղող վատութիւնով մը իրեն զգացուցին թէ ատի հնազանդ պաշտօնեայի մը իրաւունքներէն անդին անցնիլ էր: Պրանքօ-հայկական քոմիթէին հիմնարկութեանը նպատած էր պ. էրնէսթ Լավխի, պ. Բոլ Վիոլէի, Հայր Շարմիշանի եւ Բասթէօր Մանիէին հետ: Խաղաղասիրական ընկերութեանց համաժողովներուն՝ Յուցանադիսի միջոցին, կորովի որոշողութիւններ քուէարկել տուած էր ի նպատ մարտիրոս ազգին, եւ զեւ վերջերս հայկական խնդրոյն վրայ կը խօսէր Օթէլ տէ Սօսիէթէ Սափանթ կատարուած բանախօսութեան մը մէջ: Ժամանակակից իրողութիւնները ցուցադրելու մէջ կը բերէր այն նոյն քննադատական մեթոտը զոր կը գնէր իր հոգեբանութեան կամ կրօնքներու պատմութեան գործերուն մէջ, եւ առանց ո եւ է ճարտասանական արուեստակութեան՝ միմիայն ճշմարտութեան զօրութեամբը բոլոր ունկնդիրները իր դատին կը համոզէր:

Ան պիտի անմահ մնայ հաւատարիմ յիշողութեանը մէջ անոնց՝ որ զինքը ճանչցան ու սիրեցին, նաեւ երախտագէտ հողւոյն մէջ հեռուոր եւ անմահութ բարեկամներուն որոնք իր անունն իմացած էին այն կարմիր երկիրներուն մէջ ուր մարդ կը ջարդեն:

Բոլոր այն հայերը որ բարեբաղդութիւնը ունեցած էին մօտէն ճանչնալու Բրոֆէսոր Լէոն Մարիեյէն եւ զիտէին այն անկեղծ սէրն ու անձնուրութիւնը զոր ան ցոյց տուած էր մեր դատին համար, պիտի կսկծան այս տարածամ կորուստին հանդէպ: Մարիեյէ գլխաւոր նախադրելիներէն մին եղաւ Պրանսայի մէջ հայասիրական շարժման զարթումին, եւ մինչեւ իր վերջին վայրկեանը իր սիրտը մեզի հետ եղաւ, իր բոլոր ուժերը մեր դատին տրամազրուութեանը նուիրուած մնացին. իր տունը՝ այն ազնիւ ոգիին շնորհիւ զոր ինքն եւ իր գմայլիկ կինը, — բարութիւնը անձնաւորեալ, — ստեղծած էին այնտեղ, հայասիրութեան վառարան մըն էր: Մեր ժողովուրդը պիտի չմոռնայ այդ կեղեքուածներու սրտանց բարեկամ ու պաշտպան հանդիսացող Պրանսացիին անունը:

ԸՄՍԱԿԱՆԻ ԽՆԴԻՐԸ

«Ժող համար»ի վերջին թիւերէն մէկուն մէջ Պ. Վարսամեան, նախատանքի տարափ մը տեղադրելէ յետոյ «Նորկեանք»ի նոր խմբագրու-

Իսկ, ինքնին, այդ արհամարհանքը ամսականով գրական գործ մը կատարող գործիչին համար՝ անխմաստ եւ անազնիւ կը գանեմ: Ամսականի փոխարէն զաղափար փոխելը դատապարտելի է անշուշտ, բայց «Ժող. համար»ը նոյն իսկ ամսականով գրականութիւն ընելը, «գրականութեամբ ապրելն»ն է որ մեզք մը եւ ստորնսցում մը կը համարի. «Ժող. համար»ի խմբագիրները, որ քեմերնին ուռեցուցած սարաֆի հպարտութիւնով մը ամէն վայրկեան կը շեփորեն իրենց «գրամ ունեցող», «գրականութեամբ ապրելու կարօտ չեզոք» մարդոց հանգամանքը, նախատած կ'ըլլան նոյն ինքն Գրականութիւնը, ենթադրել տալով թէ գրչով ապրելու մէջ ամօթալի բան մը կայ, եւ միանգամայն ապուշ բան մը ըսած կ'ըլլան կարծելով թէ գրող մը անպատճառ անկողմնակալ եւ անշահախնդիր կ'ըլլայ՝ որովհետեւ փարայ ունի:

Ա. 20 ՊԱՆԵԱՆ

Յ. Դ. Ամէն ոք կը յիշէ որ երբ 1900ին «Բրօ Արմենիա»ն եւ Անահիտը ծանուցին թէ Ֆրանսական կառավարութիւնը երեք զրահաւոր զրկած էր Այնթապի մէջ պատրաստուող ջարդին առաջին անելու համար, պ. Չերազ բազմաթիւ յօդուածներով ճգնեցաւ սուտ հանել այդ լուրը, պնդեց թէ այդ նաւերը զրկուած էին միմիայն Պէյրութի մէջ Ֆրանսական ազդեցութիւնը վերականգնելու համար եւ թէ Ֆրանսական կառավարութեան այդ արարքը ո եւ է կապ չունէր Հայերուն հետ: Անկից ի վեր, կարգ մը թերթեր իրենց զուարճութիւն

(1) Այդ ճառին, ինչպէս Ֆրանքօ-թուրք վէճին լուծմանը մասին՝ պիտի խօսիմ Անանիսի յառաջիկայ թիւով:

մը դարձուցին այդ եղելութիւնը մասալի մը պէս ներկայացնելն ու ծաղրելը: Արգ, նոյ. 4ին խօսին մէջ (1) պ. Տեղքասէ հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ այդ խնդրոյն մասին.

«Հայոց եւ իրենց ողբալի կացութեանը մասին կը խօսիք, բայց պարոններ, ես երբեք անտարբեր չեմ գտնուած անոնց նկատմամբ: Եթէ կարելի չէր զիտնալ այն գիււանգրիտական ճնշումը, զոր բարեկամ պետութիւններու աջակցութեամբ Դրան վրայ բանեցուցած եմ, 1894ի, 1895ի եւ 1896ի ղէպքերուն կրկնումը արգիլելու համար, որովհետեւ ամենէն արգիւնաւոր գիււանգրիտական գործունէութիւնը ամենէն աւելի աղմուկ հանողը չէ, չտեսնուեցա՞ւ սահայն որ վերջին ճրմեռները՝ Միջերկրականի Ֆրանսական նաւատորմը փոքր-Ասիոյ ծովափունքներուն մօտ երեցաւ ճիշդ այն պահուն երբ սպառնալիքներ կը թուէին կուտակուիլ քրիտոնեայազգաբնակչութեանց գլխուն վերեւ: Եւ դեռ այս տարի, նոյն իսկ այս տարի, քանի մը ամիս առաջ, ըստ որում վտանգը կը թուէր սպառնալ Իսթէնտէրունի մօտ գտնուող Այնթապ գաւառակի հայերուն եւ քրիստոնէից, չտեսնուեցա՞ւ որ զրահաւոր յաճախակներու նաւաբաժինը յանկարծ խարխախ նետեց Իսթէնտէրունի ծոցին մէջ» (2)



(2) Երեքնաւերը գացած էին նախ Մերսին, ինչպէս Բրօ Արմենիա ծանուցց, եւ յետոյ Իսթէնտէրուն, յետոյ Պերութ, եւն: պ. Տեղքասէ Իսթէնտէրունը միայն յիշած է, որովհետեւ Այնթապի ամենէն մօտ նաւահանգիստն է ան, եւ հոն է որ ծովակալ Բայեարը՝ ցամաքելլելով՝ իրեն յանձնուած պաշտօնը կատարեց ի նպաստ Հայերուն:

ՊԵՐՊՈՒՆՆԵՐ ԶՆՈՒ
ԻՐ ՅՈՒՆԵՆՆԵՐ ԱՌԹԻՒ

-000-

Նոյեմբեր 25ի օրը , Սորպոնի մեծ ամիր-
թաւոնին մէջ , տօնուեցաւ Փրանսայի եւ
աշխարհիս արդի մեծագոյն գիտնականներէն
մէկուն , Պերթըլոյի , յիսնամեայ յորելեանը :
Հանրապետութեան նախագահը , հանրային
կրթութեան նախարարը , Ֆրանսական գիտու-
թեան եւ համալսարանի ներկայացուցիչները
իրենց երախտագիտութիւնը յայտնեցին՝ յա-
նուն Ֆրանսական ժողովրդին՝ այդ մեծ ստեղ-
ծագործին որ Փրանսայի մտաւորական փառքը
բազմապատկեց :

Այստեղ կը թարգմանենք այն հոյակապ ճառը
որով Պերթըլօ իր շնորհակալութիւնները
յայտնեց եւ միանգամայն բացատրեց մէկ
քանի անմահ տողերու մէջ այն խտէալը որուն
իր կեանքը նուիրած է :

- Պարոն Նախագահ ,
- Պարոն Նախարար ,
- Սիրելի եղբայրակիցներս , պաշտօնա-
կիցներս ու բարեկամներս ,
- Եւ զուք երիտասարդներ , աշակերտ-
ներս եւ բարեկամներս ,

Խորապէս յուզուած եւ ճշմարտապէս շփո-
թած եմ այն մեծարանքներէն զոր ինձի կը
մատուցանէք այս վայրկեանիս : Այդ պատիւ-
ները , գիտեմ , իմ անձիս համար ձեր ունե-
ցած գորովէն չեն բղխիր միայն . պէտք է որ
զանոնք վերագրեմ նաեւ իմ տարիքիս , իմ
երկարամեայ աշխատութիւններուս եւ այն
մէկ քանի ծառայութիւններուն զոր կրցած եմ
մատուցանել մեր հայրենիքին ու իմ նմաննե-
րուս :

Նախ իմ տարիքիս : Ձեր համակրութիւնը
վերջին փայլով մը կը շողացնէ կանթեղը որ
մարելու մօտ է յաւիտենական գիշերին մէջ :
Յարգանքը զոր մարդիկ կ'ընծայեն ձերունի-
ներուն , արտայայտութիւնն է այն համերաշ-
խութեան որ ներկայ սերունդները կը միա-
ցնէ մենէ առաջ եկողներուն ու մենէ ետքը
գալիքներուն հետ :

Արդէն՝ ինչ որ ենք մենք , շատ քիչ չափով
մը վերագրելի է մեր անձնական գատանքին

եւ մեր անհատականութեան , որովհետեւ զայն
գրեթէ ամբողջութեամբ մեր նախահայրերուն
արիւնի նախահայրերուն եւ մտքի նախահայ-
րերուն կը պարտինք : Եթէ մենէ իւրաքան-
չիւրը , պիտութեան , արուեստի կամ բարո-
յականի կարգին մէջ հանրային ստացուածքին
բան մը կ'աւելցնէ , այն պատճառով է որ եր-
կայն շարք մը սերունդներ մենէ առաջ ապրած ,
աշխատած , մտածած եւ տառապած են : Սեր նա-
խորդներուն համբերատար դատանքներն են
որ ստեղծած են այս գիտութիւնը զոր զուք
այսօր կը մեծարէք :

Մենէ իւրաքանչիւրը , ինչ ալ եղած ըլլայ
իր անհատական նախածեռնութիւնը , իր յա-
ջողութիւններէն մեծ բաժին մը պէտք է նաեւ
վերագրէ հասարակաց մեծ գործին իրեն հետ
աշխատակցող ժամանակակից գիտնականնե-
րուն :

Արդարեւ , անցեալ դարուն ա' յնքան փայլուն
գիւտերուն ոչ ոք իրաւունք ունի տարա-
մերժ արժանիքն իրեն յատկացնելու , ասիկա
բարձրօրէն յայտարարենք : Գիտութիւնը էա-
կանապէս հաւաքական դրոժ մըն է , որ կը
կը կատարուի ժամանակներու ընթացքին մէջ ,
ջանքովը ամէն տարիքէ ու ամէն ազգէ բազ-
մաթիւ աշխատողներու , որոնք իրարու կը
յաջորդեն եւ կ'ընկերակցին՝ լոկեայն համա-
ձայնութիւնով մը , զուտ ճշմարտութիւնը փնտ-
ռելու եւ այդ ճշմարտութիւնը բոլոր մարդոց
վիճակին մշտանորոգ կերպարանափոխութեան
կիրարկելու համար :

Պարոններ ,
Ատենով գիտունները կը նկատուէին իբրեւ
ուսումնասէր եւ մտազբօս մարդոց խումբ մը՝
աշխատաւոր դասակարգներուն ծախքովն ապ-
րող եւ պերճանքի ու հետաքրքրութեան գործ
մը արտադրող՝ բաղդին նպաստաւորեալնե-
րուն զուարճութեանն ու ժամանցն հա-
մար : Այս նեղ ու անարգար տեսութիւնը , որ
այնքան քիչ հաշուի կը դնէր ճշմարտութեան
համար մեր ունեցած անձնուիրութիւնը եւ մեր
մատուցած ծառայութիւնները , այս նախապա-
շարու մը վերջապէս անհետացաւ երբ գիտու-
թեան զարգացումը ցոյց տուաւ թէ ընտելեան
օրէնքները կրնային կիրարկուիլ արուեստագի-
տութեան մէջ եւ թէ անոնց շնորհիւ աւանդա-
կան ու փորձաէան եղանակներուն տեղը գիտո-
ղութեան ու փորձարկութեան վրայ հիմնուած
տեսութեանց օգտարեւ կանոնները կ'անցնէին :

Այսօր ո՞վ պիտի համարձակէր գիտութիւնը նկատել իբրեւ ամուլ զբոսանք մը, հանդէպ ազգային ու անհատական հարստութեան ընդհանուր աճումին որ անոր արգիւնքն է: Շատանալով յիշել գիտութեան մատուցած ծառայութիւններէն թերեւս ամենէն շահեկանը, կը բաւէ որ բազմատեսք ժողովրդական գանգուածներու անցեալին մէջ ունեցած ստրկական ողորմելի վիճակը, այնպէս ինչպէս պատմական վկայարանները մեզի կը ծանօթացնեն զայն, անոնց այժմեան վիճակին հետ, որ արժանապատուութեան ու բարօրութեան տեսակէտով արդէն այնքան բարձրացած է, սպասելով այն արդար յոյսերուն որոնց իրականացմանը կ'աշխատին: Կա՞յ պետական մարդ մը որ համոզուած չըլլայ թէ այս անընդատական յառաջդիմութիւններէն աւելի մեծ ծառայութիւններ ալ պէտք է սպասել: Գիտութիւնը մարդկութեան բարերարն է:

Ահա ինչպէս գիտական արգիւնքներու շոշափելի օգտակարութիւնը հանրային իշխանութիւններուն ըմբռնել տուած է թէ լապտրաթուարներու աշխատութիւնը պէտք է որ քաջալիբեկ ու օժանդակեւ: Վասն զի ան ամենուն օգտակար կը հանդիսանայ անտեսական կարգին մէջ ինչպէս եւ հանրային առողջութեան տեսակէտով: Բայց ատի դեռ մէկ հատուածն է միայն մեր կատարածին: Գիտութիւնը աւելի հեռուն կը բարձրացնէ իր օրինաւոր յաւակնութիւնները: Ան այսօր կը պահանջէ մտաւորական, նիւթական ու միանգամայն բարոյական ղեկավարութիւնը: Անոր մղման տակ արդի քաղաքակրթութիւնը կ'ընթանայ հետզհետէ աւելի արագ քայլով մը:

Պարոններ,
Վերջացող դարուն առաջին կէսէն ի վեր, առանց աւելի առաջ երթալու, աշխարհիս երեսը տարօրինապէս փոխուեցաւ. իմ սերնդիս մարդիկը՝ նախնեաց ատենէն ի վեր ծանօթ եղող բնութեան քովն ու վերեւը նկատեցին գործունէութիւնը, եթէ ոչ հակաբնութեան մը, ինչպէս ըսած են երբեմն, այլ բարձրագոյն ու կերպով մը զերատարը բնութեան մը, ուր անհատին զօրութիւնը կը հարիւրապատկուի, կերպարանափոխելով մինչեւ ցարդ անձանօթ մնացած կամ չհասկցուած ուժեր, լոյսէն, մազնիսականութենէն, ելեքտրականութենէն փոխ առնուած:

Այս չէ բոլորը. ելլենք աւելի բարձր եւ աւելի արգաւանդ գաղափարներու կարգ մը:

Մարդուն ֆիզիքական ու բարոյական կազմաւորման ու տիեզերքին աւելի խորունկ ծանօթացումէն յառաջ կուգայ մարդկային ճակատագրին նոր յղացում մը զոր կը վարեն հիմնական ըմբռնումները տիեզերային համերաշխութեան՝ բոլոր դասակարգներուն եւ բոլոր ազգերուն միջեւ. ժողովուրդները միացնող այդ կապերը քանի՜ բազմապատկուած եւ աւելի սեղմուած են գիտութեանց յառաջդիմութիւններովը եւ վարդապետութեանց ու պատուէրներու միութեամբը զոր հաստատած իրողութիւններէն իսկ կը հետեւցնէ եւ զոր առանց բռնութեան եւ սակայն անխուսափելի կերպով մը ամենուն համոզմանը մէջ տիրական կը դարձնէ, այդ ըմբռնումներն յարաճուն ու հետզհետէ աւելի անդիմադրելի կարեւորութիւն մը ստացած են. անոնք կը ձգտին զուտ մարդկային հիմերն ըլլալ ապագայի բարոյականին ու քաղաքականութեան:

Ատով իսկ՝ գիտուններուն գերը, իբրեւ անհատ եւ իբրեւ ընկերակաւսն դասակարգ, հետզհետէ մեծցած է արդի պետութիւններուն մէջ. բայց հանդէպ ուրիշ մարդոց մեր պարտականութիւններն ալ կը մեծնան միեւնոյն ատեն, չմոռնանք երբեք ասիկա, հոչակները զայդ, այս վեհալայրին, Ֆրանսական գիտութեան այս պալատին մէջ: Մեր սոսկական սնապարծութեան գոհացման համար չէ որ աշխարհս այսօր յարգանք կ'ընծայէ գիտնականներուն: Ոչ, այլ անոր համար որ զբտէ թէ գիտուն մը որ ճշմարտապէս արժանի է այդ անունին, անշահախնդիր կեանք մը կը նուիրէ մեր ժամանակին «ոսկեշինական գործ»ին, ըսել կ'ուզեմ, ամենուն, հարուստներէն ու երջանիկներէն սկսեալ մինչեւ խոնարհներուն, ազգատներուն, տառապողներուն բազմին բարելամանը, որ ըստ մեզ, աւա՛ղ, շատ զանազաղ կը կատարուի: Ահա ինչ որ հանրային իշխանութիւնները կը յայտարարէին ինք տարի առաջ նոյն իսկ այս սրահին մէջ, Բասթիլօրը մեծարելով: Ահա՛ ինչ որ իմ Շափլէն բարեկամս ջանացած է արտայայտել այն գեղեցիկ մետալին վրայ զոր հանրապետութեան նախագահը ինձի պիտի նուիրէ: Չեմ գիտեր թէ կրցա՞մ եմ ամբողջապէս իրագործել այն ազնիւ իտէալը զոր արուեստագէտը պատկերացուցած է, բայց գոնէ ջանացած եմ զայն առարկան, վախճանը, վարիչ նպատակը ընել իմ կեանքիս:

ՊԵՐԹԸԼՕ

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԵՐԸ



«Մաթեն»ի սեպ . 30ի թիւով հրատարակած իր նշանաւոր նամակին մէջ , Պ. Իսմայիլ-Քէմալ պէյ կառարեւապէս իրաւունք ունէր օսմանեան պետութեան բոլոր ժողովուրդներուն զգացմանց ինքզինքն իբրև թարգմանը ներկայացնելու՝ յայտարարելով թէ այդ բոլոր ժողովուրդները «իրենց յոյսը կը դնեն Ֆրանսայի անշահախնդրութեան եւ արդարասիրութեան վրայ» եւ թէ Սուլթանին հանդէպ անոր բռնած այժմեան դիրքին մէջ «կ'ընդունըմարեն Արեւելքի դժբաղդ ժողովուրդներուն համար արդարութեան դարազլիք մը բացումը :

Ֆրանսո-թուրք վէճին պայթումէն անմիջապէս յետոյ , միեւնոյն ատեն երբ Տամատ-Մահմուտ փաշայի երկու որդիները Պ. Լուպէին կը զրկէին նամակ մը որով Ֆրանսան կը հրաւիրէին Երիտասարդ-թուրքերուն օգնել՝ Տաճկաստանը վերակազմելու իրենց ջանքին մէջ , ամէն երկրի ու ամէն կուսակցութեանց Հայերը Ֆրանսայի կը զիմէին խնդրելով որ ան իր վէճն ընդլայնէ եւ զայն արդիւնաւոր դարձնէ արդի տաճկական ռեփրմին բոլոր զոհերուն . Դրօշակեան կուսակցութիւնը , ժենեվէն , կը ներկայացնէր Պ. Տէլքասէին , «Իբո Արմենիա»ի խմբագրապետ Պ. Բիէր Քիյեարի միջնորդութեամբ , յիշատակագիր մը որ Ֆրանսայի միջամտութիւնը կը խնդրէր Հայաստանի մէջ բարենորոգմանց գործադրումին համար . Հնչակեան կուսակցութիւնը , Լոնտոնէն , Քոմբիէյն կ'ուղղէր յիշատակագիր մը Ֆրանսական Հանրապետութեան նախագահին եւ Ռուսիոյ կայսեր , հրաւիրելով անոնց ուշադրութիւնը տաճկական Հայաստանի ներկայ հրէշային կացութեան վրայ եւ խնդրելով անոնցմէ միջամտել՝ չմղելու համար Հայերը յուսահատութեան խորհուրդներուն հետեւելու :

Արիւնի չարագուշակ խրամատով մը իրարմէ բամնուած , Հայերն ու Թուրքերը կրցան ուրեմն՝ այս պարագային՝ միմեաւ Ֆրանսայի մօտ այս միաժամ դիմումին մէջ :

Պ. Իսմայիլ Քէմալ Պէյի նամակը միութեան ուրիշ գիծ մը կը բերէ երկու ժողովուրդներուն միջեւ :

«Մենք պատրաստ ենք կ'ըսէ պ . Քէմալ Պէյ՝ բոլոր օսմանցիներուն անունովը խօսելով , ընդունիլ ո եւ է կարգադրութիւն որ նպատակ

ունենայ Պոլսոյ մէջ հաստատել պարկեշտ ու մարդկային կառավարութիւն մը , կարող՝ օտար ազգերու հետ լաւ յարաբերութիւններ երաշխաւորելու եւ միջազգային յանձնառութեանց արժէքը գնահատելու , ու թաց աստի՛ գաւառներու մէջ հիսնեղու այլազան ժողովուրդներու օրինաւոր բողոքակներուն համար պատասխանող վարչութիւն մը :»

Առաջին անգամն է որ Երիտասարդ-թուրքերու պետերէն մէկը այսքան ազատական եւ այսքան ուշիմ ձգտում մը կ'արտայայտէ : Հինգ վեց տարիէ ի վեր Երիտասարդ-թուրքերը անզաւար Հայերը հրաւիրեցին իրենց հետ միանալ՝ Տաճկաստանի ընդհանուր վերանորոգմանը աշխատելու համար , բայց երբեք չուզեցին ընդունիլ Հայոց մասնաւոր պահանջներուն օրինաւորութիւնը . երբեք չուզեցին հասկնալ թէ Հայերը , — ինչպէս եւ պետութեան միւս քրիստոնեայ ժողովուրդները , — կը տառապին ոչ միայն իբրև Օսմանցի՝ կառավարական զարչելի սիստեմին հետեւանքովը , այլ նաեւ , ու մանաւանդ , իբրև «բայա» , մատնուած՝ ոճրադործ կատաղութեանը Սուլթանին որ զիրենք ամբողջովին ցնջել կը ձգտի եւ վայրագութեանը մահմետական պաշտօնատներու եւ թուրք ու քիւրտ բնակչութեան որ սխուր եւ ոտնոց մը ցոյց կուտան Սուլթանին դժոխային յատակազիծը գործադրելու :

Կարգ մը Երիտասարդ-թուրքեր աններելի յանցանքը գործեցին ոգեւար Հայութեան տըրտունջը խեղդել ջանալու՝ եւրոպացի հայասերներուն յայտարարելով թէ «հայկական խընդիւր չկայ» , թէ Տաճիկները կը տառապին այնքան որքան Հայերը , եւ թէ Միտհատ Փաշայի Սահմանադրութեան վերահաստատումը պիտի բաւէր մէկ օրէն միւսը ամբողջ երկիրը իր բոլոր մասերով բուժելու : Հայաստանն ինչպէս Մակեդոնիան , Ալպանիան ինչպէս Սուրիան , Քիւրտիստանն ինչպէս Արաբիան խաղաղեցնելու :

Օսմանեան պետութեան այլազան ժողովուրդներուն մասնաւոր բաղձանքներուն օրինաւորութիւնը ճանչնալով՝ պ . Իսմայիլ-Քէմալ Պէյ անհուն ծառայութիւն մը կը մատուցանէ նոյն իսկ Թուրքիոյ գաղտին . կը փափաքէի որ բոլոր Երիտասարդ-թուրքերը ուշադրութեամբ կարգային պ . Քէմալ Պէյի այս տողերը , անոնց վրայ խոկային եւ իրենց հաւանութիւնը տային անոնց :

Տաճիկները պէտք է լաւ մտածեն սա կէտին վրայ որ եթէ իրենց կառավարութիւնը եւ ամ-

բողջ ժողովուրդը զփկամակած չըլլային Յոյներուն, Սերպերուն, Պուլկարներուն, Կրետացիներուն ամենափոքր մասնաւոր բարենորոգում մը չնորհել, իրենց պետութեան այդ բոլոր նահանգները կորսնցուցած պիտի չըլլային, հայկական տաղնապին սկիզբը, եթէ խելացութիւնն ունեցած ըլլային իրագործելու այն մէկ քանի տարրական, անհրաժեշտ բարենորոգումները զոր Հայերը կը պահանջէին եւ որոնք ո եւ է ձգտում չունէին երկրին ամբողջութեանը վնաս հասցնելու, հայկական խնդիրը պիտի երբեք չառնէր արդի ծանրութիւնը, այն մեծապէս վրտանգաւոր հանգամանքը զոր ունի այժմ աշխարհիս խաղաղութեանը եւ օսմանեան պետութեան ապահովութեանը համար:

Տաճիկները պէտք չէ որ մոռնան թէ հայ ժողովուրդը, է՛ն խաղաղատէր ժողովուրդներուն, օսմանեան կայսրութեան մէջ, սկիզբէն ի վեր աշխատութեան եւ արտադրութեան բարերար տարր մը կազմած է, թէ անոր դերը շատ մեծ է եղած իրեւ միջնորդ արեւմտեան քաղաքակրթութեան, — որուն վրայ կը հիանան եւ զոր կ'ընդգրկեն Երիտասարդ-թուրքերը — եւ Տաճկաստանի միջեւ, եւ թէ ան երբեք չէ ձգտած Տաճկաստանը կործանելու (այս մասին կը վկայեն Հնչակեան եւ Դրօշակեան կուսակցութեանց բազմաթիւ եւ յստակ յայտարարութիւններն իրենց լրագրիւրուն եւ ծանուցագրերուն մէջ), այլ օսմանեան պետութիւնը վերանորոգուած տեսնելու այնպիսի կերպով մը որ ներդաշնակ ու ազատ դաշնակցութիւն մը դառնայ, ուր կեդրոնական թուրք իշխանութեան մը շուրջը իւրաքանչիւր ցեղ իր ուրոյն զարգացմանը համար հարկաւոր եղած ազատութիւններն ունենայ, ինչոր՝ ամբողջութեան կենսականութեանը վնասելէ հետո՛ւ անոր զարգացմանը պիտի նպաստէր:

Տաճիկները պէտք է մտածեն թէ հայ ժողովուրդը, խառնուածքով այնքան հանդարտ, իր կրթած աշխատողի խաղաղիկ ու հեղ երեւոյթին տակ ազատութեան խանգավառօրէն սիրահար հողի մը կը պահէ եւ թէ՛ երբ իր համբերութիւնը հասցնեն՝ երբեմն ըմբոստացումի մեծ ընդոստիւններ կ'ունենայ — ատոր ապացոյցը մէկէ աւելի անգամներ տուած է իր երկայն ու եղերական պատմութեան ընթացքին մէջ, — որոնք վրդովիչ են բռնապետութիւններուն համար: Տաճիկները պէտք չէ մոռնան թէ տաճկական ու պարսկական Հայաստանին մէկ ստուար մասը Ռուսիա խլեց այդ երկու մահմետական պետութիւններուն ձեռքէն, որովհետեւ ա՛լ կատ-

ղած այն զգուելի ու սխտեմական կեղեքումէն որով կը տառապէին, հայերը, ձանձրացած երկայն ատեն ի զուր ուղղամիտ գիմուսներով Տաճկէն ու Պարսկէն հայցելէ տարրական արգարութեան ընթիմ մը որ գոնէ պատուոյ, կեանքի, ինչքերու ապահովութիւնը երաշխաւորէր իրենց, սուսական բանակին բնծայեցին այնքան անձնուէր որքան թանկագին աջակցութիւն մը եւ իրենք իսկ Ռուսերուն յայթանակը պատճառորեցին իրենց Լորիս Մելիքով, Լազարեֆ, Տէր-Ղուկասով հայրենակիցներուն հանճարովն ու արիւթեամբը:

Տաճիկները պէտք չէ մոռնան նաեւ որ եթէ վաղը Տաճկաստանը ո եւ է կերպարանափոխութիւն կրէ որ զինքը քաղաքակիրթ, գոնէ բնակելի երկիր մը գարձընէ, այդ երեւոյթը արդիւնքը պիտի ըլլայ՝ մեծ մասամբ՝ ինչեղորեւն քաջաբան հայ առիւնին:

Տաճիկները պէտք է ուրեմն «հայկական խնդիրը» նկատեն ոչ թէ իբրեւ ժխտական սաւտար մը իրենց քաղաքական ապագային համար այլ իբրեւ վերանորոգման ազգակ մը՝ եթէ գիտնան սգտուել անկից ոչ թէ հսակն ու նենգաւոր, այլ ուղղամիտ ու պայծառատես եղանակով մը:

Ա. ՉՊԱՆԵԱՆ

(Ռըվիւ պրանշ, 15 հոկտ.)



ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹՈՒՐԿԵՐՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



«Ռըվիւ պրանշ»ի յօդուածին, որուն թարգմանութիւնը կը հրատարակենք վերեւ, լոյս տեսնելէն քսանումէկ օր յետոյ, «Մաթէն»ին մէջ երեւցաւ հետեւեալ յայտարարութիւնը, զոր Իսմայիլ Բէմալ Պէյ կը հրատարակէր Երիտասարդ-թուրքերու բոլոր պետերուն կողմէ: Դէմալ պէյ, ցեղով ալպանացի, նախկին նախարար, նախկին պետական խորհրդական, նախկին վալի, եւ մին թուրքիոյ ամենէն զարգացեալ եւ հեղինակաւոր անձնաւորութիւններէն, այս յայտարարութեան մէջ կ'ընդլայնէր, կը մանրամասնէր եւ վերջնական յստակութեամբ մը կը լուսաբանէր «Մաթէն»ի հոկտեմբեր 1 թիւով հրատարակած իր նամակին այն կարեւոր պարբերութիւնը, որուն առթիւ գրուած էր «Ռըվիւ պրանշ»ին յօդուածը: Այս յայտարարութիւնը թուական մը կը բանայ Երիտասարդ-թուրքերու գործաւնէութեան մէջ: Մին-

չեւ ցարդ Ահմետ Րիզա եւ բոլոր Երիտասարդ-
 թուրքերը կը պահանջէին որ Հայերը եւ
 թուրքիոյ բոլոր հպատակ քրիստոնեայ ազ-
 գութիւնները ձուլուին Երիտասարդ-թուրքե-
 րու կուսակցութեան մէջ եւ միմիայն Միտ-
 հատի Սահմանադրութեան վերահաստատման
 աշխատին . անոնք չէին ընդունիր որ քրիս-
 տոնեայ ազգութիւնները իրենց տառապանք-
 ները դարմանող մասնաւոր բարենորոգում-
 ներ պահանջէին , չէին ճանչնար նոյն իսկ
 Պերլինի Դաշնագրին այն յօդուածները , որոնք ,
 թուրքիայէն ալ ստորագրուած , Հայաստանի
 եւ Մակեդոնիոյ համար մասնաւոր բարենորո-
 գումներ կը պայմանադրեն : Իրենց այդ այնքան
 անազնիւ որքան անուշիմ թաքթիքին դէմ
 Հայերը հանդիսաւորապէս բողոքեցին Բարիզի
 1900ի Մաղադութեան Համաժողովին մէջ .
 հիմա Խամ իլ Քեմալ պէյ կը փորձէ դարմա-
 նել այդ սխալը , եւ կ'երեւայ թէ յաջողած է
 համոզել Երիտասարդ-թուրքերու մեծամաս-
 նութիւնը : այս յայտարարութիւնը առաջին
 պաշտօնական գրութիւնն է որուն մէջ Երի-
 տասարդ-թուրքերը կ'ընդունին Պերլինի Դաշ-
 նագրին 21րդ , 61րդ եւ 62րդ յօդուածներուն
 գործադրութեան անհրաժեշտութիւնը՝ նոյն
 իսկ թուրքիոյ շահերուն համար : Կը մաղթէի
 որ այս յայտարարութիւնը իր ետեւէն բերէր
 արարքներ որ անոր անկեղծութիւնը տպա-
 ցուցանէին :

Ահա այդ յայտարարութիւնը :

«Մենք , թուրքիոյ մահմետականներս ու
 քրիստոնեաներս , Եւրոպային հանդէպ երախ-
 տագէտ՝ իր բարիքներուն համար , կը նշաւա-
 կենք արդի բեթիմին քաղաքականութիւնը
 այն պահուն ուր անկարգութիւնը ծայրայե-
 ղութեան հասցնելով՝ անըմբռնելի անպատկա-
 րութեամբ մը կը վարուի այն մեծ ազգին հետ
 որուն անշահախնդրութիւնը ամէն ժամանակ
 մեզ ամենէն աւելի խրախուսած է իր պաշտ-
 պանութիւնը խնդրելու :

«Օսմանեան Հարստութիւնը Լոնտոնի ու Բա-
 րիզի դաշնագրերով հաստատուեցաւ միջազ-
 գային իրաւունքի ամուր հիմունքին վրայ ,
 բայց այն որոշ պայմաններով որ պիտի ճանչ-
 նար , ինչպէս որ ճանչցած է կայսերական
 Հաթթերով , իր բոլոր հպատակներուն սիվիլ
 ու քաղաքական իրաւունքները ու բացարձակ
 հաւասարութիւնը , ինչպէս եւ ջնջումը առ-

յաւէտ դատապարտուած անցեալէ մը ժառան-
 գուած բոլոր զեղծումներուն :

«Օսմանեան պետութիւնը , կորուստէն մազ-
 ապուրծ ազատեցաւ Եւրոպայի ձեռքով՝ որ
 անոր վրայ պարտք դրաւ ճանչնալ եւ գոր-
 ծադրել Պերլինի դաշնագրին պայմանադրու-
 թիւնները : Ամէն ոք գիտէ թէ Պոլսոյ մէջ որ-
 քան կարեւորութիւն տրուեցաւ Պերլինի մէջ
 այնքան հանդիսաւորապէս ընդունուած այդ
 պայմանադրութիւններուն : արդարութիւնը
 ջնջուեցաւ , օրէնքները ռանակոխ եղան , հար-
 կապարտները անարգար ու կամայականօրէն
 հաւաքուած տուրքերու առկ ճզմուեցան , ինչ-
 քերու յարքունիս դրաւումը վերահաստատու-
 եցաւ , հանրախին գանձարանը կողոպտուեցաւ ,
 Տերութեան ծառայողները իրենց ամսականէն
 զրկուեցան ու բանակն իր ռոճիկէն , անվնաս
 ազգաբնակչութիւններ մեծաքանակ ջարդուե-
 ցան , ամբողջ երկիրը ծայրագոյն թշուառու-
 թեան մատնուեցաւ :

«Պիտի թողուն որ դեռ տեւէ : այս պաշտօ-
 նական անիշխանութեան , ոչնչականութեան
 վիճակը : Կառավարութիւնները պիտի շարու-
 նակե՞ն անտարբեր հանդիսատես ըլլալ այս
 անօրինակ շարագործութիւններուն կատար-
 մանը : Փրանսան , զոր դարաւոր յարաբերու-
 թիւններ Արեւելքի հետ կը կապեն , որ ան-
 շուշտ գիտակից է այն պարտաւորութեանց
 զոր ստանձնած է Սուլթանին հպատակներուն
 հանդէպ , Պերլինի վեհաժողովին մէջ իր լիազօր
 ներուն ձեռքով հակառակելով անոնց ի նպաստ
 որոշուած պայմանադրութեանց զանոնք ստու-
 րադրող պետութիւններուն հսկողութեանը
 ներքեւ գործադրուելուն , պիտի գիտնայ ինք ի-
 րեն արժանի մնալ՝ պահանջելով , այն հեղի-
 նակութեամբ որուն իրաւունք ունի , պատ-
 շաճագոյն դարմանները այն վէրքերուն որ
 թուրքիան կը կրծեն : Այդ դարմաններն ար-
 դէն որոշապէս նշանակուած են Պերլինի Դաշ-
 նագրին ատենադրութիւններուն մէջ որոնք
 անոր մեկնութիւններն են : 23րդ , 61րդ եւ 62րդ
 յօդուածները եւ անոնց կարգադրութեան-
 ցը համար խմբագրուած կանոնադրութիւն-
 ները , կը ճշդեն բոլոր այն իրաւունքները զոր
 ձեռք ձգած են թէ՛ Եւրոպական թուրքիոյ եւ թէ՛
 ասիական թուրքիոյ ազգաբնակչութիւնները :

Պերլինի դաշնագրին պայմաններուն ան-
 ցործադրութիւնը օրինազանցութիւն մը կը
 կազմէ , որ , վեհաժողովին նախագա-


հին յուրիս Գի նիստին յայտնած կարծիքին համեմատ, կը ստիպէ պետութիւնները ատոր վրայուշադրութիւն գարձընել եւ դիւանագիտական նոր ժողովներ գումարելու համար իրարու հետ համաձայնիլ: Ուրեմն միջազգային դեպքանաժողովի մը կամ յանձնաժողովի մը գումարումն է որ անհրաժեշտ կը դառնայ այժմ, որուն պաշտօնը պիտի ըլլար վերաքըննել արդէն բանաձեւուած որոշողութիւնները որոնք մեռեալ-տառ են մնացած, նոր որոշողութիւններ խմբագրել՝ արդի պարագաներուն եւ պետքերուն աւելի պատշաճող, խնդրոյ առարկայ եղող ազգաբնակչութիւններուն կարծիքն առնելէ յետոյ, եւ ջանալով որ առաջին առնուի այն բոլոր էնթրիկներուն որոնք պիտի ձգտին պետութեանց դիտաւորութիւնները մահմետականներու աչքին չարափոխելու: Աւելորդ է ըսել թէ մին ձեռք առնուելիք այն միջոցներէն զոր կացութիւնը պարտաւորիչ կը զարձընէ՝ այն է որ այդ յանձնաժողովը ինքն իսկ ստանձնէ, Բարձրագոյն Դրան հետ գործակցութեամբ, երկրին ելեւմուտքին վարչութիւնը, մինչեւ աւարտումը մտցուելիք նոր կազմակերպութեան: Եւ երբ Եւրոպան մինչեւ ծայրը կատարէ իր գործը, մահմետականներն ու քրիստոնեաները, եւրոպական ինչպէս ասիական թուրքիոյ բոլոր ժողովուրդները, ամենուն համար հաւասար արդարութենէ մը միեւնոյն չափով օգտուելով, այլեւս պառակտուած պիտի չմնան՝ իրար ջախջախելու համար, այլ ամենքը, եւրասիացիութեան միեւնոյն զգացման մէջ իրարու միացած, պիտի օրհնեն այն ազատիչները որոնց պարտական պիտի ըլլան հանգիստ ապրիլ եւ իրենց աշխատութեան արդիւնքը վայելել կարենալին:»(1)

Այս յայտարարութեան հրատարակումէն 10-15 օրի չափ յետոյ, Ս. Բեթերսպուրկէն «Քէօլնիչէ Զայթունկ»ին զրկուած հեռագիր մը ծանոյց թէ Ս. Բեթերսպուրկի կառավարական շրջանակներուն մէջ զրոյց մը կը պտըտէր որ Ռուսիա եւ Ֆրանսա որոշած էին յատաշիկայ գարնան Դեսպանաժողովի մը հրաւիրել եւրոպական պետութիւնները, ոչ թէ վերաքըննչելու համար Պերլինի դաշնագիրը, այլ անոր մեռեալ-տառ մնացած յօդուածները գործադրելու միջոցներուն խորհելու համար:

(1) «Մաթէն», 6 նոյեմբեր:

Իսմայիլ Բէմալ պէյ վերջերս նոր կոչ մը զրկած է ֆրանսական Հանրապետութեան Նախագահին, ծերակոյտի եւ երեսփոխանական ժողովի նախագահներուն, նախարարներուն եւ բազմաթիւ երեսփոխաններու եւ ծերակուտականներու, կոչ մը որ կը կրկնէ «Մաթէն»ի նոյ. 6ի թիւին մէջ հրատարակուած յայտարարութեան գաղափարները՝ Պերլինի դաշնագրին Տաճկաստանի վերաբերող յօդուածներուն «վերաքննութիւնը» գուրս ձգելով: Այդ կոչը հրատարակուեցաւ «Բրօ Արմենիա»ին մէջ:

Պիտի տեսնենք ընդհուպ այն ընթացքը զոր պիտի բռնէ պաշտօնական Եւրոպան՝ արեւելեան խնդրոյն այս նոր փուլին հանդէպ:



«Մանիս»ի յարող քուով տեսութիւն մը
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ
 մասին:

ՄԵՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

Ք Ի Ի Ր Տ Ը

Շար • եւ վերջ

— 0 —

Շեխ ձէլալէտտինի յաջորդը Պիթլիզի կուսակալէն խրախուսուած մեծ պատրաստութեան մէջ էր:

Այս դեպքերը ունի արդէն իր շուրջը եւ իր իշխանութեան տակ, կիսահաստատաբնակ քրդի կրօնամոլ եւ պնակալէզ ցեղ մը, որ Ռուսասան կը կոչուի եւ որու թիւը երկու հազարը կ'անցնի: Չբաւականանալով ատոնցմով, հրաւէր էր ուղարկած նաեւ ուրիշ ցեղերու, որոնց մէջ նաեւ Մոկաց «միր»երուն, «խան»երուն եւ «աշիրաթ»ներուն՝ պատրաստուիլ ի հարկին իր զբօջակին ներքեւ խմբուելու համար: Բայց վերջինները մերժողական պատասխան տալէ զատ, զգացուցեք ու սպառնացեք էին, որ չլինի երբեք համարձակի իրենց սահմաններուն մօտենալ անխոհեմաբար...:

Անդիէն ալ կառավարութեան «ճէլպ»երով (հրաւիրագիր) Համիտիէները կը կանչուէին գալ առանձին զօրանոցներու մէջ համախումբելի:

Այս ճէլպով , օր մը , Համիրիէ իւզպաշի մը (ծանօթ քիւրտ պէյ մը) եկաւ մեր գիւղը եւ հիւր նշանակուեցաւ մեր զբացւոյն : Նոյն օրը հիւրընկալ տանտէրը ունէր հայ պատուաւոր հիւր մը եւս : Վերջինս գաւառին այն հարուստ գերդաստանէն էր , որու ճոխ սեղանի համբաւը «հայր Արրահամու սեղան»ին տեղն էր բռնած երկրին շատ մասերուն մէջ եւ որու հայրը , Խ. 78ի պատերազմին , երբ ուսական բանակը սպառեց գաւառին թրքական ամբարները , իր սեփական հորերէն երկուհարիւր քիլէ գարի ձրի մատակարարեց տաճկական հեծելազնդի մը , իսկ այժմ Մ. քայն աստիճան չքաւորութեան էր մատնուած , որ ստիպուած էր օտարութեան գիմել , եւ հազիւ շաբաթ մը կ'ընէր իր վերադարձը : Այդ օրը , Մ. ք հիւրասիրուելով տանտիրոջմէն , իր սրտի ցաւերը մասամբ փարատելու համար գինովցած ինկած էր հիւրանոցի սաքուին վրայ : Երբ քիւրտ պէյի ծառաները տանտիրոջը հետ եկան պատշաճաւոր օթոց մը պատրաստելու պէյի համար՝ սաքուին վրայ , Մ. ք դժկամակեցաւ իր տեղէն ելլելու , որով ազայի օթոցը պատրաստեցին անոր կողքին : Պէյին բազմիչէն պահ մը յետոյ Մ. ք իր տեղէն ելաւ եւ առանց արժանաւոր յարգանք մատուցանելու քիւրտ պէյին՝ մօտի մտուրին մէջ քաշուեցաւ եւ սկսաւ իր ծխախոտն որոնել . պէյը իր ծխախոտէն հրամցուց գինովին , բայց ան խրոխտ վեհանձնութեամբ մը մերժեց ըսելով .

— Ծնորհակալ եմ . Դ*** , զոր Մ. ք արտասանեց առանց «ազա» մակդիրի , եթէ դուն (գաւառներու մէջ յոգնակի խօսելու քաղաքավարական ոճը մտած չէ) տուող մէկը լինէիր , պէտք էր այն ժամանակ տայիր , երբ դեռ ես ծխախոտս դտած չէի , բայց այժմ դտած եմ : Մենք Հայերս այսօրիս առած մ'ունինք , «Խոփը ինչքան որ մաշուի , անկէ դարձեալ մախաթ մը կ'իլլայ» , այսպէս ինչքան ալ որ աղքատացած լինինք մենք , մեր ծխատուփին մէջ սիկար մը գոնէ մնացած կը լինի : Վերջապէս պէտք է գիտնաս որ եթէ դուն Ա. ի որդին ես , ես ալ Խ. ի որդին եմ :

Աղան տեղեկանալով որ իր խօսակցը Խ. ի որդին էր , կարծես յիշելով մոռցուած բարեկամութիւն մը , ուղղուեցաւ դէպ ի տանտէրը եւ հարցուց :

— Իրաւ , ի՞նչ վիճակ ունի այժմ Խ. ի տունը : Տանտէրը ազայի այս հարցին տուաւ հե-

տեւեալ պատասխանը , որ պատմութիւն մը , բողոք մը , յանգիմանութիւն մը , վերջապէս երկարատեւ բռնութեանց տակ ճնշուած վիճակը սրտէ մը պոռթկած սեւ արեան հոսանք մըն էր ամենաբովանդակ . կը յիշեմ զայն իր հարազատ պարզութեամբը .

— Դ*** աղա , կ'ըսէր տանտէրը , ի՞նչու Աստուծոյ տան մասին չես հարցներ եւ Խ. ի տունը կը հարցնես . միթէ գուք՝ քրդերդ , թուրք Սասունոյ տունը անգամ չէն մնար , որ խեղճ Հայերուս տուները մնան : Մեր ցաւերը շատ իրար մի՛ սար , խելացնորութեան կը հասնինք : Դուք Գրդի նոր սերունդ , շատ անխելք ու Հայերուս համար շատ անխիղճ զրտնուեցաք , այնպէս որ ձեզմէ բնաւ յուսալի չէր այսօրինակ անպթութիւն : Ձեր հայրեր ու պապերը ձեր այս վերջին շարագործութեանց օրինակը բնաւ տուած չունէին . ընդհակառակը մենք՝ երկու ազգերս , առաջ՝ մինչեւ անգամ մօտիկ անցեալի մէջ , իրարու հարեւան բարեկամներ լինելէ աւելի , կարելի է ըսել դրացի եղբայրներ էինք ու հակառակ քանի մը «կետակիւտա»ներու (դատարկապորտ) սրիկայական գործերուն , որոնք իրենց արարքներու համար կը պատժուէին իրենց ցեղապետ-ազաներէն , մենք կ'ապրէինք իրարու հետ բարեկամական բոլոր յարաբերութիւններովը : Մեր ծառաները մեծ մասամբ Գրդեր էին , որոնք իրենց տերերու նկատմամբ որդիական ակնածութիւն մը ցոյց կուտային եւ այնքան հաւատարմութեամբ ու խնամով կը կատարէին իրենց պաշտօնները : Երբ մենք թուրքի հարկին համար դրամի պէտք ունենայինք , ձեզ կը դիմէինք համարձակ եւ կը յաջողէինք մեր պէտքը առանց մուրհակի կամ վկայի գոհացնել ձեր փոխատուութիւններով : Փոխադարձաբար (երբ դուք ցորենի եւ կամ ուրիշ պաշարի մը պակասութիւնը ունենայիք , մեր դոները , մեր ամբարները ձեր առջեւը բաց էին , կրնայիք տանիլ որքան որ պէտք էր ձեզ . մենք շահակից էինք իրարու . մեր կորուստը ձերն էր եւ ձեր յաջողութիւնը մերը , երբ իրարու հիւր կ'երթայինք , այնքան իրարու վրայ կ'աւերախանայինք եւ զիրար կը պատուէինք , որպէս թէ մեր մէկ սիրելին վերագործած ըլլար երկարատեւ պանդխտութենէ մը , մեր ամենաբնութիւն պատառովը կը հիւրասիրէինք զիրար , գառեր կը մորթէինք իրարու համար : Բայց այսօր . . . այսօր , դուն թէեւ պաշտօնապէս , բայց եւ

այնպէս հիւր ես իջած ինձի. ինչպէս որ գիտես՝ մեր առնը՝ եթէ ոչ մեր զաւառին մեր գիւղին գլխաւորներէն մէկն է : այո՛, ես այժմ ո՛չ թէ գառով, այլ ցամաք ցորենհացով անգամ, հակառակ ցանկութեանս, չպիտի կարողանամ ձիւրասիրել զքեզ, կորեկէ՛. հաց պիտի դնեմ առաջդ, եւ այդ՝ ձեր շնորհիւ : Ախրը՝ մեր երկրի մէջ ո՛վ էր տեսած կամ լսած ցորենի պակասութիւն : Երբ լեռնային դաւառներու մէջ սով կը պատահէր, եւ այս շատ յաճախ, մենք տարիներով կը կերակրէինք սովալլուկ ընտանիքները, եւ զեռ Աստուծոյ անհատնում պարաքեաթը մեր հորերու, ամբարներու մէջ էր, ցորենը տարիներով կը մնար հորերու մէջ կը փտտէր եւ մենք հորերը դատարկելու համար քամուն կը աայինք, գետերու ջրերուն կը յանձնէինք : Կորեկի գաղափարը մեզի կուտային այն թշուառ լեռնայինները միայն : Ծշմարիտ կ'ըսեմ, եթէ այն ժամանակ կորեկը անցնէր մեր ձեռքը, մեր հաւերուն առաջն անգամ պիտի ձգէինք, որ դժուարանային գետնէն հաւաքել . բայց այսօր մեր սիրելիները կորեկէ հացի պատաններ իրարու ձեռքէն կը յափըշտակեն : Ի՞նչ եղաւ մեզ, խոպանցածն արդեօք մեր պարարտ արտերը, կամ գոսացան մեր աշխատաւորներու երկաթեայ բազուկները : Ոչ մին եւ ոչ միւսը : Մեր արտերը՝ թերեւս աւելի եւս պարարտացած, ժրաջան երկրագործներու կը սպասեն, իսկ մեր մաճկալները՝ ձեր շնորհիւ զրկուած իրենց լծակից, իրենց թեւութիկունք եզներէն, սգաւորի յուսահատութեամբ հեռուոր աշխարհներու, օտար մթնոլորտի մէջ կը հեծեն հառաչանքով : Եթէ մարդս պահ մը քննելու ըլլայ ձեր գործած հարստահարութեանց եղանակը, ձեզ ըողորովին պիտի գտնէ ակներեւ կերպով կոյր գործիք դարձած թուրքին : Դուք զմեզ հարստահարեցիք ո՛չ թէ հարստանալու գիտակից գիտաւորութեամբ ու ինքնաբերաբար, այլ միմիայն եւ պարզապէս զիրենք թշուառացընելու անգիտութեամբ եւ թուրքի կամակատար խաբէութեամբ : Այս ցաւալի ճշմարտութիւնը ձեր արարքները կը վկայեն : Օրինակ՝ մեր ոչխարները, ձիերը տանելը հասկանալի է նորէն, որովհետեւ դուք հովիւ ժողովուրդ մը, եւ ասպազէն աւազակներ ունիք, անոնք կրնային ձեզի պէտք գալ . բայց եզներ, երկրագործական գործիքները տանելը... ախրը

ձեր ոչ թէ միայն գութանները, արօրները հապա սամի ու սամթելներն անգամ գիտենք թէ քանի հատ են, որովհետեւ շնորհիւ ձեր անընդունակութեան, բոլորն ալ մեր երկրագործներու ձեռքերովն են շինուած եւ սարքուած . ուրեմն դուք նո՞ր պիտի սկսէիք երկրագործներ դառնալ : Ի՞նչ բսնք հապա անոր, որ դեռ արտերու մէջ մեր հուճքերը հրկիզեցիք . գոնէ թողնէիք մինչեւ կը կալէինք, յետոյ ցորենը տանէիք, այն ալ բան մըն էր : Զայրօնաս կամ թէ սրգար ներողամտութիւն մը ունենաս, ինձ համար միեւնոյն է, ալա՛, — շարունակեց տանուտէրը բաւական մեղմացած կերպով — ես միշտ կը կրկնեմ, որ դուք՝ քրդերդ, շատ անխելք գտնուեցաք ու չարաշար խաբուեցաք թուրքէն : Մենք առաջ՝ հակառակ մեր այլակըրօնութեան, միշտ իրարու բարեկամ դրացիներ ենք եղած եւ էինք ալ . մեր մէջ միայն իրարու աղջիկ տալ ու առնելը կը պակսէր, այլակըրօնութիւնը մեր բարեկամութեան արգելք չէր հանդիսանար : Թուրքը՝ այդ օքար, խառնակիչ ու տնաքանդ տարրը, ատոնցմէ մէկը Հալէպէն, մէկը Շամէն ու Ֆմէկն ալ դժոխքի ո՞ր անկիւնէն եկած է մեր մէջ, ինչպէս որ մեզ, միշտ եւ հաւասարապէս թշնամի է եղած ձեզ . թուրքի գործին չէր գար մեր այն աստիճան բարեկամութիւնը, ուստի միշտ աշխատած է, կրօնակցի քօղին տակ, զձեզ իրեն քաշել, խտրութիւն դնել մեր մէջ, ձեր ձեռքովը մեր տունը քանդել, որ յետոյ կարողանայ իր ձեռքովն ալ ձեր տունը աւերել : Բայց ձեր պակերը խելացի են դանուած եւ չեն խաբուած ու ինկած թուրքի լարած թակարդին մէջ, եւ մենք միշտ հայտ էինք միացած իրարու հետ ու մեր բարեկամութիւնը անխզելի էր միացած : Զգիտեմ, ինչպէս մոռցաք ձեր այս նշանաւոր առածը՝ «Նայարա պապէ՛ նապը սօստա կուռէ» (Հօր թշնամին որդւոյն բաքեկամը չի՛ լինիր) ու խաբուեցաք : Հիմակ տեսա՞ք առածի ճշմարտութիւնը : Այն թուրքը, որ երէկ ձեր ձեռքովը մեր տները քանդեց, մեր պատիւը արատաւորեց, եւ այն ալ շատ ստոր, գողունի կերպով, այսօր նոյն թուրքը իր ձեռքովը արձակ համարձակ սկսած է ձեր տուները աւերելու ցորեկով, բայց արեւի տակ եւ ձեր ներկաօր յուժեան, ձեր ընտանեկան պատիւը բռնաբարել (հոս տանուտէրը կ'ակնարկէր միր-ալայի արարքները) : Թէ ձեր ազնուական խրոխտ հոգիները ի՞նչպէս հանդուրժեցին եւ զեռ կը

հանգուրժեն այս անօրինակ անպատուութեանց, այդ մէկզի թողունք . միայն չգիտեմ վերջապէս հիմա գոնէ այլեւս կրցած էք զգալ եւ ըմբռնել ձեր սխալը . . . »

Տանուտէրի այս համարձակ ամբաստանութեան պարսաւակոյտի ամբողջ միջոցին, ճըշմարիտը խօսելով, բովանդակ մարմնովս կը դողայի մուրին մէջ . «Արջ օրհասականք հըզօրագոյնս մարտնչին» առածի ճշմարտութիւնը՝ այն օր դեռեւս նոր կարողացայ ըմբռնել : Տանուտէրն իր վաղեմի ստրկական անհամարձակութեամբ եւ աղան իր վայրենի սանձարձակութեամբ ինձ ծանօթ էին : Կը կասկածէի եւ կը հաւատայի, որ աղան զայրացած վատասիրտ Հայու այս անօրինակ զեղծմանը վրայ, անմիջապէս պիտի մերկացնէ իր սուրը եւ մէկ հարուածով պիտի թոցնէ անոր այլայլած կերպարանքը : Բայց ո՛չ, որքան կը զիտէի աղայի դէմքի արտայայտութիւնը, այնքան երթալով կասկածս կը փարատէր : Կը տեսնէի ընդհակառակն, որ այս բանաւոր հարուածներու տակ, աղայի մշտաձիգ պարանոցը աստիճանաբար կը ձկէր եւ գլուխը խոնարհելով թուխ պ մտածմանց մէջ կը թաղուէր : Բուպէսկան լուսթենէ մը յետոյ, յանց սուրի մը պէս աչքերը սեւեռած գետնի մէկ կէտին վրայ, կարծես հոն, որպէս հայելու մէջ, զիտելու յինէր տանուտէրին կուտակած ճշմարտութիւնները, ամօթխած շեշտով մը պատասխանեց .

— Այո՛, իմ սիրելի հայ, շատ ու շատ ճիշտ են քո բոլոր նկատողութիւնները : Մենք՝ քրդերս, շատ անխելք գտնուեցանք ու չարաչար խաբուեցանք թուրքէն : Մենք եւ հայերը առջ իրարու բարեկամ դրացիներ էինք : Թուրքը մեր մէջ խտրութիւն բացաւ : Մեր հայրերը մեզմէ աւելի լաւ էին ճանչցած թուրքը : Անոնք թէեւ երբեմն հպատակած են, միացած են թուրքին, բայց միշտ առերես, այնքան որքան իրենց շահերը պահանջած են : Օրինակ՝ 77ի ռուս-թրքական պատերազմի ժամանակ թէեւ Սօֆիին, Նատոն, Պրտոն եւ ուրիշներ (Հայտարան ցեղապետներ) իրենց խմբերովը միացան թուրքին եւ անոր հետ պատերազմեցան Ռուսին դէմ, բայց երբ եկաւ այն կէտը, ուր Ռուսաց բանակը մտաւ մեր երկրի մէջ եւ ուր իրենց շահերը կը շօշափուէին, ինչպէս գիտէք, Սօֆիին, անոնց գլխաւորը, իր խմբով դնաց անձնատուր եղաւ Տէր-Ղուկասովին, Թ. գիւղին մէջ, եւ անկէ շքանշան ստացաւ : Իսկ մենք տղայական անմտութեամբ բոլորովին խաբուեցանք թուրքի փաղաքշանքէն, խոստումներէն

եւ մեզմէ մի քանիսը Պոլիս երթալով, մեզ եւ մեր ազատութիւնը ծախեցին թուրքին : Այն օրը մենք չարաչար խաբուեցանք, այն օրը գերի եւ կոյր գործիք դարձանք թուրքին : Երբ յանձն առինք այս նեղ եւ սեւ լաթերու մէջ ծրարուել, այն օրուրնէ կարծես մեր հոգիները մեր աչքերը սեւացան, եւ մենք թանձր մթութեան մը մէջ, անգիտակցաբար եւ կուրօրէն սկսանք մեր սուրբը շարժել մեր բարեկամներու եւ արիւնակից եղբայրներու դէմ : Չէ՞ք տեսներ, որ այն օրուրնէ մեր մէջ եղբայրը եղբոր, հայրը իր որդոյն, եւ փոխադարձաբար, թշնամի է դարձած : Այո՛, թուրքը թշնամաբար երկպառակութիւն ձգեց ոչ միայն մեր երկու դրացիներուս, այլ մեր գերդաստանի, մեր ընտանեաց անդամներու մէջ ալ . մասնաւորելով խօսքս այս չարիքներու մասին, զորս այն օրուրնէ մենք առաւելապէս հասուցինք ձեզ հայերուդ, անոնց բոլորն ալ թուրքի դրդամբ եւ մինչեւ անդամ ստիպմամբ կատարեցինք . ըստիպմամբ կ'ըսեմ, որովհետեւ թուրքը այնքան ալ փաղաքշանքով չի վարուել մեզի հետ : Խոստովանանք լինի եւ ոչ թէ պարծանք, մենք նորէն դժկամակեցանք կատարել թուրքի իսկական կամքը . թուրքի մեզ առաջարկն էր ոչ միայն կողոպտել զձեզ, այլ աւելի կոտորել : Օրինակ՝ Սասնոյ կոտորածի եղանակը թող մենք միայն գիտցած ըլլանք : Թուրքը մեզ տարաւ հոն, անոր համար միայն, որ կարողանայ աշխարհին ցոյց տալ, թէ մենք ենք այս ամէն չարեաց պատճառը, այդ բանը մենք այսօր դեռ նոր կը հասկնանք : Հոն՝ մեր դանդաղ շարժումէն գոհ չէին թուրքերը եւ երբ կը նկատէին որ մեզ այնքան ալ հաճելի չէր, մեր սուրը մխել մեր ծանօթ հայի սիրտը, որու հացն էինք կերած, մեր լաթերը կը հանէին մեր վերայէն իրենք կը հագնէին եւ մեր անուամբը ու իրենց մարդասպան ճարտարութեամբը իրենք կը սպաննէին . . .

«Եւ այսօր, շարունակեց աղան բարձրացնելով քիչ մը իր կախ ինկած գլուխը, որ անմիզներու արիւնը բարձրացած է Սատուծոյ «գիւլան»ի առաջ, եւ Սատուծոյ ու քրիստոնեայ թագաւորներու կողմէ մէկ երկու մարդ զըրկուած են անոնց դատը քննելու, որ յետոյ դատաստան տեսնուի, թուրքը յանցաւոր կատուի նման իր բերանը սրբած, մէկ կողմի է քաշուեր, մեզ քրդերս մատնանիչ կ'ընէ ու իր յանցանքը մեր վրայ կը բարդէ :

Բայց թուրքը, յառաջ տարաւ աղտն տխրա-
խառն քմծիծաղով մը, ու Կարուբերելով գլու-
խը, — սիրելի «քեթիխոստ» (տանուտէր),
մեզ Գրդերս յիմարի՝ կամ իբրեւ յարմար
օրինակ, պիտի բսեմ երեխայի տեղէ դրած,
մէկ ձեռքով մեր գլխուն կը զարնէ եւ միւս
ձեռքով շաքար կը թխմէ մեր բերանը, մեր
ձայնը, մեր հեկեկանքը կտրելու ու վերստին
սիրաշահելու համար: Այսպէս, մէկ կողմէն մեր
տները կը քանդէ, մեր պատիւը կը բռնաբարէ,
միւս կողմէ ալ այլազան խոստումներով հրա-
ւերագրեր կ'ուղարկէ մեզ գալ, առանձին զօ-
րանոցներու մէջ խմբուել, ու չգիտեմ ի՞նչ
հակառակ պարագայի մը, Հայերը սրէ անցը-
նել: Եւ ես այսօր, ահա՛, նոյն հրաւերագրովն
էմ եկած այստեղի կառավարութեան: Այժմ
խճիբ է թէ մենք, Գրդերու գլխաւորներս,
դառն փորձառութենէ յետոյ, պիտի շարունա-
կե՞նք խմբուել ու կոյր կամակատարներ մը-
նալ թուրքին, կամ թէ մեր կիներն իսկ պի-
տի ներքէն մեզ այսօրինակ ծայրայեղ յիմարու-
թիւն մը. այդ յետոյ պիտի տեսնուի: Առ այժմ
միայն քեզ հետ պիտի կրկնեմ, խոստովանե-
լով որ մենք Գրդերս, այո՛, խիստ անխիղճ
գտնուեցանք եւ շարաշար խաբուեցանք թուր-
քէն: Բայց անցածը անցեր է...»

Աղայի այս դառն խոստովանութենէն յե-
տոյ տիրեց երկարատեւ լռութիւն մը, որ ժա-
մանակ՝ չկրնալով երկար մնալ կծկտած տեղս,
աշտասուալից աչքով դուրս եկայ հիւրանո-
ցէն:

Այն իրողութիւնը, որ Գրդին մեզ հասու-
ցած բոլոր չարեաց թելադրողն ու հայրը
թուրքն է, այնքան յեղեղուած ու պարզուած
է մեր մէկ քանի խելամուտ աղքայիներէ ու
անաչառ օտարազգիներէ, որքան թուրքի դա-
րաւոր հայաջինջ նպատակը: Քիւրտը թուրքի
չլացուցիչ խոստումներէն եւ իր խորին տը-
գիտութենէն շարաշար խաբուած է: Այժմ,
Քիւրտերու մէջ կան շատեր որ զգացած են
իրենց սխալը եւ թերեւս պիտի ջանան զայն
դարմանել: Արդ այս փափուկ հանգամանքնե-
րու մէջէն յաջողութեամբ մեր նպատակին
հասնելու համար, հետեւելիք հանճարեղ ի՞նչ
ընթացքիւ սահմանագծեն մեզ արդեօք մեր կեն-
սական շահերը: Անտարակոյս, եթէ ժամանակի

եւ հանգամանքներու այժմեան անուրա-
նալի փոխոխման առարկութիւնը չլինէր, մեր
միակ ու նպատակայարմար ուղեցոյցը պի-
տի լինէր «ազատութեան կարապետ» անմահն
Բաֆֆիի սա ամենա. մեկին կտակը:

«Եւ իրաւ, այդ ժողովուրդը ինչո՞վ է մե-
զաւոր, որ մնացել է վայրենի, որ իր ապ-
րուտը որոնում է աւազակութեան եւ մար-
դասպանութեան մէջ. մեղաւորը մենք ենք,
որ մինչեւ այսօր չաշխատեցանք կրթել
նրանց: Մեր սեփական շահերը պահանջում
էին անել այդ: Եթէ ցանկանում ենք ազատ
մնալ գաղանների կատաղութիւնից, պէտք է
աշխատինք ընտանեցնել, պէտք է աշխա-
տինք նրանց վարժեցնել աւելի խաղաղ եւ
աւելի քաղաքակրթուած կեանքի: Թուր-
քիան հոգ չէ տանում Գրդերի կրթութեան
մասին, եւ այդ շատ հասկանալի է, որովհե-
տեւ քրդի վայրենութիւնը աւելի նպաստա-
ւոր է նրան: Բայց մենք պէտք է հոգ տանինք,
որովհետեւ վնասը մեզ է հասնում:»

(ԽԵՆԹԸ, էջ 218)

ԼՈՇՏԱԿ

Բ ա Ր Ի Վ

«Լոշտակ»ի ուսումնասիրութիւնը, որ այս
թիւով կաւարտի, շեշտեց ու տարածեց սա
գաղափարը թէ Հայուն բուն թշնամին, բուն
դահիճը Քիւրտը չէ, ինչպէս կը կարծենք
ընդհանրապէս, այլ թուրքը, կամ աւելի ճիշդ
թուրք բնօրինը: «Լոշտակ»ին հետ ես ալ կը մը-
տածեմ, որ եթէ այդ գաղափարը մեր գոր-
ծիչներու մտքին մէջ առաջին օրէն արմատա-
ցած ըլլար, Քիւրտերը վերջին կոտորածնե-
րուն մէջ թերեւս այնքան փութկոտ աջակ-
ցութիւն մը չէին շնորհեր Սուլթանին հայա-
ջինջ ծրագրին գործադրութեանը: Անշուշտ,
ներելի չէ կարծել, ինչպէս Ապտիւրրահ-
ման պէյ Պէտիբեկան ըրաւ, թէ Սուլթան
Համիտէն առաջ Քիւրտերն ու Հայերը ան-
վերջով ու անխառն եղբայրութեամբ
կ'ապրէին իրարու հետ: Քիւրտերը, իրենց ա-
ւազակային բարքերով, միշտ պատուհաս մը
եղած են Հայոց գլխուն, եւ Հայաստանի Հայը
Քիւրտն ալ թուրքին չափ, երբեմն թուրքէն

աւելի՛ իրեն դահիճը նկատած է . բայց սա ճիշդ է որ բոլոր Քիւրտերը չեն որ կատարած են այդ կեղեքիչի դերը , Քիւրտերուն մէջ կայ մաս մը որ իրօք դրացիի ու բարեկամի պէս վարուած է միշտ Հայուն հետ . իսկ կեղեքող Քիւրտերը Հայուն դէմ ցեղական ու սիստեմական ատելութենէ մը մղուած չէ որ այդ ընթացքն ունեցած են , այլ իրենց տգէտ ու վայրենի եւ աւաղակութեամբ ապրող ժողովրդի գործը կատարած են , կողոպտելով Հայը , ինչպէս թուրքը , ինչպէս եւ խաղաղակեաց Քիւրտը : Տաճիկն է որ ջանացած է Քիւրտերուն այդ աւաղակի ընթացքը ցեղական ատելութեան փոխել . եւ մենք անդիտակցաբար օգնած ենք իրեն՝ այդ ծրագրին մէջ . Պերլինի դաշնագրին Յարդ յօդուածը բարենորոգումներ կ'առաջարկէ Հայերը պաշտպանելու համար , ոչ թէ թուրք բռնապետութեան դէմ , այլ «Քիւրտերուն եւ Չերքեզներուն» դէմ . Սուլթանը այդ յօդուածը ցոյց տալով քիւրտ շեխերուն , զանոնք յաջողած է համոզել թէ Հայերը քիւրտերուն դէմ կը քրգոնեն Եւրոպան . քիւրտը ջնջել կ'ուզեն : Հայոց կարգ մը հրատարակութիւնները , արարքները՝ այդ համոզումը յեշտելու նպատած են քիւրտերուն մէջ . եւ Սուլթանը դժուարութիւն չէ ունեցած Համիտիէ գունդերը կազմելու :

Գծի ջարդերէն յետոյ , կարգ մը դէպքեր ցոյց տուին թէ քիւրտերը , մասամբ , սկսած են իրենց սխալն զգալ . ջարդերուն ատենն իսկ , շատ տեղ քիւրտերը դժկամակամ էին Հայերը սպաննելու , նախընտրած էին կողոպուտով բաւականանալ , եւ յանդիմուանած էին թուրք պաշտօնեաներէն որ ջարդը կը նախընտրէին : Պետրիխան պէյի որդին , Ապտիւրրահման պէյ , իր «քիւրտիստան» թերթին մէջ ջանաց , եւ կը ջանայ միշտ , այդ սխալէն ետ կեցնել վերջնապէս իր ցեղակիցները եւ զանոնք համոզել որ ըմբռնեն թէ բաղդակից եւ շահակից են Հայուն , ու իրենց միակ թշնամին թուրք բռնապետութիւնն է : Հայոց մէջ ալ թագթիքի փոփոխութիւն մը սկսած է ատենէ մը ի վեր քիւրտերուն նկատմամբ . «Ռոջակը կը յայտարարէր վերջերս թէ Դաշնակցութիւնը ինչն իսկ յանձն ստած է քիւրտիստանի

մէջ ցրուել Ապտիւրրահմանի վերջին կոչը քիւրտերուն ուղղեալ . կը մաղթենք որ լուրջ ձեռնարկներ փորձուին՝ քիւրտ շեխերը այս դաղափարներուն բերելու համար : Բացուած խրամատը գոցել շատ դժուար է բնականաբար . քիւրտը կրօնքի կապն ունի , — թէեւ բաւական թոյլ — Տաճիկն հետ , ու Սուլթանը զանոնք իրեն կապելու համար դրամին ուժն ունի , մեծագոյն ուժը , եւ յետոյ ուժը այն հրապուրիչ արտօնութեան զոր անոնց կը տայ Հայերը կողոպտելու . քիւրտերը , տգէտ , բարբարոս , մեծամասնութեամբ՝ քաղաքական հեռատեսութենէ , ազգայնական ձգտումներէ զուրկ , անշուշտ պիտի շարունակեն դեռ ատեն մը Սուլթանին շնորհած այդ նիւթական շօշափելի եւ անմիջական առաւելութիւնները նախընտրել Հայոց հետ դաշնակցութեան մը դաղափարական օգուտէն : Իսկ Հայուն համար շատ դժուար պիտի ըլլայ մոռնալ քիւրտէն կըրած վայրենի , հրէշային չարիքները : Բայց «տեսութիւնը» ճիշդ է , եւ մեր շահը կը պահանջէ անոր իրականացումը փութացնելու համար շարունակել մեր ջանքերը : Պէտք է որ քիւրտերը դադրին Սուլթանին հայաջինջ ծրագրին գործիքը մնալէ , պէտք է որ անոնք սղագայնական զգացում մը սկսին ունենալ եւ ատով թուրք բեթիմին դէմ դարձնեն իրենց զէնքը եւ Հայուն դաշնակցին : Մենք չենք կրնար մոռնալ քիւրտէն կրած չարիքնիս , բայց բաղդատելով թուրք կառավարութեան գիտակից , ծրագրուած ոճիրին հետ՝ քիւրտին անգիտակից , աւաղակային յարձակումը , մեր ատելութիւնը քիւրտին վրայէն պէտք է ստնի եւ թուրք բեթիմին դէմ կեդրոնանայ :

Իր վրայ յարձակող քիւրտին դանակին Հայը դանակով պէտք է պատասխանէ , բայց հայ «վարիչը» պէտք է բաղմապատկէ իր ջանքերը որպէսզի հայ ու քիւրտ դանակները միանան հասարակաց թշնամիին , թուրք բռնապետական բեթիմին դէմ :

«Թուրք բեթիմ»ին կ'ըսեմ , եւ ոչ թէ թուրք ցեղին , որովհետեւ որքան ալ այդ ցեղը նոյնանայ իր ստեղծած վայրագ ու կործանիչ բեթիմին հետ , մենք միշտ պէտք է քաղաքակիրթ ու քրիստոնեայ (բառին բարձրագոյն նը-

շանակութեամբ) ժողովրդի լայն հայեցողութեամբը ջանանք զանազանել կառավարութեանը ջանանք ժողովուրդներէն . մենք Հայերս Փոքր-Ասիոյ մահմետական ու քրիստոնեայ բոլոր ցեղերուն առաջնորդն ըլլալ կոչուած ենք զէպի եւրոպական քաղաքակրթութիւնը, եւ այդ ազնիւ դերը արդէն կատարած ենք մասամբ . Փոքր-Ասիան մահացնող ընդհանուր փտումին մէջ , Հայերն են որ բողոքի առաջին ձայնը բարձրացուցին , եւ իրենց բողոքը , ինչպէս եւ անոր հետեւանքով իրենց վրայ խուժած աղէտքը , որ ամբողջ քաղաքակրթութեանը ցնցեց եւ Տաճկաստանի ներքին տարրալուծումը վերջնապէս ապացուցանող մեծագոյն սատարը եղաւ , Արեւելքի վերակենդանացման , եւրոպացման գլխաւոր շարժառիթը կացուցած պիտի ըլլայ . ատի Հայուն փառքը պիտի կազմէ . եւ այդ բարձր հայեցակետէն պէտք է միշտ նկատենք իրերը , եւ մեր բռնելիք ընթացքը . ինչ նախճիրներ ալ գործած ըլլան քիւրտն եւ թուրքը մեզի նկատմամբ , անոնք մեր երախտաւորեալները պիտի դառնան , որովհետեւ մեր արիւնն է որ պիտի ըլլայ այդ բոլոր ժողովուրդներուն անխուսափելի վերանորոյման , այդ բոլոր երկիրներուն ճակատագրական կերպարանափոխութեան հիմնական պատճառը : Եւ մենք որ մեզի նպատակ ունինք , ոչ թէ՛ տգէտ քիւրտի կամ մոլեռանդ թուրքի մը պէս՝ կործանել , ջարդել , այլ մեզ պաշտպանել աւերիչներուն զէմ , եւ աւերումի դրութեան տեղ հաստատել ազատութեան եւ կեանքի գրութիւնը՝ որմէ պիտի օգտուին մեր երկրին բոլոր ժողովուրդները , մենք պէտք չէ որ մասնաւորներ մեր ատելութիւնը ցեղերու զէմ , այլ պէտք է զայն խտացնենք կառավարական զգուշելի սխառմի մը զէմ , եւ մեր ջանքերը ուղղենք զայն տապալելու : Այս ուղղութեան մէջ , շատ աւելի

պարտք ունինք ամբանալու այժմ . Երբ կը տեսնենք քիւրտերէն իսկ ձայներու բարձրացումը Սուլթանական բեթիմին դէմ սիւացման հրաւիրող , եւ երբ կը տեսնենք Իսմայիլ Քէմալ մը որ Երիտասարդ-թուրքերը կը յաջողի մղել վերջապէս Հայերուն միանալու՝ ՅԱՐԳ յօգուածին գործադրութիւնը եւրոպայէն պահանջելու համար :

Այս բոլորը կ'ապացուցանեն թէ հայը , որ նիւթապէս անհղօրէն տուժեց այս վերջին արիւնոտ շրջանին մէջ , բարոյապէս անհունորէն շահած է . քիւրտը եւ թուրքը հայուն դատին կը կապեն հիմա իրենց դատը : Առանց չափազանցելու այդ երեւոյթներուն կարեւորութիւնը , բայց եւ առանց անտեսելու անոնց նշանակութիւնը , զգուշաւոր ուշադրութեամբ մը պէտք է հետեւինք անոնց , եւ քաղնք անոնցմէ դասը վոր կը պարունակեն : Այսպէս կամ այնպէս , Արեւելքը սահմանուած է իր արգի գարշահոտ մեռելութենէն վերածնելու . արեւելքական շահը այդպէս կը պահանջէ . ու ինչպէս որ ալ լուծուի գորտեան հանգոյցը , Փոքր-Ասիոյ ժողովուրդները , մահմետական ու քրիստոնեայ , բոլորն ալ , երբ մահուան շրջանին յաջորդէ կեանքի շրջանը , յիշատակարան մը պիտի կանգնեն ու վերտառութեամբ՝ «վերածնած Արեւելքը , երախտաղէտ՝ հայերուն որ նահատակուեցան հանրային բարիքին համար :

2 .



ԴԱՏՐ ՅԵՏԱԶԳՈՒԱՄ

Դատը որ Աւահիտի տօրեկը բացած է պ. Բարսեղեանի դէմ , յետագուեցաւ յունուար 17ին :

Le Gérant : Georges Noblet.

բունարարուելը տեսնելով : Գուպալի , Փիլիպպեանց , Թրանսլալի պատերազմները , Հայաստանի
և Զինատանի ջարդերը , Ֆինլանտայի սահմանադրութեան քայքայումը , Տրէյֆլուսի խնդիրը
այդ մտածման միութեանը երեւան բերին ամէն երկրի մարդոց միջեւ : Եւրոպական հանրային
կարծիք մը կազմուեցաւ : Այդ մարդիկը , ամբողջ քաղաքակիրթ աշխարհին մէջ տարադնած , կը
կազմեն՝ կարելի է ըսել՝ արդարութեան եւ մարդկայնութեան կուսակցութիւնը :

Ժողովուրդներու միջեւ շահերու կապակցութիւնը այնքան ակներեւէ՝ որ կառավարու-
թիւններն իսկ անոր առջեւ ստիպուեցան խոնարհիլ : Արդէն պաշտօնավարել սկսան Եւրոպայի
մէջ մէկ քանի միջազգային հաստատութիւններ , որոնք պաշտօնական օրկաններ են այդ եւ-
րոպական համերաշխութեան եւ թերեւս սերմերը քաղաքակիրթ ժողովուրդներու խաղաղական
դաշնակցութեան :

Եւրոպական հանրային կարծիքը նոր պէտքեր ստեղծեց , Եւրոպական հասարակութեան
համար հարկաւոր է լրագիր մը ուր կարելի ըլլայ անկեղծ տեղեկութիւններ գտնել այլազան
երկիրներու հանրային կեանքին վրայ : Եւրոպական կարծիքին համար հարկաւոր է օրկան մը
որ իրաւունքի եւ ազատութեան դատը պաշտպանէ :

ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ (Եւրոպացիներ) այդ օրկանը կ'ուզէ ըլլալ :

ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ ոչ մէկ երկրի ոչ մէկ որոշ կուսակցութեանը չի պատկանիր : Ամենայն ան-
կախութեամբ պիտի դատէ կառավարութիւններու արարքներն ու կուսակցութիւններու դիր-
քը : Եւր անոնք իրմէ հաւանութիւն գտնեն , առի չի նշանակեր որ անոնց քաղաքականու-
թեանը ինքզինքն ի սպաս է դրած : Եթէ անոնց ղէմ կուռի , սխտեմական թշնամութենէ մը
մղուած չէ որ այդպէս վարուած պիտի ըլլայ : Ուրիշ յայտագիր չունի բայց եթէ լիակատար եւ
անկողմնակալ ըլլալ :

Նմանապէս , անկողմնակալ պիտի մնայ տնտեսական ու ընկերական պայքարներու մէջ .
առանց երբեք մոռնալու թէ պէտք է փոխադարձ համակրութիւն եւ վստահութիւն հաստատու-
նալ անհատներու եւ դատակարգերու , ինչպէս ազգերու միջեւ :

Միջազգային քաղաքականութեան մէջ , ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ պիտի պաշտպանէ այն սկզբունքը թէ
իրաւունքը դերակցիւն է քան ուժը : Պիտի յարգէ ամէն ազգայնութեանց իրաւունքն ու աւան-
դութիւնները , ինչ ալ ըլլան իրենց թիւի կարեւորութիւնը եւ իրենց զօրութիւնը , յարգանքը
հիմն իսկ է այն միջազգայնութեան զոր կը դաւանի : Ամէն ազգէ մեծանուն մարդիկ հաճած
են անոր բերել իրենց ազգեցիկ աջակցութիւնը եւ անոր հեղինակութիւնը ապահովել :

ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ կը բազմայ ազատութիւն , արդարութիւն , խաղաղութիւն : Կը չափազանցուի այն
բոլոր բարենորոգումներով որոնք կը ձգտին ապահովել ամենուն , անհատներու եւ ազգերու ,
հանգստութիւնը , ու Եւրոպայի մէջ հաստատել այն խաղաղական ներդաշնակութիւնը որ տ-
մենուն պիտի թոյլ տայ դիտութեան կատարած յառաջադիմութիւններէն օգտուիլ :

ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ կը ցանկայ ինքզինքն ի սպաս դնել այն ընկերութիւններուն որոնք , ինչպէս
Ֆրանսայիներն ու Պելճիքայիները , կազմակերպուած են մարդկային եւ քաղաքացիական ի-
րաւանք պաշտպանութեան եւ ազգերու միջեւ խաղաղութեան հաստատման համար , պիտի ուզէր
նաեւ օրկանն ըլլալ արդէն ստեղծուած միջազգային հաստատութիւններուն :

Շատերը անոնցմէ որոնց կ'ուզուի ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ , միմիայն քաղաքական մտահոգութիւններ
բով տողորուած մարդիկ չեն : Գիտուններ , գրագէտներ եւ արուեստագէտներ են . զանոնք գոհա-
ցընելու համար , ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ գրական , գեղարուեստական յօդուածներ պիտի հրատարակէ :

ԷՕՐՈՒՅԷԷՆԵՐ բոլոր աշխատակիցները իրենց բացարձակ անկախութիւնը կը պահեն , եւ
որովհետեւ ամենէն այլազան կուսակցութեանց կը վերաբերին , անձնապէս պատասխանատու
են այն գաղափարներուն զոր կ'արտայայտեն իրենց ստորագրութեան տակ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Վստահ ենք որ այս շահեկան թերթը պիտի ունենայ բազմաթիւ հայ ընթերցողներ : Բա ժ
նեգինն է , տարեկան , 12 ֆրանք՝ Ֆրանսայի համար , 15 ֆրանք՝ օտար երկիրներու համար :
Հասցէ 24 Rue Dauphine Paris :

«ԱՆՍՆՆՏ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտը կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) ,
 Չտուար (Ամերիկա) , 5 բուլլի (Ռուսիա , վեցամսեայ՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիր-
 ներ) , 1 տուար (Ամերիկա) , 3 բուլլի Ռուսիա :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՆԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր :
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յոգուած եւ բաժանորդագրին ղրկել հետեւեալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՍՆՆՏ»-Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս	Պարոն	Գէորգ Մելիք-Կարապետեան
Պաքու . —	»	Ս. Մ. Մոցիկեան
Կահիրէ —	»	Ա. Ա. Թորգոմեան
Ռուսճուք . —	»	Նշան Ս . Թորոսեան
Ֆիլիպ . —	»	Ա. Տեմիրճիպաչեան
Պուքրէշ . —	»	Արիւ Լազար
Դաւրէժ . —	»	Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Շորք . —	»	Կատարեան
Բրովիտէնս . —	»	Նաղարէթ Թաթէոսեան
Ֆրեզնօ . —	»	Աւագ Կարապետեան
Իսթ Ուոթըրթաուն .	»	Մանուկ Գալստեան
Ուսթըր . —	»	Երուանդ Յակոբեան
Չիքակօ . —	»	Ա. Կարակալուրեան
Պոսթոն . —	»	Կ. Յ Գարակիւլեան